Աշխատանքների իրականացմանն անհրաժեշտ արբանյակային նկարները տրամադրվել է ծրագրի կողմից: Օգտագործվել են Pleiades 1A արբանյակից ստացված 0.5մ լուծաչափության պանխրոմատիկ և 2մ լուծաչափության բազմասպեկտրալ նկարներ, ինչպես նաև ArcGIS Basemap WorldImagery առցանց բաց աղբյուրի արբանյակային նկարները (աղյուսակ 5):

**Աղյուսակ 5. Արբանյակային պատկերների տեսակը և պատկերներով ապահովված մակերեսը**

№	Անտառապետության անվանումը	Արբանյակային պատկերի տեսակը և լուծաչափությունը	Պատկերներով ապահովված մակերեսը, հա
1	Ախքյորփիի	<ul style="list-style-type: none"> <li>Pleiades 1A (0.5 մ լուծաչափության պանխրոմատիկ և 2 մ լուծաչափության բազմասպեկտրալ)</li> <li>ArcGIS Basemap WorldImagery, 1 մ լուծաչափության (առցանց բաց աղբյուր)</li> </ul>	4100հա ամբողջ մակերեսը
2	Խոժոռնու	<ul style="list-style-type: none"> <li>Pleiades 1A (0.5 մ լուծաչափության պանխրոմատիկ և 2 մ լուծաչափության բազմասպեկտրալ)</li> <li>ArcGIS Basemap WorldImagery, 1 մ լուծաչափության (առցանց բաց աղբյուր)</li> </ul>	2800հա ամբողջ մակերեսը
3	Բրդաձորի	<ul style="list-style-type: none"> <li>Pleiades 1A (0.5 մ լուծաչափության պանխրոմատիկ և 2 մ լուծաչափության բազմասպեկտրալ)</li> <li>ArcGIS Basemap WorldImagery, 1 մ լուծաչափության (առցանց բաց աղբյուր)</li> </ul>	3000հա ամբողջ մակերեսը
4	Ճոճկանի	<ul style="list-style-type: none"> <li>Pleiades 1A (0.5 մ լուծաչափության պանխրոմատիկ և 2 մ լուծաչափության բազմասպեկտրալ)</li> <li>ArcGIS Basemap WorldImagery, 1 մ լուծաչափության (առցանց բաց աղբյուր)</li> </ul>	4292հա ամբողջ մակերեսը
5	Շամլուղի	<ul style="list-style-type: none"> <li>ArcGIS Basemap WorldImagery, 1 մ լուծաչափության (առցանց բաց աղբյուր)</li> </ul>	ամբողջ մակերեսը

## 2.7. Քառակուսիների տեղաբաշխման սխեմա

Անտառտնտեսության տարածքի բաժանումը քառակուսիների կատարվել է հաշվի առնելով տեղանքի աշխարհագրական տարրերը՝ գետեր, ճանապարհներ և այլ գործոններ, ընդ որում նախորդ գույքագրման քառակուսային ցանցը հիմնականում պահպանվել է: Անտառտնտեսության տարածքը բաժանվել է 98 քառակուսիների, ամենափոքր քառակուսու մակերեսը 75հա է՝ Շամլուղի անտառապետություն, իսկ ամենամեծը՝ 403հա, նույնպես Շամլուղի անտառապետությունում, միջին մակերեսը՝ 199հա: Անտառի գնահատման հատվածների ընդհանուր քանակությունը 4670 է, հատվածների միջին մակերեսը՝ 4,2հա: Նախորդ կառավարման պլանի համեմատ՝ հատվածների ընդհանուր թիվն ավելացել է 846-ով, ընդ որում Շամլուղի անտառապետության հատվածների քանակը 946 է (աղյուսակ 6):

**Աղյուսակ 6. Անտառտնտեսության կազմակերպման հիմնական տարրերը**

Անտառայտության միավորներ	Մակերեսը, հա		Քառակուսիների քանակը		Քառակուսու մակերեսը, հա						Հատվածի քանակը		Հատվածի միջին մակերեսը	
					Առավ.		Նվազ.		Միջին					
	2008	2020	2008	2020	2008	2020	2008	2020	2008	2020	2008	2020	2008	2020
Ալյքյորփի	4349	4073	23	21	258	266	115	120	189,1	194	1010	885	4,3	4,6
Խոժոռնի	3691	3685	22	22	257	255	120	121	167,8	168	983	900	3,8	4,1
Բերդաձորի	2935	2925	15	15	325	326	129	131	195,7	195	560	554	5,2	5,3
Ճոճկանի	4318	4380	22	20	308	319	36	149	196,3	219	1400	1385	3,1	3,2
Շամլուղի	-	4391	-	20	-	403	-	75	-	220	-	946	-	4,6
<b>Ընդամենը</b>	<b>15293</b>	<b>19454</b>	<b>100</b>	<b>98</b>	<b>325</b>	<b>403</b>	<b>36</b>	<b>75</b>	<b>187</b>	<b>199</b>	<b>3824</b>	<b>4670</b>	<b>3,9</b>	<b>4,2</b>

**2.8. Կոլեկտիվ ուսուցում**

Համաձայն Հայաստանի անտառներում անտառշինության և անտառկառավարման պլանների պատրաստման հրահանգի, դաշտային գույքագրումից առաջ կազմակերպվել է անտառի գույքագրման և քարտեզագրման գործնական կամ կոլեկտիվ ուսուցում:

Կոլեկտիվ ուսուցումն իրականացվել է նախօրոք ընտրված ծառուտներում, որի նպատակը գույքագրող հիմնական և տեխնիկական անձնակազմին նախապատրաստելն ու անտառի գնահատում իրականացնելն է կոնկրետ գույքագրման տարածքի պայմաններում պահանջվող ճշտությամբ, յուրաքանչյուր կատարողի մասնագիտական մակարդակի և անտառի գնահատմանը նրա մասնակցության որոշումը և ճիշտ անտառտնտեսական միջոցառումներ նախագծելու հմտություն ուսուցանելը:

Կոլեկտիվ ուսուցումներին մասնակցել են ծրագրի հիմնական և տեխնիկական անձնակազմը, նույն թվում անտառտնտեսության համապատասխան մասնագետները:

Կոլեկտիվ ուսուցումը ներառել է՝

ա) անտառգույքագրման չափումների կատարման հրահանգավորում, շրջանաձև ռելասկոպիկ և հաշվարկային հրապարակներով վարժանքներ, չափագրումների տվյալների օգտագործում՝ ինքնաստուգման համար,

բ) ծանոթացում անտառաճման պայմանների և անտառային տիպերի հետ, նրանց փոխկապակցվածությանը ծառուտների տեսակային կազմի, բոնիտետային դասերի և ծառուտների գնահատման այլ ցուցանիշների հետ,

դ) ծանոթացում ծառուտների, առանձին ծառերի վնասատուներով և հիվանդություններով վարակվածության նշանների հետ,

ե) ծանոթացում ծառուտների և այլ հողային կատեգորիաների արբանյակային նկարների վերծանմանը, գնահատման հատվածների սահմանների ճշտման և հատվածի ընդհանուր գնահատման բնութագրի գործնական ցուցադրում,

զ) տեղեկացում դաշտային տեխնիկական փաստաթղթերի ձևակերպման և դրանց լրացման պահանջների մասին:

## **2.9. Անտառկառավարման պլանավորման մասնակցային մոտեցում**

Անտառկառավարման պլանավորման մասնակցային մոտեցման հիմնական նպատակը շահագրգիռ խմբերին հնարավորության ընձեռնումն է աջակցելու անտառկառավարման պլանավորման պրոցեսին: Տեղաբնակները կարող են օժանդակել տվյալների հավաքագրմանը, պաշարների վիճակի վերաբերյալ պատմական տվյալների և տեղային կարիքների ու պաշարների օգտագործման ավանդույթների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրմանը:

Մասնակցային մոտեցումն անկասկած կբարձրացնի տեղաբնակների հետաքրքրությունն անտառների պահպանության և պաշարների արդյունավետ օգտագործման գործընթացներում: Ռեսուրսների մասնակցային պլանավորման և կառավարման մեջ ընդհանուր պրոբլեմները որոշվում են համագործակցության միջոցով: Մասնակցային կառավարում նախ և առաջ նշանակում է համագործակցություն կազմակերպության ներսում և պլանավորողների, հասարակության ու հետաքրքրվող կողմերի միջև: Մասնակցային պլանավորման պրոցեսի արդյունավետությունը երաշխավորված է համապատասխան ուսուցման դեպքում:

Ծրագրի շրջանակներում հանդիպումներ են իրականացվել անտառտնտեսության աշխատակիցների և շրջակա համայնքների բնակիչների հետ, քննարկվել են կառավարման պլանի հիմնական դրույթները, անտառային քարտեզները համադրվել են համանքների կադաստրային քարտեզների հետ, վերհանվել և ճշտվել են առկա անհամապատասխանությունները:



### Բաժին 3. Անտառային հողերի բնութագիրը

#### 3.1. Անտառտնտեսության ընդհանուր տարածքի բաժանումն ըստ հիմնական նպատակային նշանակության և հողատեսքերի

Արտադրական նշանակության ընդհանուր հողատեսքերը զբաղեցնում են 3306,5հա, ամբողջությամբ անտառածածկ:

Պաշտպանական նշանակության հողատեսքերի ընդհանուր մակերեսը զբաղեցնում է ամբողջ տարածքի 62,1%-ը (12082հա), այդ թվում անտառածածկը՝ 10319,9հա է (85,4%), որից անտառմշակույթները՝ 125,7հա, չմիակցված աղարթով անտառմշակույթները՝ ընդամենը 4,7հա: Հրդեհված, հատված և չվերականգնված անտառային տարածքները զբաղեցնում են՝ 152,3հա, անտառային բացատները և բաց (պարապուտ) տարածքները՝ 285,1հա, նոսրուտները՝ 822,4հա: Ոչ անտառային հողերը զբաղեցնում են 442,5հա:

Հատուկ նշանակության հողատեսքերը զբաղեցնում են 4065,5հա (20,9%), այդ թվում անտառածածկ մակերեսը՝ 3784,7հա, որից անտառմշակույթները՝ 139,8հա: Հրդեհված, հատված և չվերականգնված անտառային տարածքները զբաղեցնում են 99,2հա, անտառային բացատները և պարապուտ տարածքները՝ 111,8հա: Ոչ անտառային հողերը զբաղեցնում են 23 հա:

Անտառտնտեսության ընդհանուր հողատեսքերում անտառածածկ մակերեսը 17408,2հա է: Ոչ անտառային հողերի մակերեսը զբաղեցնում է 465,5հա (աղյուսակ 7, քարտեզ 7):

#### Աղյուսակ 7. Ջիլիզայի անտառտնտեսության հողատեսքերի բաշխվածությունն ըստ հիմնական նպատակային նշանակության կատեգորիաների

№	Հողատեսք	Կատեգորիա	Մակերեսը, հա
1	Ընդհանուր մակերեսը	Արտադրական	3306,5
		Պաշտպանական	12082,0
		Հատուկ նշանակության	4065,5
		Ընդամենը	19454,0
2	Անտառային հողեր	Արտադրական	3306,5
		Պաշտպանական	11562,8
		Հատուկ նշանակության	4119,2
		Ընդամենը	18988,5
3	Անտառածածկ մակերեսը	Արտադրական	3303,6
		Պաշտպանական	10319,9
		Հատուկ նշանակության	3784,7
		Ընդամենը	17408,2
3.1	Այդ թվում անտառմշակույթներ	Արտադրական	46,2
		Պաշտպանական	125,7
		Հատուկ նշանակության	139,8
		Ընդամենը	311,7
4	Չմիակցված անտառմշակույթներ	Արտադրական	4,3
		Պաշտպանական	4,7

№	Հողատեսք	Կատեգորիա	Մակերեսը, հա
		Ընդամենը	9,0
5	Ոչ անտառածածկ	Պաշտպանական	1259,8
		Հատուկ նշանակության	311,5
		Ընդամենը	1571,3
5.1	Հրդեհված, հատված և չվերականգնված	Պաշտպանական	152,3
		Հատուկ նշանակության	99,2
		Ընդամենը	251,5
5.2	Բացատներ և պարապուտ տարածքներ	Պաշտպանական	285,1
		Հատուկ նշանակության	111,8
		Ընդամենը	396,9
5.3	Նոսրուտներ	Պաշտպանական	822,4
		Հատուկ նշանակության	100,5
		Ընդամենը	922,9
6	Ոչ անտառային	Պաշտպանական	442,5
		Հատուկ նշանակության	23,0
		Ընդամենը	465,5

### 3.2. Անտառային հողերի և փոփոխությունն ըստ հողատեսքերի

2020թ անտառոտնտեսության մակերեսի ավելացումը 2008-ի համեմատությամբ 4161,0 հեկտարով (որից 4022,3հա-ը անտառային հողեր) բացատրվում է համայնքների վարչական սահմաններում անտառային հողատեսքերի, նախկինում անտառային հողերի ընդգրկման, մակերեսները երկրատեղեկատվական համակարգով ճշտման և Լալվարի անտառոտնտեսության Շամլուղի անտառպետության Զիլիզայի անտառոտնտեսության կազմում ընդգրկելու հանգամանքներով (աղյուսակ 8, 9):

### Աղյուսակ 8. Անտառոտնտեսության անտառային հողերի հողատեսքերի փոփոխությունը

№	Հողատեսքը	1989		2008		2020		Տարբերությունը
		Հա	%	Հա	%	Հա	%	
1.	Ընդհանուր	14546	100	15293,0	100	19454,0	100	+4161,0
2.	Անտառային հողեր, ընդամենը	13519	92,9	14966,2	97,8	18988,5	97,6	+4022,3
2.1.	Անտառածածկ, ընդամենը	12530		13851,1		17408,2		+3557,1
2.1.1.	Այդ թվում անտառմշակույթներ	150,9		179,1		311,7		+132,6
2.2.	Զմիակցված սաղարթով անտառմշակույթներ	151		1,5		9,0		+7,5
2.3.	Ոչ անտառածածկ, ընդամենն, այդ թվում	838		1113,6		1571,3		+457,7
2.3.1	Նոսրուտներ	377		361,9		922,9		+572,0
2.3.	Հրդեհված, հատված և չվերականգնված տարածքներ	-		39,3		251,5		+212,2
2.3.3	Բացատներ և պարապուտ տարածքներ	461		712,4		396,9		-315,5
3.	Ոչ անտառային հողեր	1027	7,1	326,8	2,2	465,5	2,4	+138,7

**Աղյուսակ 9. Ջիլիգայի անտառտնտեսության հողատեսքերի բաշխվածությունն ըստ անտառպետությունների**

№	Հողատեսքը	Այլընտրանքի	Խոժոռնի	Բերդաձորի	Ճոճկանի	Շամլուղի	Ընդամենը
1.	Ընդհանուր	4073,0	3685,0	2925,0	4380,0	4391,0	19454,0
2.	Անտառային հողեր, ընդամենը	4026,2	3682,2	2905,6	4206,1	4168,4	18988,5
2.1.	Անտառաձածկ, ընդամենը	3776,2	3485,6	2706,5	3717,7	3722,2	17408,2
2.1.1.	Այդ թվում անտառմշակույթներ	35,9	17,3	126,7	37,2	94,6	311,7
2.2.	Չմիակցված սաղարթով անտառմշակույթներ	-	-	-	3,8	5,2	9,0
2.3.	Անտառային տնկարան	-	-	-	-	-	
2.4.	Ոչ անտառաձածկ, ընդամենը, այդ թվում	250,0	196,6	199,1	484,6	441,0	1571,3
2.4.1	Նոսրուտներ	40,9	26,8	129,3	339,4	386,5	922,9
2.4.2	Հրդեհված, հատված և չվերականգնված տարածքներ	67,3	109,9	33,3	29,0	12,0	251,5
2.4.3	Բացատներ և պարապուտ տարածքներ	141,8	59,9	36,5	116,2	42,5	396,9
3.	Ոչ անտառային հողեր	50,7	10,8	21,7	159,9	219,9	465,5

**3.3. Անտառաձածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունը ըստ անտառակազմող ծառաթփատեսակների**

Անտառտնտեսությունում հիմնական անտառակազմող տեսակներն են արևելյան հաճարին, որի գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 6930,3հա՝ 1128740,0խտմ<sup>3</sup> ընդհանուր պաշարով, կամ անտառաձածկ մակերեսի 39,8%-ը և ընդհանուր պաշարի 51,8%-ը, ընդ որում 2008թ. համեմատությամբ մակերեսը ավելացել է 556,7 հեկտարով, իսկ ընդհանուր պաշարը նվազել է 45830խտմ<sup>3</sup>-ով, բոխու գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 4030հա, ընդհանուր պաշարը 479290խտմ<sup>3</sup> (անտառաձածկի 23,1%-ը և պաշարի 22%-ը), կաղնուտները՝ 3764հա, 462040խտմ<sup>3</sup> (անտառաձածկ տարածքի 21,6%-ը և պաշարի 21,2%-ը), դաժուտները՝ 1855,8հա, 69350,0խտմ<sup>3</sup> պաշարով (10,7% և 3,2%) և մնացած տեսակները միասին կազմում են անտառաձածկի 4,8%-ը և ընդհանուր պաշարի 1,8%-ը (աղյուսակ 10, քարտեզ 8):

**Աղյուսակ 10. Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ անտառակազմող ծառատեսակների**

№	Գերակշռող ծառատեսակը	2008թ. առանց Շամլուղի անտառպետության		2020	
		մակերեսը, հա	պաշարը, մ <sup>3</sup>	մակերեսը, հա	պաշար, մ <sup>3</sup>
1	Սոճի	39,1	4440	49,3	7490
2	Կաղնի	1767,5	197160	3764,0	462040
3	Հաճարի	6373,6	1174570	6930,3	1128740
4	Բոխի	3566,6	455310	4030,0	479290
5	Հացի	102,9	8950	145,3	12190
6	Ընկուզենի	109,0	6240	183,8	13440
7	Թխկի	22,8	1680	22,9	1630
8	Թեղի	7,0	560	19,3	2080
9	Շագանակենի	3,7	140	4,8	290
10	Սպիտակ ակացիա	4,1	150	48,9	1630
11	Ղաժի	1587,9	57080	1855,8	69350
12	Լորենի	13,2	2030	10,7	1120
13	Փռչնի	38,4	1280	120,2	4450
14	Կաղամախի	0,3	10	–	-
15	Տանձենի	2,0	160	1,1	80
16	Խնձորենի	1,3	40	5,0	140
17	Թթենի	0,8	100	–	-
18	Ուռի	14,5	510	3,9	190
19	Թփեր	196,4	2220	212,9	2440
<b>Ընդամենը</b>		13851,1	1912630	17408,2	2186590

**3.4. Անտառածածկ տարածքի և պաշարի բաշխվածությունը ըստ ծովի մակերևույթից բարձրության**

Անտառտնտեսությունում անտառները տեղաբաշխված են ծովի մակերևույթից 600-2000մ բարձրությունների վրա, ընդ որում մինչև 800մ բարձրության վրա գտնվում է 1608,8 հա մակերես, 86710մ<sup>3</sup> ընդհանուր պաշարով (ընդհանուր անտառածածկ տարածքի 9,3% և պաշարի 4,0%), 801–1200մ բարձրության վրա գտնվում է 7239,0 հա մակերես, 819580մ<sup>3</sup> ընդհանուր պաշարով (ընդհանուր անտառածածկ տարածքի 41,6% և պաշարի 37,5%), 1201-1600մ բարձրությունների վրա՝ 7635,7հա, 1154140մ<sup>3</sup> ընդհանուր պաշարով (44,2% և 52,9%), 1601-1800մ՝ 770,3հա, 113600մ<sup>3</sup> ընդհանուր պաշարով (4,5% և 5,2%), 1800մ-ից բարձր՝ ընդամենը 73,7հա, 7840մ<sup>3</sup>, անտառածածկի ընդամենը 0,4%-ը, ընդհանուր պաշարի 0,4%-ը (աղյուսակ 11):



**Աղյուսակ 11. Անտառածածկ մակերեսի և ընդհանուր պաշարի բաշխվածությունն ըստ ծովի մակերևույթից բարձրության**

Անտառատեսակ	Անտառածածկ, հա/դաշարը, մ <sup>3</sup>	Ծովի մակերևույթից բարձրությունը, մետր				
		Մինչև 800	801-1200	1201-1600	1601-1800	1800 մ-ից բարձր
Ախքյորփի	3776,2		1052,9	2259,4	427,4	36,5
	575780		142070	371150	59710	2850
Խոժոռնի	3485,6	11,9	1868,8	1399,4	168,3	37,2
	459720	420	238960	189340	26010	4990
Բերդաձորի	2706,5	999,5	1551,3	155,7		
	279970	67150	192430	20390		
Ճոճկանի	3717,7	464,4	1921,1	1332,2		
	374350	13860	183990	176500		
Շամլուղի	3722,2	133,0	844,9	2563,2	181,1	
	496770	5280	62130	401220	28140	
Անտառտնտեսություն	17408,2	1608,8	7239,0	7709,9	776,8	73,7
	2186590	86710	819580	1158600	113860	7840

**3.5. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի**

Անտառտնտեսությունում անտառածածկ մակերեսի և պաշարի հետևյալ բաշխվածությունն է ըստ տարիքային խմբերի: Երիտասարդ ծառուտները (I և II հասակային դասեր) զբաղեցնում են 530,8 հա, 30810մ<sup>3</sup> պաշարով (անտառածածկի 3,1% և պաշարի 1,4%-ը):

Միջին տարիքի ծառուտները, որոնք բացարձակ գերակշռում են, զբաղեցնում են 14064,6հա, 1842270մ<sup>3</sup> պաշարով (համապատասխանաբար 80,8% և 84,2%):

Հասունացող և հասուն ծառուտները զբաղեցնում են համապատասխանաբար 1508,4հա (8,7%) և 1304,4հա (7,6%), 197190մ<sup>3</sup> (9,0%) և 108920մ<sup>3</sup> (5,4%):

Անտառտնտեսության 2008թ. գնահատման արդյունքներով հետևյալ պատկերն է՝ երիտասարդ ծառուտները զբաղեցրել են անտառածածկի 2,4%-ը և պաշարի 0,5%-ը, միջին տարիքի ծառուտները՝ համապատասխանաբար 79,6% և 82,4%, հասունացող և հասուն ծառուտների մակերեսը՝ 11,1% և 6,9%, պաշարը՝ 12,8% և 4,3% (աղյուսակ 12, քարտեզ 9):

**Աղյուսակ 12. Անտառածածկ տարածքի և պաշարի բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի**

№	Գերակշռող ծառատեսակը	Մակերեսը, հա							Պաշարը, մ <sup>3</sup>							Միջին տարիքը
		Ընդհանուր Մակերեսը, հա	այդ թվում ըստ տարիքային խմբերի						Ընդհանուր պաշարը, մ <sup>3</sup>	այդ թվում ըստ տարիքային խմբերի						
			երիտասարդ		միջին տարիքի	հասունացող	հասուն և գերհասուն			երիտասարդ		միջին տարիքի	հասունացող	հասուն և գերհասուն		
			1	2			ընդամենը	այդ թվում գերհասուն		1	2			ընդամենը	այդ թվում գերհասուն	
1	Սոճի	49,3	3,2	18,2	27,9				7490	150	2680	4660			42	
2	Կաղնի	3764,0		18,5	3629,3	101,4	14,8		462040		850	440330	17870	2820	97	
3	Հաճարի	6930,3		229,7	6249,3	364,1	87,2		1128740		14420	1011890	78500	20690	100	
4	Բոխի	4030,0	3,7	221,6	2896,0	595,5	313,2		479290	110	11610	333330	84130	50110	70	
5	Հացի	145,3	2,6	13,5	129,2				12190	10	260	11860			71	
6	Ընկուզենի	183,8		4,0	179,8				13440		170	13270			59	
7	Թխկի	22,9		12,2	7,4	.3,3			1630		430	870	330		64	
8	Թեղի	19,3		0,4	18,9				2080		20	1960			61	
9	Շագանակենի	4,8			4,8				290			290			60	
10	Սպիտակ ակացիա	48,9					48,9	48,2	1630					1630	1620	42
11	Ղաժի	1855,8			735,8	397,1	722,9	85,7	69350			24300	14820	30230	4870	52
12	Լորենի	10,7			10,7				1120			1120				70
13	Փռչնի	120,2			39,7	32,5	48,0		4450			190				27
14	Տանձենի	1,1				1,1			80	10	90	40	250			48
15	Խնձորենի	5,0	0,8	2,4	1,8				140			840	90	1300	910	26
16	Ուտի	4,5			4,5				190							
17	Թփեր	212,3			129,5	13,4	69,4		2440							
<b>Անտառոտնտեսություն 2020թ</b>		17408,2	10,3	520,5	14064,6	1508,4	1304,4	173,3	2186590	280	30530	1842270	197190	108920	7400	85
<b>Անտառոտնտեսություն 2008թ</b>		13851,1	164,2	168,1	11025	1548	975,7	124,6	1912630	1370	9050	1576340	244890	80980	5330	84
Ախրյորիի ատպ. 2020		3776,2		137,7	3406,8	227,1	4,6		575780		9310	521780	43860	830		96
Խոժոռնի ատպ. 2020		3485,6	2,8	175,7	3217,5	73,2	16,4	0,9	459720	70	989	451801	5630	1230	10	84
Բերդաձորի ատպ. 2020		2706,5		91,7	2347,6	209,2	58,0	40,0	279970		4070	256430	17780	1690	1010	69
Ճոճկանի ատպ. 2020		3717,7	3,7	64,4	2415,8	435,6	798,2	63,2	374350	50	4510	263610	53950	52230	3230	78
Շամլուղի ատպ. 2020		3722,2	3,8	51,0	2676,9	563,3	427,2	69,2	496770	160	2750	364950	75970	52940	3150	93

**3.6. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ լանջի թեքության և տարիքային խմբերի**

Անտառածածկ տարածքի 27,3%-ը (4709,7հա) և պաշարի 27,2%-ը (594430մ<sup>3</sup>) գտնվում են մինչև 20° թեքությունների վրա, իսկ 30°-ից բարձր թեքություններում տեղաբաշխված են 7084,4հա անտառներ՝ 902150մ<sup>3</sup> ընդհանուր պաշարով (համապատասխանաբար 40,7% և 41,3%) (աղյուսակ 13, քարտեզ 10):

**Աղյուսակ 13. Անտառածածկ ընդհանուր մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ լանջի թեքության աստիճանի և տարիքային խմբերի**

Լանջի թեքության աստիճանը	անտառածածկ մակերեսը, հա	պաշարը, մ <sup>3</sup>	Տարիքային խումբ							
			երիտասարդ		միջին տարիքային		հասունացող		հասուն և գերհասուն	
			անտառածածկ մակերեսը, հա	պաշարը, մ <sup>3</sup>	անտառածածկ մակերեսը, հա	պաշարը, մ <sup>3</sup>	անտառածածկ մակերեսը, հա	պաշարը, մ <sup>3</sup>	անտառածածկ մակերեսը, հա	պաշարը, մ <sup>3</sup>
մինչև 5°	149,6	15090	13,4	800	117,2	12290	12,8	1660	6,2	340
6-10°	345,0	40660	22,7	166	279,5	33380	20,4	2830	22,4	2790
11-15°	1043,1	130840	34,5	314	825,9	99800	72,8	12650	109,9	15250
16-20°	3172,0	407840	89,0	6250	2621,3	339840	269,3	38630	192,4	23120
21-25°	3338,3	406350	140,0	11760	2588,4	326670	378,0	45640	231,9	26600
26-30°	2275,8	283660	57,8	3030	1852,8	240390	175,2	23220	190,0	17020
31-35°	6387,1	823750	160,9	8260	5181,2	727860	549,1	67180	495,9	20450
36-40°	689,0	78280	12,5	230	591,0	69340	29,8	5360	55,7	3350
40°-ից բարձր	8,3	120			7,3	100	1,0	20		
<b>Անտառտնտեսություն</b>	<b>17408,2</b>	<b>2186590</b>	<b>530,8</b>	<b>30810</b>	<b>14064,6</b>	<b>1849670</b>	<b>1508,4</b>	<b>197190</b>	<b>1304,4</b>	<b>108920</b>

**3.7. Անտառածածկ տարածքի և պաշարի բաշխվածությունն ըստ բոնիտետային դասերի**

Անտառների միջին բոնիտետային դասը III-7 է, համեմատաբար բարձր բոնիտետային դասով առանձնանում են հաճարկուտները, որոնց միջին բոնիտետային դասը III-1 է, բոխին՝ III-3 սոճին՝ I-8, բարձրաբուն կաղնուտներին՝ IV-1 (աղյուսակ 14, քարտեզ 11):

**Աղյուսակ 14. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ բոնիտետային դասերի**

№	Գերակշռող ծառատեսակը	Բոնիտետային դասեր							
		1	2	3	4	5	5ա	Ընդ. հա	Միջին բոնիտետ
1.	Սոճի	24,5	18,9	5,9				49,3	1,8
2.	Կաղնի			934,2	2252,8	556,3	20,7	3764,0	4,1
3.	Հաճարի	5,8	239,1	5871,3	780,0	34,1		6930,3	3,1

№	Գերակշռող ծառատեսակը	Բռնիտետային դասեր							Ընդ. հա	Միջին բռնիտետ
		1	2	3	4	5	5ա			
4.	Բոխի	30,0	84,9	2694,1	1095,0	120,5	5,5	4030,0	3,3	
5.	Հացի	4,4	8,3	36,3	65,8	30,5		145,3	3,8	
6.	Ընկուզենի	0,3	13,9	161,3	8,3			183,8	3,0	
7.	Թխկի		0,1	2,7	20,1			22,9	3,9	
8.	Թեղի	1,5	3,1	9,9	4,8			19,3		
9.	Շագանակենի				4,8			4,8	4,0	
10.	Սպիտակ ակացիա			1,5	2,8	9,7	34,9	48,9	5,3	
11.	Ղաժի				2,0	792,3	1061,5	1855,8	5,3	
12.	Լորենի			10,7				10,7	3,0	
13.	Փռչի					51,1	69,1	120,2	5,5	
14.	Տանձենի				1,1			1,1	3,5	
15.	Խնձորենի			0,8	1,1	3,1		5,0	3,9	
16.	Ուռի				3,9			3,9	4,0	
17.	Թփեր					25,3	187,6	212,9	5,4	
<b>Անտառտնտեսություն</b>		<b>66,5</b>	<b>368,5</b>	<b>9728,7</b>	<b>4242,5</b>	<b>1622,7</b>	<b>1379,3</b>	<b>17408,2</b>	<b>3,7</b>	

### 3.8. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ ծառուտի լրիվության

Անտառտնտեսության ծառուտների միջին լրիվությունը 0,52 է, ընդ որում կաղնուտներում և հաճարկուտներում համապատասխանաբար 0,51 և 0,52, սոճուտներում և բոխու գերակշռությամբ ծառուտներում՝ 0,66, 0,55: 2008թ. անտառտնտեսության ծառուտների միջին լրիվությունը եղել է 0,50:

Ախքյորփու անտառապետությունում միջին լրիվությունը գնահատվել է 0,50, Խոժոռնու անտառապետությունում 0,50, Բերդաձորի անտառապետությունում 0,57, Ճոճկանի անտառապետությունում 0,51 և Շամլուղի անտառապետությունում 0,54:

Ցածր լրիվության (0,3-0,4) ծառուտները զբաղեցնում են ընդհանուր 3992,4հա մակերես, կամ ընդհանուր մակերեսի 22,9%-ը: 2008թ. գույքագրման արդյունքներով կազմել 4859,8հա (35,1%): Միջին լրիվության (0,5-0,6) ծառուտները զբաղեցնում են ընդհանուր 10047 հա մակերես՝ 57,7%-ը, 2008թ. 7843,9 հա (56,6%):

Բարձր լրիվության (0,7 և բարձր) ծառուտները կազմում են ընդհանուր անտառածածկի 19,4%-ը, 2008թ՝ 8,3% (աղյուսակ 15, քարտեզ 12):

### Աղյուսակ 15. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ ծառուտի լրիվության

№	Գերակշռող ծառատեսակը	Տարին	Լրիվությունը									
			0,3	0,4	0,5	0,6	0,7	0,8	0,9	1,0	Ընդամենը	Միջին
1	Սոճի	2008	2,7	3,6	1,5	8,8	7,4	5,1	2,5	7,5	39,1	0,70
		2020	4,1	5,4	5,8	7,0	12,4	6,6	0,5	7,5	49,3	0,66
2	Կաղնի	2008	118,9	289,1	728,1	565,9	62,8	2,7			1758,7	0,50
		2020	197,6	429,0	1358,8	1293,1	375,7	106,6	3,2		3764,0	0,51
3	Հաճարի	2008	709,8	1864,1	1738,5	1309,4	663,4	71,7	12,2	4,5	6373,6	0,49
		2020	558,6	1301,6	1626,9	2015,1	1068,8	308,7	40,4	10,0	6930,3	0,52
4	Բոխի	2008	255,1	748,7	1271,9	1096,5	134,2	60,2			3566,6	0,51
		2020	132,8	528,1	927,8	1454,0	756,8	207,6	17,6	5,3	4030,0	0,55
5	Հացի	2008	6,5	25,6	27,4	41,5		1,9			102,9	0,51
		2020	4,6	30,6	67,1	38,5	3,1	0,9	0,5		145,3	0,51

№	Գերակշռող ծառատեսակը	Տարին	Լրիվությունը								Ընդամենը	Միջին
			0,3	0,4	0,5	0,6	0,7	0,8	0,9	1,0		
6	Թխկի	2008	5,3	1,2	15,3						22,8	0,46
		2020	3,3	3,7	12,2			3,7			22,9	0,50
7	Ընկուզենի	2008	36,4	58,3	14,3						109,0	0,38
		2020	18,5	68,9	78,6	10,1	7,0	0,7			183,8	0,46
8	Թեղի	2008		1,4	2,6	3,0					7,0	0,52
		2020	0,5	1,5	4,4	7,9	4,0	1,0			19,3	0,50
9	Կաղամախի	2008			0,3						0,3	0,50
		2020									-	
10	Ուռի	2008				14,5					14,5	0,60
		2020				3,9					3,9	0,60
11	Շագանակենի	2008	3,7								3,7	0,30
		2020		4,8							4,8	
12	Ղաժի	2008	111,3	427,6	725,0	215,5	95,3	13,2			1587,9	0,49
		2020	143,9	298,4	557,7	448,9	259,6	145,9	1,4		1855,8	0,52
13	Լորենի	2008			2,7	10,5					13,2	0,58
		2020					10,7				10,7	0,70
14	Տանձենի	2008	1,4		0,6						2,0	0,36
		2020	1,1								1,1	0,30
15	Խնձորենի	2008		1,3							1,3	0,40
		2020	1,6	0,2		0,8	0,9	1,5			5,0	0,57
16	Սպիտակ ակացիա	2008	2,0	1,4	0,7						4,1	0,37
		2020	0,7	2,0	33,6	12,6					48,9	0,52
17	Փռչնի	2008	0,1	25,7	8,4	4,2					38,4	0,44
		2020	6,0	44,6	64,5	5,1					120,2	0,46
18	Թփեր	2008	7,9	86,1	21,0	16,1	1,8				128,4	0,43
		2020	71,5	99,7	24,0	14,8	2,9				212,9	0,43
Անտառտնտեսություն		2008	1312,2	3547,6	4558,3	3285,6	964,9	155,8	14,7	12	13851,1	0,50
		2020	1173,7	2818,7	4761,4	5285,6	2501,9	783,2	63,6	22,8	17408,2	0,52
Ավաբյուրի		2020	498,4	944,8	912,9	1095,5	291,1	27,3	6,2	-	3776,2	0,50
Խոժոռնի		2020	210	644,9	662,5	943,8	773,3	234,5	6,4	10,0	3485,6	0,50
Բերդաձորի		2020	112,5	228,2	527,2	827,0	694,6	310,9	6,1		2706,5	0,57
Ճոճկանի		2020	241,5	522,4	1333,1	1035,8	413,1	157,1	1,9	12,8	3717,7	0,51
Շամլուղի		2020	111,3	478,4	1325,7	1383,5	329,8	53,4	43,0	-	3722,2	0,54

### 3.9. Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ հասակային դասերի

Անտառածածկ մակերեսի ընդամենը 3,1%-ը (530,8հա) 1-ին և 2-րդ հասակային դաս) ծառուտներ են, որոնցում ընդհանուր պաշարը կազմում է 32810մ<sup>3</sup> (1,5%), 2008թ. այն կազմել է 2,4% (332,3հա) և 10420մ<sup>3</sup>, 0,54%: 3-րդ և 4-րդ հասակային դասի ծառուտների ընդհանուր մակերեսը 2008թ. համեմատությամբ 2020թ. ավելացել է 156,7 հեկտարով, ինչը բացատրվում է երիտասարդ տարիքային խմբից ավելի բարձր հասակային դաս տեղաշարժով: 5-6 հասակային դասերի ծառուտների մակերեսը 2008թ. համեմատությամբ ավելացել է 2241,3 հեկտարով, իսկ ընդհանուր պաշարը 134200մ<sup>3</sup>-ով: 2008թ. համեմատությամբ ավելավել է նաև 7 և բարձր հասակային դասերի ծառուտների ընդհանուր մակերեսը 960,1 հեկտարով, իսկ ընդհանուր պաշարը՝ 139090մ<sup>3</sup>-ով (աղյուսակ 16, քարտեզ 13):

**Աղյուսակ 16. Զիլիզայի անտառտնտեսության անտառածածկ մակերեսի և պաշարի փոփոխության դինամիկան ըստ գերակշռող ծառատեսակների ու հասակային դասերի**

Գերակշռող ծառատեսակը	Գույքագրման տարին	Հասակային դասեր									Միջին տարիք
		Համարիչ- մակերեսը (հա), Հայտարար- պաշարը (մ <sup>3</sup> )									
		I	II	III	IV	V	VI	VII	VIII և բարձր	Ընդամենը	
Սոճի	2008	5	25	9,1						39,1	31
		170	3040	1230						4440	
	2020	3,2	18,2	25,9	2,0					49,3	43
		150	2680	4360	300					7490	
Կաղնի	2008	0,6	13	29,1	565,2	889	216,5	45,3	8,7	1767,5	89
			360	1490	53920	105150	28820	6370	1050	197160	
	2020		18,5	58,2	564,9	1656,9	930,2	362,4	152,9	3674,0	97
			850	3920	48550	189210	136510	56670	26330	462040	
Հաճարի	2008	117,5	37,3	62,9	842,7	2106,9	2299,6	680,8	225,9	6373,6	101
		930	1750	6970	108280	357170	471570	171250	56650	1174570	
	2020		273,1	70,9	868,6	2416,3	2001,6	1016,8	213,0	6930,3	101
			15170	10740	94540	362090	356720	224270	65210	1128740	
Բոխի	2008	41,1	43,5	899,4	2156	426,6				3566,6	69
		270	2470	78650	298470	75450				455310	
	2020	3,7	221,6	832,0	2286,5	652,6	33,6			4030,0	71
		110	12860	74940	284190	101820	5370			479290	
Հացի	2008		12,2	30,2	57,1	3,4				102,9	65
			240	2130	6260	320				8950	
	2020	2,6	13,5	37,8	35,3	50,7	5,4			145,3	71
		10	260	2930	3860	4700	430			12190	
Թխկի	2008		8,8	7,2		2,6		4,2		22,8	66
			270	430		310		670		1680	
	2020		12,2	3,7	0,1	3,6		3,3		22,9	64
			430	570	10	290		330		1630	
Թեղի	2008		1,4	5,6						7,0	49
			40	520						560	
	2020		0,4	10,0	8,9					19,3	50
			20	1120	260					2080	
Ընկուզենի	2008		22,6	75	11,4					109,0	49
			820	4250	1170					6240	
	2020		4,0	158,8	19,1	1,9				183,8	60
			170	11120	1880	270				13440	
Շագանակենի	2008			3,7						3,7	50
				140						140	
	2020			4,8						4,8	60
				290						290	
Ղաճի	2008			137,4	263,0	470,7	407,8	278,6	30,4	1587,9	51
				1430	4440	16740	17580	14630	2260	57080	
	2020			69,4	250,5	723,9	517,4	271,8	22,8	1855,8	52
				710	4530	26670	21730	14160	1550	69350	
Ակացիա սպիտակ	2008						1,3	0,2	2,6	4,1	36
							30		120	150	
	2020						0,7		48,2	48,9	43
							10		1620	1630	

Գերակշռող ծառատեսակը	Գույքագրման տարին	Հասակային դասեր									
		Համարիչ- մակերեսը (հա), Հայտարար- պաշարը (մ <sup>3</sup> )									Միջին տարիք
		I	II	III	IV	V	VI	VII	VIII և բարձր	Ընդամենը	
Լորենի	2008							13,2		13,2	66
								2030		2030	
2020								10,7		10,7	70
								1120		1120	
Ուռի ծառանմ.	2008			14,5						14,5	25
				51						51	
2020				3,9						3,9	30
				140						140	
Տանձենիի	2008					0,6	1,4			2	111
						60	100			130	
2020							1,1			1,1	120
							80			80	
Փռչնի	2008		3	20,4	15					38,4	59
			30	550	700					1280	
2020				3,7	0,6	21,3	14,1	34,4	46,1	120,2	65
				40	10	590	470	1310	2030	4450	
Խնձորենի	2008		1	0,3						1,3	41
			20	20						40	
2020		0,8	2,4	1,8						5,0	36
		10	90	40						140	
Թփեր	2008			128,4			0,8		68	197,2	15
				730			10		1490	2230	
2020				33,0	96,5	12,0	24,7	3,4	42,7	212,3	
				260	580	90	500	30	980	1460	
Անտառտնտեսություն	2008	164,2	168,1	1423,2	3910,4	3899,8	2927,5	1022,3	335,6	13851,1	84
		1370	9050	99050	473240	555200	518200	194950	61570	1912630	
2020		10,3	520,5	1400,7	4089,6	5539,8	3528,8	1702,8	615,7	17408,2	86
		280	32530	111180	439390	685780	521820	297890	97720	2186590	

### 3.10. Անտառի տիպը

Անտառչինության ժամանակ անտառի տիպի բնութագրման համար հիմք են ընդունվել Լ.Բ. Մախատաձեի և Ն.Դ. Պոպովի, նաև Յարոշենկոյի կողմից Կովկասի և Հայաստանի համար մշակված անտառտիպոլոգիական սխեմաները:

Համաձայն վերը նշված սխեմաների՝ անտառտնտեսության անտառները տեղաբաշխված են կենտրոնական-արևմտաանդրկովկասյան մարզում, որի բուսականությունն առանձնանում է հարուստ կենսաբազմազանությամբ, լավ զարգացած անտառներով արևելյան կաղնու և հաճարի ծառատների գերակշռությամբ: Տարածաշրջանի կլիման նպաստում է անտառտնտեսության տարածքում անտառի թարմ (չափավոր խոնավ) տիպերի գերակշռությանը (տարախոտային), որը զբաղեցնում է ընդհանուր անտառածածկի 69,8%-ը (12145,2հա) (աղյուսակ 17):

**Աղյուսակ 17. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ անտառի տիպերի**

№	Անտառի տիպերի խմբեր	Գերակշռող ծառատեսակները							
		Սոճի	Կաղնի	Հաճարի	Բոխի	Հացի	Թխիլի	Այլ տեսակներ	Ընդամենը
1	Հացազգգիխոտային		87,9		4,9			10,3	103,1
2	Մեղյալ ծածկույթ	25,7	14,2	70,9	26,6	0,6		17,7	155,7
3	Շողախոտային	3,4	124,1	2411,5	1187,6	20,1		1036,4	4783,1
4	Տարախոտային	19,2	3341,0	4436,6	2779,3	124,6	22,9	1421,6	12145,2
5	Բոշխային		106,8		3,2			70,4	180,4
6	Պտերային	1,0		6,0					7,0
7	Գետնաստղային			5,3	28,4				33,7
<b>Ընդամենը</b>		49,3	3674,0	6930,3	4030,0	145,3	22,9	2556,4	17408,2

**3.11. Անտառածման պայմանների տիպ**

Անտառտնտեսությունների սահմաններում անտառածման պայմանների տիպը բնութագրվել է համաձայն պրոֆ. Ե. Վ. Ալեքսեևի և Պ. Ս. Պոգրեբնյակի կողմից մշակված էդաֆիկ ցանցի, ըստ որի անտառածման պայմանները հիմնականում որոշվում են երկու էդաֆիկ գործոններով՝ հողերի բերրիությամբ և խոնավացման պայմաններով և այդ գործոնները դիտվում են իրարից անկախ:

Հողերի բերրիությունը առաջացնում է հետևյալ տիպերի հաջորդականությունը.

- A- բնութագրում է աղքատ աճման տարածքով,
- B- համեմատաբար աղքատ աճման տարածքով,
- C- համեմատաբար բերրի աճման տարածքով,
- D- բերրի աճման տարածքով:

Խոնավապահովվածությունից ելնելով անտառի տիպերը բաժանվում են

O-չափազանց չոր,

1- չոր,

2- թարմ (չափավոր խոնավ),

3- խոնավ,

4- թաց,

5- ճահիճ:

Անտառզնահատման տվյալների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ Զիլիզայի անտառտնտեսությունում գերակշռում են համեմատաբար բերրի աճման պայմաններով չափավոր խոնավ տիպը (C-2) 9526,1 հա, կամ ընդհանուր անտառածածկի 54,7%-ը (աղյուսակ 18):

Կարելի է եզրահանգել, որ անտառտնտեսություններում անտառածման պայմանները բարենպաստ են թարմ չափավոր խոնավությամբ համեմատաբար բերրի հողերում աճող անտառային տեսակների համար, որը և հաշվի է առնվել անտառվերականգնման համալիր միջոցառումների նախատեսման ժամանակ:



**Աղյուսակ 18. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ անտառածման պայմանների տիպերի**

Բոնիտետային դաս	Գերակշռող ծառատեսակների մակերեսը, հա							
	Սոճի	Կաղնի	Հաճարի	Բոխի	Հացի	Թխկի	Այլ տեսակներ	Ընդամենը, հա
A2		9,9					11,0	20,9
B1	7,3	385,1		335,0	2,2		414,2	1443,8
B2	5,8	523,2	182,5	180,0	18,8	2,1	437,3	1349,7
B3	4,2	12,3					0,7	17,2
C1	12,0	830,5	1364,7	255,0	21,6	12,2	1424,9	3920,9
C2	18,5	1214,3	5072,6	2903,6	96,6	8,6	211,9	9526,1
C3	1,5	285,9	77,4	114,5	6,1		56,4	541,8
D1		18,2	34,0	23,6				75,8
D2		94,6	199,1	218,3				512,0
<b>Ընդամենը</b>	49,3	3674,0	6930,3	4030,0	145,3	22,9	2556,4	17408,2

**3.12. Հիմնական անտառկազմող ծառատեսակների գնահատման միջին ցուցանիշները**

Անտառտնտեսությունում անտառների միջին տարբը 86 է, միջին բոնիտետային դասը՝ 3,7, ծառուտների միջին լրիվությունը 0,52 է, 1 հեկտարի միջին պաշարը՝ 126խտմ<sup>3</sup>, միջին տարեկան աճը՝ 1,46խտմ<sup>3</sup>: Ծառուտի միջին կազմը՝ 3,2հաճարի, 3,2բոխի, 1,7 կաղնի, 1,2 դաժի, 0,3 հացի, 0,2թխկի, 0,1ընկուզենի, 0,1փոշնի (աղյուսակ 19):

Գնահատման նշված ցուցանիշները 2008թ. հետևյալն են՝ միջին տարբը 84, միջին բոնիտետային դասը 3,7, ծառուտների միջին լրիվությունը 0,50, 1 հեկտարի միջին պաշարը 138մ<sup>3</sup>, միջին տարեկան աճը՝ 1,64մ<sup>3</sup>: Ծառուտի միջին կազմը՝ 3,8հաճարի, 3,1բոխի, 1,3կաղնի, 1,1դաժի, 0,4հացի, 0,2թխկի, 0,1ընկուզենի:

Անտառպետություններում գնահատման միջին ցուցանիշները 2020թ. հետևյալն է՝ *Ախքյոռորփու* անտառպետությունում՝ միջին տարիքը 96, միջին բոնիտետային դասը՝ 3,2, միջին լրիվությունը՝ 0,50, 1 հեկտարի միջին պաշարը՝ 154մ<sup>3</sup>, միջին տարեկան աճը՝ 1,60մ<sup>3</sup>: Միջին կազմը՝ 6,7հաճարի, 2,6բոխի, 0,4կաղնի, 0,2թխկի, 0,1դաժի:

2008թ՝ միջին տարբը 99, միջին բոնիտետային դասը՝ 3,1, միջին լրիվությունը՝ 0,50, 1 հեկտարի միջին պաշարը՝ 174խտմ<sup>3</sup>, միջին տարեկան աճը՝ 1,76խտմ<sup>3</sup>: Միջին կազմը՝ 6,6հաճարի, 2,5բոխի, 0,5կաղնի, 0,2դաժի, 0,1հացի, 0,1թխկի:

*Խոժոռնու* անտառպետությունում՝ 2020թ. միջին տարիքը 85, միջին բոնիտետային դասը՝ 3,3, միջին լրիվությունը 0,54, 1 հեկտարի միջին պաշարը՝ 132խտմ<sup>3</sup>, միջին տարեկան աճը՝ 1,55մ<sup>3</sup>, միջին կազմը՝ 4,5հաճարի, 3,4բոխի, 0,9կաղնի, 0,6դաժի, 0,3թխկի, 0,2հացի, 0,1լորի:

2008թ՝ միջին տարբը 87, միջին բոնիտետային դասը 3,3, միջին լրիվությունը 0,50, 1 հեկտարի միջին պաշարը՝ 150խտմ<sup>3</sup>, միջին տարեկան աճը՝ 1,72խտմ<sup>3</sup>: Միջին կազմը՝ 5հաճարի, 3բոխի, 0,9կաղնի, 0,6ղաժի, 0,3թխկի, 0,2հացի:

*Բերդաձորի* անտառապետությունում՝ 2020թ. միջին տարբը 69, միջին բոնիտետային դասը 3,8, միջին լրիվությունը 0,57, 1 հեկտարի միջին պաշարը՝ 104խտմ<sup>3</sup>, միջին տարեկան աճը՝ 1,51մ<sup>3</sup>, միջին կազմը՝ 4,2բոխի, 2,0հաճարի, 1,7ղաժի, 0,7հացի, 0,6 կաղնի, 0,4ընկուզենի, 0,3թխկի, 0,1հոնի:

2008թ՝ միջին տարբը 67, միջին բոնիտետային դասը 3,8 միջին լրիվությունը 0,50, 1 հեկտարի միջին պաշարը՝ 109մ<sup>3</sup>, միջին տարեկան աճը՝ 1,62խտմ<sup>3</sup>: Միջին կազմը՝ 4,4բոխի, 2հաճարի, 1,7ղաժի, 0,7հացի, 0,6կաղնի, 0,3ընկուզենի, 0,2թխկի, 0,1հոնի:

*Ճոճկանի* անտառապետությունում՝ 2020թ. միջին տարբը 79, միջին բոնիտետային դասը 4,4, միջին լրիվությունը 0,53, 1 հեկտարի միջին պաշարը՝ 101խտմ<sup>3</sup>, միջին տարեկան աճը՝ 1,28խտմ<sup>3</sup>, միջին կազմը՝ 3,5կաղնի, 2,9բոխի, 2,2ղաժի, 0,6հացի, 0,5հաճարի, 0,1թխկի, 0,1փոռչի, 0,1ցաքի:

2008թ՝ միջին տարբը 76, միջին բոնիտետային դասը 4,4 միջին լրիվությունը 0,51, 1 հեկտարի միջին պաշարը՝ 107խտմ<sup>3</sup>, միջին տարեկան աճը՝ 1,47խտմ<sup>3</sup>: Միջին կազմը՝ 3,1բոխի, 3կաղնի, 2,1ղաժի, 0,8հաճարի, 0,6հացի, 0,1թխկի, 0,1տանձենի, 0,1փոռչի, 0,1ցաքի:

*Շամլուղի* անտառապետությունում՝ 2020թ. միջին տարբը 93, միջին բոնիտետային դասը 3,9, միջին լրիվությունը 0,54, 1 հեկտարի միջին պաշարը՝ 133խտմ<sup>3</sup>, միջին տարեկան աճը՝ 1,43խտմ<sup>3</sup>, միջին կազմը՝ 3,4կաղնի, 3,1բոխի, 2,0հաճարի, 0,8ղաժի, 0,3հացի, 0,1թխկի, 0,1սոճի, 0,1ակացիա, 0,1փոռչի :

2008թ՝ միջին տարբը 105, միջին բոնիտետային դասը 3,9 միջին լրիվությունը 0,55, 1 հեկտարի միջին պաշարը՝ 169խտմ<sup>3</sup>, միջին տարեկան աճը՝ 1,61խտմ<sup>3</sup>: Միջին կազմը՝ 3,0բոխի, 2,9կաղնի, 2,4բոխի, 0,8ղաժի, 0,4հացի, 0,1թխկի, 0,1փոռչի, 0,1տանձ, 0,1սոճի, 0,1ակցիա սպիտակ:

**Աղյուսակ 19. Տեղեկագիր անտառզնահատման միջին ցուցանիշների՝ ըստ գերակշռող ծառատեսակների**

№	Գերակշռող ծառատեսակը	Տարիներ	Գնահատման միջին ցուցանիշներ					Ծառուտի միջին կազմը
			Տարիքը	Քոնիստերի դասը	Լրիվությունը	<sup>1</sup> հա անտառածածկ մակերեսի միջին ասառատ. մ <sup>3</sup>	Պաշարի 1 հա. անտառածածկի միջին անը	
1	Սոճի	2020	43	1,8	0,66	152	3,53	9,5ս0,4բ0,1հց
		2008	31	1,7	0,70	114	3,67	9,7սոճի0,3բոխի
2	Կաղնի	2020	97	4,1	0,51	120	1,24	5,0կաղնի3,2բոխի1,0ղաժի0,4հացի0,3հաճարի0,1թխկի
		2008	89	4,0	0,51	112	1,26	5,1կաղնի3բոխի0,7ղաժի0,6հացի0,4հաճարի0,1թխկի0,1տանձոնի
3	Հաճարի	2020	100	3,1	0,53	163	1,63	7հաճարի2,5բոխի0,3կաղնի0,2թխկի
		2008	102	3,0	0,50	184	1,80	7,5հաճարի2,1բոխի0,2թխկի0,2կաղնի
4	Բոխի	2020	71	3,3	0,55	121	1,70	6,3բոխի1,4կաղնի1,2հաճարի0,5հացի0,3թխկի0,3ղաժի
		2008	70	3,3	0,51	128	1,82	6,3բոխի1,4կաղնի1,0հաճարի0,8հացի0,3ղաժի0,2թխկի
5	Հացի	2020	71	3,8	0,51	84	1,18	5,9հացի1,8բոխի1,2կաղնի0,7ղաժի0,3թխկի0,1թեղի
		2008	65	3,7	0,51	87	1,34	5,8հացի2,6բոխի1,0կաղնի0,3թխկի0,3ղաժի
6	Թխկի	2020	64	3,9	0,50	71	1,11	5,9հացի1,8բոխի1,2կաղնի0,7ղաժի0,3թխկի0,1թեղի
		2008	87	4,3	0,47	74	0,85	6,5թխկի1,9հաճարի0,6ղաժի0,6փոշնի0,2կաղնի0,2հացի
7	Րնկուզենի	2020	60	3,0	0,46	73	1,22	7,7րնկուզենի0,8բոխի0,5հոնի0,2հացի0,2թխկի0,2ղաժի0,1լորենի
		2008	50	2,9	0,38	57	1,14	8,7րնկուզենի0,6հոնի0,3բոխի0,1թխկի0,1հացի0,1լորենի0,1խնձորենի
8	Շագանակենի	2020	60	4,0	0,40	60	1,0	7,7շագ. 0,8բոխի0,5հոնի0,3հացի0,2կաղնի0,2թխկի0,2ղաժի0,1լորի
		2008	50	3,0	0,30	38	0,76	8,9շագանակենի1,1հոնի
9	Սպիտակ ակացիա	2020	43	5,5	0,52	33	0,77	5,6ակացիա սպիտակ1,8ղաժի1,4փոշնի0,3թխկի0,3թեղի0,3հացի 0,3բոխի
		2008	36	3,6	0,37	37	1,02	9,5ակացիա սպրտակ0,3կաղնի0,2հացի
10	Ղաժի	2020	52	5,7	0,52	37	0,71	7,3ղաժի1,2կաղնի0,5բոխի0,4հացի0,3փեշնի0,2ցաքի0,1թխկի
		2008	51	5,7	0,49	36	0,70	7,4ղաժի1,1կաղնի0,5հացի0,4բոխի0,3ցաքի0,1թխկի0,1հոնի0,1փոշնի
11	Լորենի	2020	70	3,0	0,70	105	1,50	3,7լորի3,5բոխի1կաղնի0,9թխկի0,9հացի
		2008	66	3,0	0,58	154	2,33	4,2լորենի2,9բոխի1,1թխկի1,1հացի0,7կաղնի
12	Ուռի ծառանման	2020	30	4,0	0,60	36	1,20	3,8ուռի2,1ղաժի2,1փոշնի1րնկուզենի1այլանդ.
		2008	25	4,0	0,6	35	1,40	4ուռի2ղաժի2փոշնի1րնկուզենի1սերկկլի
14	Տանձենի	2020	120	3,5	0,30	73	0,61	
		2008	111	3,8	0,38	90	0,81	

№	Գերակշռող ծառատեսակը	Տարիներ	Գնահատման միջին ցուցանիշներ					Ծառուտի միջին կազմը
			Տարիքը	Բոնիտետի դասը	Լրիվությունը	1 հա անտառածածկ մակերեսի միջին առաջադր. մ <sup>3</sup>	Պաշարի 1 հա. անտառածածկի միջին անը	
15	Խնձորենի	2020	36	3,9	0,57	28	0,78	
		2008	42	4,8	0,40	31	0,74	
16	Փռչնի	2020	65	5,5	0,46	37	0,57	
		2008	59	5,5	0,44	33	0,56	
Անտառտնտեսություն		2020	86	3,7	0,52	126	1,46	3,2հաճարի3,2բոխի1,7կաղնի1,2ղաժի0,3հացի0,2թխկի0,1ընկուզենի0,1փռչնի
		2008	84	3,7	0,50	138	1,64	3,8հաճարի3,1բոխի1,3կաղնի1,1ղաժի0,4հացի0,2թխկի0,1ընկուզենի
Անտառպետություններ								
Ախքյորփի		2020	96	3,2	0,50	154	1,60	6,7հաճարի2,6բոխի0,4կաղնի0,2թխկի0,1ղաժի
		2008	99	3,1	0,50	174	1,76	6,6հաճարի2,5բոխի0,5կաղնի0,2ղաժի0,1հացի0,1թխկի
Խոժոռնի		2020	85	3,3	0,54	132	1,55	4,5հաճարի3,4բոխի0,9կաղնի0,6ղաժի0,3թխկի0,2հացի0,1լորի
		2008	87	3,3	0,50	150	1,72	5հաճարի3բոխի0,9կաղնի0,6ղաժի0,3թխկի0,2հացի
Բերդաձորի		2020	69	3,8	0,57	104	1,51	4,2բոխի2,0հաճարի1,7ղաժի0,7հացի0,6կաղնի0,4ընկուզենի0,3թխկի0,1հոնի
		2008	67	3,8	0,50	109	1,62	4,4բոխի2հաճարի1,7ղաժի0,7հացի0,6կաղնի0,3ընկուզենի0,2թխկի0,1հոնի
Ճոճկանի		2020	79	4,4	0,53	101	1,28	3,5կաղնի2,9բոխի2,2ղաժի0,6հացի0,5հաճարի0,1թխկի0,1փռչնի0,1ցաքի
		2008	76	4,4	0,51	107	1,41	3,1բոխի3կաղնի2,1ղաժի0,8հաճարի0,6հացի0,1թխկի0,1տանձենի01փռչնի01ցաքի
Շամլուղի		2020	93	3,9	0,54	133	1,43	3,4կաղնի3,1բոխի2,0հաճարի0,8ղաժի0,3հացի0,1թխկի0,1սոճի0,1ակացիա0,1փռչնի
		2008	105	3,9	0,55	169	1,61	3,0բոխի2,9կաղնի2,4բոխի0,8ղաժի0,4հացի0,1թխկի0,1փռչնի0,1տանձ,0,1սոճի 0,1ակցիա սպիտակ

### 3.13. Անտառի ներկա իրավիճակի վերլուծություն

Անտառի վիճակի պատկերման նպատակով նախորդ անտառաշինությունից հետո վեր է լուծվել անտառաձածկ մակերեսի և պաշարի փոփոխությունը գերակշռող ծառատեսակների և հասակային դասերի սահմաններում, անտառգնահատման ցուցանիշների փոփոխությունները, ինչպես նաև անտառգնահատման և անտառտնտեսության կառավարման վերաբերյալ առկա համապատասխան նյութերը:

Անտառտնտեսության 2008թ. կառավարման պլանի անտառի գույքագրման և գնահատման տվյալներով անտառի միջին տարիքը եղել է 84 իսկ 2020թ.՝ 86: Փաստորեն կայուն կառավարման պայմաններում 12 տարի ավելանալու փոխարեն ավելացել է ընդամենը 2 տարով: 1 հեկտարի միջին պաշարը՝ 2008թ. 138խտմ<sup>3</sup>, 2020թ. 126խտմ<sup>3</sup>, միջին լրվությունը նշված ժամանակահատվածում միջին լրիվությունը ավելացել է ընդամենը 0,02-ով:

Անտառտնտեսության ընդհանուր մակերեսի 2008 թվականի համեմատությամբ 2020թ. ավելացումը 4161 հեկտարով բացատրվում է Շամլուղի անտառապետության միացման, ինչպես նաև շրջակա բնակավայրերի կադաստրային և անտառտնտեսության ընթացիկ գույքագրմամբ անտառային հողատեսքերի ու սահմանների ճշտման հանգամանքով:

Նշված ժամանակաշրջանում անտառաձածկ մակերեսը ավելացել է 3557,1, նույն թվում անտառտնտեսությանը միացված Շամլուղի անտառապետությունը 3722,2հա: Ընդհանուր պաշարը ավելացել է 119500խտմ<sup>3</sup>-ով, նույն թվում Շամլուղի անտառապետությունը 496770խտմ<sup>3</sup>:

Գերակշռող հիմնական ծառատեսակներից կաղնու գերակշռությամբ ծառուտների մակերեսը ավելացել է 2005,3հա, ընդհանուր պաշարը՝ 264880խտմ<sup>3</sup>, բոխուտները՝ 463,4հա, պաշարը՝ 23980խտմ<sup>3</sup>, ղաժուտները՝ 267,9հա, պաշարը՝ 12270խտմ<sup>3</sup>, իսկ հաճարկուտները մակերեսը ավելացել է 556,7հեկտարով, սակայն ընդհանուր պաշարը նվազել է 45830խտմ<sup>3</sup>-ով:

Անտառային մշակույթների մակերեսը ավելացել է 132,6 հեկտարով, նույն թվում Շամլուղը՝ 96հա:

Վերը նշված ժամանակաշրջանում ծառուտի միջին կազմը որոշակի փոփոխությունների է ենթարկվել՝ 2008թ. 3,8հաճարի, 3,1բոխի, 1,3կաղնի, 1,1ղաժի, 0,4հացի, 0,2թխկի, 0,1ընկուզենի:

2020թ. այդ ցուցանիշն է՝ 3,2հաճարի, 3,2բոխի, 1,7կաղնի, 1,2ղաժի, 0,3հացի, 0,2 թխկի, 0,1ընկուզենի, 0,1փռչնի:

Անտառտնտեսությունում երիտասարդ անտառները կաղմում են ընդհանուր անտառաձածկի ընդամենը 3,1%-ը հասուն և գերհասուն ծառուտների մակերեսը՝ 7,5%-ը, իսկ բացարձակ գերկշռում են միջին տարիքային խմբի ծառուտները:

Անտառտնտեսությունում հասուն և գերհասուն ծառուտները զբաղեցնում են ընդամենը 1304,4հա մակերես, ընդ որում հիմնական անտառկազմող տեսակներից

հաճարին՝ 87,2հա, կաղնին 14,8հա, կովկասյան բոխին՝ 313,2 հա, արևելյան բոխին 722,9հա:

Նշված տեսակների հասուն տարիքի անտառների մոտ 75%-ում առկա է սերմնային մատղաշ, իսկ սերմնային մատղաշով (բոլոր տեսակի) ապահովված է ընդամենը 262հա, այն էլ հիմնականում բոխի տեսակով:

## **Քաժին 4. Անտառտնտեսության հարակից համայնքների սոցիալ-տնտեսական բնութագիրը**

### **4.1. Ընդհանուր տեղեկություններ**

Անտառտնտեսության հարակից համայնքներն են՝ Լոռու մարզի Ալավերդի խոշորացված համայնքը՝ ք. Ալավերդի, գ. Աքրրի, Կաճաճկուտ, Հաղպատ և Զիլիզա և Ախթալա խոշորացված համայնքը՝ ք. Ախթալա և Շամլուղ, գ. Ճոճկան, Մեծ Այրում և Նեղոց, ընդ որում Ալավերդի քաղաքի և Աքրրի, Կաճաճկուտ, Հաղպատ ու Նեղոց գյուղերի վարչական տարածքում գտնվում է անտառտնտեսության մոտ 20%-ը (աղյուսակ 20, քարտեզ 14):

### **Աղյուսակ 20. Ընդհանուր տվյալներ բնակավայրերի վերաբերյալ**

Համայնքներ	Հեռավորությունը մարզկենտրոնից, կմ	Հեռավորությունը երևանից, կմ	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Մշտական բնակչությունը 01.01.2020թ. դրությամբ	Տնային տնտեսությունների քանակը	Գազաֆիկացում
Ալավերդի	44	167	750	13863	6350	+
Աքրրի	50	180	1375	2801	825	+
Կաճաճկուտ	57	171	1420	353	105	-
Հաղպատ	56	170	970	926	209	+
Զիլիզա	76	190	1120	115	65	-
Ախթալա	65	179	770	6670	2189	+
Շամլուղ	71	186	1235	630	313	-
Ճոճկան	72	187	830	2034	408	+
Մեծ Այրում	68	182	680	986	282	+
Նեղոց	60	175	670	302	152	-
<b>Ընդամենը</b>				28680	10989	

Բնակավայրերը հիմնականում գտնվում են 700-1400մ բացարձակ բարձրությունների վրա, առկա են ընդարձակ դաշտեր և ալպյան մարգագետիններ, ինչը նպաստավոր է դաշտավարության և անասնապահության զարգացման համար:

Գյուղական բնակավայրերը հիմնականում գտնվում են զարգացվածության գրեթե նույն մակարդակի վրա և բնութագրվում են բնակչության ցածր կենսամակարդակով, աշխատատեղերի բացակայությամբ, գյուղատնտեսական ենթակառուցվածքների ոչ բավարար վիճակով: Անտառամերձ բնակավայրերի բնակչության մեծ մասի

կախվածությունն անտառից չի նվազում և շարունակվում է բնափայտային ռեսուրսների չկարգավորված օգտագործումը:

Համայնքների տեղական ընթացիկ ծախսերի ֆինանսավորման հիմնական աղբյուրը համայնքների բյուջեներն են, ընդ որում համայնքները կարողանում են ինքնուրույն հոգալ իրենց ընթացիկ ծախսերի միայն փոքր մասը և այս հարցում մեծապես կախված են պետական աջակցությունից:

#### **4.2. Աշխատանքային միգրացիա**

Ուսումնասիրված համայնքներում մեծ է աշխատանքային միգրացիայի խնդիրը: Վերջին տարիների ընթացքում արձանագրվել է աշխատուժի արտահոսքի շարունակական աճ, ընդ որում մեկնողների մեծ մասը երիտասարդ տարիքի արական սեռի ներկայացուցիչներն են: Միգրացիան առավել մտահոգիչ է սոցիալական տեսանկյունից: Ընտանիքի գլխավոր աշխատողի բացակայության պարագայում տնտեսության կենցաղի կազմակերպման և երեխաների դաստիարակության ամբողջ հոգսն ընկնում է կանանց վրա:

#### **4.3. Սոցիալական ծառայություններ և ենթակառուցվածքներ**

Համայնքներն աչքի չեն ընկնում սոցիալական ենթակառուցվածքների զարգացվածության բարձր մակարդակով:

Համայնքների մեծ մասում գործում են միջնակարգ և ավագ դպրոցներ, սակայն աշակերտների թիվը նվազման միտում ունի: Դա պայմանավորված է ինչպես ծնելիության անկմամբ, այնպես էլ դեպի քաղաքներ երիտասարդ ընտանիքների արտահոսքով: Սա շատ լուրջ խնդիր է համայնքների համար:

Փոքր համայնքներն ունեն բուժկետեր, համեմատաբար խոշոր համայնքներում գործում են ամբուլատոր ծառայություններ, իսկ բնակչության զգալի մասը հիմնականում օգտվում է Ախթալայի և Ալավերդու համապատասխան ծառայություններից:

Բնակավայրերում մշակույթային իրադաճությունները հազվադեպ են: Երբեմն կազմակերպվում են համերգներ, հանդիսություններ տոների առիթով, ներկայացումներ և այլն: Մշակութային միջոցառումների անցկացումը կարևոր նշանակություն ունի համայնքների համար սոցիալական և տնտեսական առումով: Այդպիսի միջոցառումները կարող են տուրիստների և այցելուների լրացուցիչ հոսք և հետևաբար համայնքների համար լրացուցիչ եկամուտներ ապահովել:

#### **4.4. Տրանսպորտ և ճանապարհներ**

Տրանսպորտը և ճանապարհները հետազոտված համայնքների համար կենսական նշանակություն ունեցող խնդիրներից է: Ճանապարհների վիճակը հիմնականում բավարար է, բայց շատ են միջգյուղային ոչ ասֆալտապատ ճանապարհները: Մեծ

խնդիր է նաև միջհամայնքային տրանսպորտի բացակայությունը: Ձմռան ամիսներին որոշ բնակավայրեր հասանելիության խնդիրներ են ունենում:

#### 4.5. **Գյուղատնտեսություն**

Անտառտնտեսության հարակից համայնքներում գյուղատնտեսության վիճակը բավարար չէ՝ ոռոգվող հողատարածքների սակավություն, ֆիզիկապես և բարոյապես մաշված գյուղատնտեսական մեքենասարքավորումներ, հողագործության մեջ ներդրումներ անելու համար սկզբնական կապիտալի բացակայություն, գյուղմթերքի պահպանման ենթակառուցվածքների անբավարարություն և այլն:

Բանջար-բոստանային կուլտուրաների արտադրությունը հիմնականում ուղղված է տնտեսությունների սեփական կարիքների բավարարմանը և աճեցվում են ոռոգվող տնամերձ հողամասերում, մասամբ սեփականաշնորհված հողամասերում: Զբաղվում են նաև հացահատիկի և կարտոֆիլի մշակությամբ:

Համեմատաբար աշխույժ է անասնապահությունը: Համայնքներն այդ ճյուղի զարգացման պոտենցիալ ունեն, որն առաջին հերթին պայմնավորված է արոտավայրերի առկայությամբ: Սակայն ոլորտում առկա են որոշակի խնդիրներ, որոնք ընդհանուր են ՀՀ գրեթե բոլոր գյուղական համայնքների համար: Դրանց շարքում կարելի է նշել կենդանական ծագման արտադրանքի ոչ կայուն շուկան, հեռագնա արոտավայրերի ճանապարհների վատ վիճակը, դրանց մեծ մասում ջրարբիացման խնդիրը, մոտակա արոտավայրերի գերարածեցումը, պարբերաբար կրկնվող համաճարակները և այլն:

Համայնքներում գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրների մեծ մասը պայմնավորված է համապատասխան ենթառագվածքների բացակայության կամ դրանց վատ վիճակի հետ, դրանց մեծ մասը մնացել են դեռևս խորհրդային ժամանակներից և հիմնականում ֆիզիկապես և բարոյապես մաշված են ու չեն կարող նպաստավոր լինել արդյունավետ գյուղատնտեսության վարման տեսանկյունից:

Գյուղատնտեսական մեքենասարքավորումները բնակավայրերում հիմնականում նորացման կարիք ունեն:

#### 4.6. **Անտառամերձ համայնքների փայտանյութի պահանջարկ և թափուկ բնափայտի հաշվարկ**

Անտառտնտեսության շրջակա համայնքները հիմնականում տեղաբաշխված են անտառտնտեսության անտառներին անմիջական 5կմ-ոց գոտում, ընդհանուր հաշվով 10 բնակավայրերում՝ 10989 ծուխ, ընդ որում Ալավերդի, Ախթալա և Շամլուղ քաղաքներում՝ 8852 ծուխ, գյուղական բնակավայրերում՝ 2137 ծուխ: 4 բնակավայր դեռևս գազաֆիկացված չէ, իսկ որոշները ոչ լրիվությամբ են գազաֆիկացված: Բնակչության ջեռուցման աղբյուրում դեռևս գերակշռում է վառելափայտը:



Ջեռուցման փայտի նվազագույն պահանջարկը գնահատվում է ընդհանուր հաշվով մոտ 57000խտմ<sup>3</sup> /մոտավոր հաշվարկը՝ քաղքային բնակավայրերում 1 ծխին 4,5, գյուղական բնակավայրերում 8 խտ մ<sup>3</sup>:

Անտառտնտեսության հաշվարկային հատատեղային ծավալները տարեկան միջին 2890խտմ<sup>3</sup> է:

Դաշտային գույքագրման ընթացքում հաշվարկվել է ինչպես անտառտնտեսության անտառներում բնական թափուկ, այնպես էլ ապօրինի հատումների հետևանքով անտառում մնացած հիմնականում մանր տրամագծերի (4-12սմ) բնափայտի պաշարները, որը գնահատվել է շուրջ 40000խտմ<sup>3</sup>, ընդ որում բնափայտի քանակական և որակական գնահատման նկարագիրը հետևյալն է.

1. 20000մ<sup>3</sup> (50%) – հիմնականում 4 և ավել տարիների վաղեմությամբ, նույն թվում նաև նախկինում քամատապալից մնացած, ինչպես նաև բարձր թեքությունների վրա գտնվող, բացակայում են ճանապարհները, հիմնականում գտնվում են քայքայման փուլում, կորցրել են անհրաժեշտ որակական հատկանիշները և ենթակա չեն իրացման:

2. 1200մ<sup>3</sup> (30%) - գտնվում են ճանապարհներից մեծ հեռավորության վրա ցրված վիճակում, 1հա-ում 5-10մ<sup>3</sup> պաշարով, նաև սահմանայի շերտում, ինչպես նաև դժվարամատչելի տեղանքներում և արտահանման համար պահանջվում է տեխնիկական և նյութական մեծ ներդրումներ, ինչը բնակչությանը հասանելի չէ:

3. 8000մ<sup>3</sup> (20%) - վերջին տարիների գոյացած բնական թափուկի, ինչպես նաև պլանային և ապօրինի հատումներից մնացած և տեխնիկական հատկությունները դեռևս պահպանած հիմնականում մանր չափերի բնափայտն է, ցրված անտառտնտեսության ողջ տարածքում, որից որպես վառելիքայտ օգտվում է ազգաբնակչությունը:

Յուրաքանչյուր տարի անտառտնտեսության անտառներում առաջացած բնական թափուկը կազմում է մոտ 8700մ<sup>3</sup> (անտառածածկի 1հա-ի հաշվով մոտ 0,50մ<sup>3</sup>):

## **Բաժին 5. Կենսաբազմազանության պահպանություն**

Հայաստանը գտնվում է Կովկասի էկոտարածաշրջանում: Այն բարձր լեռնային երկիր է, որտեղ առանձնացվում են 5 լանդշաֆտային տիպեր՝ կիսաանապատային, տափաստանային, անտառային, ենթալպյան և ալպյան մարգագետնային:

Երկրի ոչ մեծ տարածքում (մոտ 30000կմ<sup>2</sup>) աճում են շուրջ 3800 տեսակ անոթավոր բույսեր, 428 հողային և ջրային ջրիմուռներ, 399 մամուռներ, շուրջ 4500 սնկեր, 464 քարաքոսեր, բնակվում են 549 ողնաշարավոր և շուրջ 17200 տեսակ անողնաշար կենդանիներ: Հայաստանի կենսաբազմազանությունն աչքի է ընկնում բարձր էնդեմիզմով՝ մոտ 500 կենդանատեսակ (ֆաունայի շուրջ 3%-ը) և 144 բուսատեսակ (ֆլորայի 3,8%-ը) համարվում են Հայաստանի էնդեմիկներ: Հայաստանի բույսերի Կարմիր գրքում ընդգրկված են 452 տեսակ, որը կազմում է ամբողջ ֆլորայի

11,89%: Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված են 308 տեսակ՝ 155 անողնաշար և 153 ողնաշարավոր: Բարձրակարգ բույսերի խտությամբ Հայաստանն աշխարհում գրավում է առաջնակարգ տեղերից մեկը՝ յուրաքանչյուր 1000կմ<sup>2</sup> տարածքում աճում է մոտ 107 տեսակ: Բույսերի մոտ 2000 տեսակ օժտված է սննդային, կերային, դեղատու, ներկատու, եթերայուղատու, մեղրատու, խեժատու հատկանիշներով, մի շարք կենդանիներ՝ մորթատու, մսատու և այլ հատկանիշներով:

Արժեքավոր 35 բուսատեսակներ իսպառ անհետացել են Հայաստանի տարածքից, իսկ այժմ անհետացման եզրին են գտնվում մի շարք բուսատեսակներ, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Հայաստանի տարածքն աչքի է ընկնում տեսակառաջացման ակտիվությամբ: Միայն վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանի տարածքում նկարագրվել է գիտության համար 50-ից ավելի նոր տեսակներ:

<b>Ամբողջը</b>		358,0										69592	5480	4666	762	3904

Նախատեսվել է նաև այլ հատումներ՝ ընդամենը 134,3 հեկտարի վրա, հատվածներում ընդհանուր պաշարը է 21820խտմ<sup>3</sup>, որից նախատեսվում է հատել ընդհանուր 1870խտմ<sup>3</sup>, նույն թվում իրացվողի պաշարը՝ 1623խտմ<sup>3</sup>, շինափայտը՝ 309մ<sup>3</sup> և վառելափայտը՝ 1314խտմ<sup>3</sup> (աղյուսակ 25):

**Աղյուսակ 25. Նախատեսվող այլ հատումների ծավալները 2020-2029թթ**

Անտառավտուրություն	Քառակուսու №	Հատվածի №	Մակերեսը, հա	Կորմարդրություն, կանգի թեքություն	Ծովի մակերևույթից բարձրությունը, մ	Շարահարկը	Մատղաշի քանակություն	Ծառատի կազմը	Բոնիտեղը	Լրիվությունը	Տարիքը	Հատվածի պաշարը, մ <sup>3</sup>	Հատման համար նախատեսվող պաշարը, մ <sup>3</sup>	Իրացվող	որից	
															Շինափայտ	Վառելափայտ
Շամլուղի	3	2	11,9	Հս-ամ 30	1575	1	3500 /2,5	7բ2հ1կ առ. ծառ. կ,բ,հ	4	0,6	90 160	1790 120	150	135	25	110
	9	13	13,7	Ալ 30	1560	1	4000 /1,5	5հ3բ2կ+տծ+ուռ առ. ծառ. կ,բ,հ	4	0,6	90 160	2330 160	180	155	30	125
	9	14	5,1	Հվ-ամ 25	1450	1	4000 /1,5	6բ3կ1թխ+տծ+խծ+ուռ առ. ծառ. բ,կ	3	0,5	80 160	610 80	100	85	10	75
	9	18	15,8	Հս-ալ 15	1475	1	5000 /2	4կ4հ2բ առ. ծառ. կ,հ	4	0,6	90 170	2210 200	200	170	30	140
	9	22	5,8	Հս-ալ 15	1500	1	3000 /2	7բ3կ+հ+թղ+կոս+ուռ առ. ծառ. կ,բ,թխ	3	0,6	70 160	810 80	100	85	20	65
	10	5	5,3	Հս-ամ 30	1450	1	3000 /2	4հ4բ2կ+թխ+հգ+տծ առ. ծառ. կ,բ,հ	3	0,6	90 150	950 60	80	68	15	53
	11	18	12,2	Հս-ամ 20	1450	1	3000 /2	6հ3բ1կ առ. ծառ. կ,բ,հ	4	0,6	100 160	2070 120	150	135	30	105
	11	29	11,1	Հս 25	1620	1	4000 /2	6բ2կ2հ+թխ+կոս+տծ առ. ծառ. կ,բ,հ	4	0,6	90 150	1670 170	200	170	40	130
	12	10	10,4	Հս-ալ 20	1285	1	4000 /2	6բ3հ1կ+թխ առ. ծառ. կ,բ,հ	3	0,6	80 160	1560 100	150	135	20	115
	12	19	5,6	Հս-ալ 20	1370	1	4000 /2	7բ2կ1հ+թխ առ. ծառ. կ,բ,հ	3	0,5	90 150	730 70	100	85	15	70
	13	31	14,5	Հվ 20	1480	1	3000 /1,5	7կ3բ+կս+տծ առ. ծառ. կ,բ,հ	3	0,6	90 160	2470 150	200	170	34	136
	13	32	6,4	Ամ 20	1515	1	3000 /1,5	5կ4բ1հ+թխ+տծ+կոս+հգ առ. ծառ. կ,բ,հ	3	0,6	90 160	1090 80	100	85	15	70
	13	33	16,5	Հվ-ամ 20	1545	1	3000 /1,5	6կ3բ1հ+թխ+կոս+թղ առ. ծառ. կ,բ,հ	4	0,5	90 160	1980 160	160	145	25	120
<b>Ընդամենը</b>			134,3									21820	1870	1623	309	1314

**7. 2. 4 Նախագծված անտառօգտագործման ծավալներն ըստ հատման տեսակների**

Ջիլիզայի անտառտնտեսությունում նախատեսված բոլոր հատումների ընդհանուր ծավալը 1658,6հա-ի վրա կազմում է 29688խտմ<sup>3</sup>, այդ թվում իրացման ենթակա անտառանյութի պաշարը 24549մ<sup>3</sup> է, որից շինափայտը՝ 4024մ<sup>3</sup>:

Ըստ հատման տեսակների՝ խնամքի հատումները կազմում են հատումներ նախատեսած մակերեսի 70,3%-ը և հատման նախատեսած պաշարի 74,6%-ը, սանիտարական հատումները համապատասխանաբար 21,6% և 18,9%-ը, իսկ այլ հատումները (առանձին ծառերի հատում) 8,1% և 6,5%:

Ընդհանուր անտառօգտագործման մակերեսների 40,6%-ը և հատման ենթակա պաշարի 36,9%-ը նախատեսվում է Շամլուղի անտառապետությունում,

համապատասխանաբար 31,8% և 32,4%-ը Խոժոռնու, 12,9% և 15,0%-ը Ճոճկանի, 7,8% և 8,7%-ը Ախքյորփու և 6,9% և 7,0%-ը Բերդաձորի անտառապետություններում (աղյուսակ 26, 27):

**Աղյուսակ 26. Ամփոփագիր անտառօգտագործման նախատեսած ծավալների ըստ հատման տեսակների 2021-2030թթ.**

Հատման տեսակները	Անտառօգտագործման ծավալները					
	Մակերեսը (հա/%)	Հատվածներում ընդհանուր պաշարը	Հատման նախատեսած պաշարը, խտմ <sup>3</sup>			
			Ընդհանուր	Այդ թվում իրացման ենթակա	որից	
		շինափայտ			վառելափայտ	
Խնամքի հատումներ	1166,3	172453	22348	18260	2878	15505
	70,3		74,6			
Սանիտարական հատումներ	358,0	69592	5470	4666	837	3829
	21,6		18,9			
Այլ հատումներ	134,3	21820	1870	1623	309	1314
	8,1		6,5			
Ամբողջը	1658,6	263865	29688	24549	4024	20648
	100		100			

**Աղյուսակ 27. Ամփոփագիր անտառապետությունների անտառօգտագործման նախատեսած ծավալների 2021-2030 թթ.**

Անտառապետություններ	Անտառօգտագործման ծավալները					
	Մակերեսը, (հա/%)	Հատվածներում ընդհանուր պաշարը	Հատման նախատեսած պաշարը, խտ. մ <sup>3</sup>			
			Ընդհանուր (խտ. մ <sup>3</sup> /%)	Այդ թվում իրացման ենթակա	որից	
		շինափայտ			վառելափայտ	
Ախքյորփի	129,6	26910	2505	2116	325	1791
	7,8		8,7			
Խոժոռնի	527,4	78559	9345	7939	1226	6713
	31,8		32,4			
Բերդաձորի	113,8	14580	2017	1715	192	1523
	6,9		7,0			
Ճոճկանի	214,7	31779	5165	3689	597	3215
	12,9		15,0			
Շամլուղի	673,1	112037	10660	9090	1684	7406
	40,6		36,9			
Ամբողջը	1658,6	263865	29688	24549	4024	20648
	100		42,9			

**7.3 Ոչ բնափայտային անտառօգտագործում**

Անտառկառավարման պլանում բնափայտային արտադրանքից զատ կարևորում է նաև անտառի ոչ բնափայտային արտադրանքը, որը ամրագրված է նաև Հայաստանի Անտառային Օրենսգրքում (2005թ): Համաձայն օրենսգրքի 35-րդ հոդվածի՝ անտառներում, բացի բնափայտի մթերումից, կարող են ի կատար ածվել հետևյալ անտառօգտագործման տեսակները.

- երկրորդական անտառանյութի (կոճղեր) մթերում



- կողմնակի անտառօգտագործում (խոտհունձ, անասունների արածեցում, մեղվափեթակների տեղադրում, վայրի պտղի, ընկույզի, հատապտղի, սնկերի, դեղաբույսերի և տեխնիկական հումքի հավաքում)
- կենդանական աշխարհի վերարտադրության կազմակերպման և օգտագործման նպատակներով անտառօգտագործում
- գիտահետազոտական նպատակներով անտառօգտագործում
- մշակութային-առողջարարական սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակներով անտառօգտագործում:

Նշված անտառօգտագործման ձևերից տեղի բնակչության համար առանձնակի կարևորվում է անտառի կողմնարդյունքը:

Անտառտնտեսության անտառներում պտուղ-հատապտուղները հիմնականում ստացվում են ենթանտառից, որի գնահատումը կատարվել է հիմք ընդունելով անտառկառավարման պլանների մշակման հրահանգը, համաձայն որի, ենթանտառը որոշակի անտառամասում խտության աստիճանով դասակարգվում է՝

1. խիտ, երբ տարածքի 50 %-ից ավելին է ծածկված թփատեսակներով,
2. միջին խտության, երբ տարածքի 10-49%-ն է ծածկված թփատեսակներով,
3. նոսր, երբ տարածքի 10%-ից պակասն է ծածկված թփատեսակներով

Որպես օրինաչափություն՝ ենթանտառը հիմնականում կազմավորված է թփերի խառը տեսակներով, իսկ մակերեսները գնահատվել են թփերի կազմում գերակշռող տեսակներով:

Գույքագրման ընթացքում հաշվարկվել և քարտեզագրվել են անտառային պտղատու և հատապտղային տեսակների տարածվածությունը և հաշվարկային բերքը՝ ըստ անտառպետությունների և հատվածների: Գնահատումը կատարվել է դաշտային ուսումնասիրության և փորձագիտային եզրակացության, ինչպես նաև անտառտնտեսության համապատասխան մասնագետների և պահաբաժինների անտառապահների հետ քննարկումների արդյունքներով, իսկ ավելի հավաստի արդյունքների ստացման համար կպահանջվի ևս 2-3 տարիների աշնանային ուսումնասիրություններ:

Դաշտային գույքագրման արդյունքներով՝ անտառային պտուղ-հատապտուղներից ակնկալվող հաշվարկային մոտավոր բերքը գնահատվել է 3805,6 հեկտարի վրա տարեկան 167180կգ, որում գերակշռում են անտառային տանձը, ընկուզը և մասուրը: Հաշվարկային տնտեսական բերքի ընդհանուր քանակությունը մեծ չէ և անտառտնտեսության կողմից զգալի ծավալներով իրացումը իրատեսական չէ այն հիմնավորմամբ, որ մի կողմից անտառամերձ համայնքների բնակիչները օգտվում են ՀՀ անտառային օրենսգրքի 44-1 հոդվածով ընձեռնած իրավունքից՝ ազատորեն առանց որեւէ թույլտվության գտնվելու անտառներում հանգստի և անձնական օգտագործման նպատակով վայրի պտուղ-հատապտուղներ հավաքելու համար, սակայն իրականում հավաքում են անձնական կարիքներից շատ ավելի, իսկ հաշվառումը գործնականում հնարավոր չէ իրականացնել, հաշվի առնելով այն

հանգամանքը, որ ընտանիքի անդամները կարող են հավաքը իրականացնել տարբեր անտառամասերում, մյուս կողմից ոչ քիչ տարածքներ գտնվում են սահմանային շերտում (աղյուսակ 28, քարտեզ 18):

**Աղյուսակ 28. Անտառտնտեսությունում պտուղ-հատապտուղների մակերեսների և պաշարի (հաշվարկային տնտեսական բերք) բաշխվածությունը**

№	Անվանումը	Անտառպետություններ											
		Ախքյորփիի		Խոժոռնիի		Բերդաձորի		Ճոճկանի		Շամլուղի		Ընդամենը	
		հա	կգ	հա	կգ	հա	կգ	հա	կգ	հա	կգ	հա	կգ
1.	Իծկոտ	4,5	18	17,1	80	6,6	36	-	-	28,6	120	56,8	254
2.	Սնդրիկ	1137	900	957,3	700	207,2	410	302,3	320	636,5	550	3240,3	2880
3.	Ծներբեկ	2,3	5	2,6	5	34,7	50	54,3	100			93,9	160
4.	Եղինջ	106,1	840	89,4	580	79,3	790	97,6	680	51,6	410	318,2	3300
5.	Ուրց (չոր)	222,2	180	40,5	35	70,4	60	626,8	310	584,7	290	1544,6	875
6.	Դաղձ (չոր)	14,2	20	22,9	44	-	-	27,4	44	28,2	56	92,7	164
<b>Ընդամենը</b>		<b>1486,3</b>	<b>1963</b>	<b>1129,8</b>	<b>1444</b>	<b>398,2</b>	<b>1346</b>	<b>1108,4</b>	<b>1454</b>	<b>1329,6</b>	<b>1426</b>	<b>5452,3</b>	<b>7633</b>

Ջիլիգայի անտառտնտեսության տարածքում հանդիպող ուտելի խոտաբույսերից շատերը վաղուց կիրառվում են մարդու կողմից և օգտագործվում են ինչպես հում, այնպես էլ վերամշակված ձևով՝ աղցանների, թթու-մարինադների, հրուշակեղենի, ոգելից խմիչքների, թեյերի, հյութերի և այլնի պատրաստման ժամանակ:

Բնակչության կողմից սննդի համար առավել օգտագործվող խոտատեսակների մոտավոր պաշարները քարտեզագրվել և գնահատվել են դաշտային ուսումնասիրությունների, փորձագիտական եզրակացության և անտառտնտեսության համապատասխան աշխատակիցների հետ քննարկումների արդյունքում: Ընդհանուր 5452,3հա տարածքներում գնահատվել է ընդհանուր 7633կգ մոտավոր բերք (աղյուսակ 29, քարտեզ 19):

**Աղյուսակ 29. Անտառտնտեսությունում ուտելի խոտաբույսերի մակերեսների և պաշարի (հաշվարկային տնտեսական բերք) բաշխվածությունը**

№	Պտուղ-հատապտուղներ	Անտառպետություն											
		Ախքյորփի		Խոժոռնի		Բերդաձորի		Ճոճկանի		Շամլուղի		Ամբողջի	
		հա	կգ	հա	կգ	հա	կգ	հա	կգ	հա	կգ	հա	կգ
1	Ընկույզ կանաչ			36,2	5068	215,4	25800	1,9	300			253,5	31168
2	Մասուր	37,3	932	164,9	3298	218,4	4368	395,4	5931	766,8	7668	1582,8	22197
3	Մոշ	504,1	6553	444,2	5775	88,4	1150	51,0	750	477,4	6206	1565,1	20434
4	Մոռ	20,8	300							32,4	400	53,2	700
5	Մամուխ							6,0	480	4,2	320	10,2	800
6	Հոն			14,9	3000	81,2	12180					96,1	15180
7	Ջկեռ									5,7	100	5,7	100
8	Խնձոր			14,0	2000	5,8	1000			17,5	2500	37,3	5500
9	Տանձ	136,3	13600	11,4	11400					54,0	8100	201,7	33100
<b>Ընդամենը</b>		<b>698,5</b>	<b>21385</b>	<b>685,6</b>	<b>30541</b>	<b>609,2</b>	<b>44498</b>	<b>454,3</b>	<b>7461</b>	<b>1358,0</b>	<b>25294</b>	<b>3805,6</b>	<b>129179</b>

## **Բաժին 8. Էկոհամակարգային ծառայությունների գնահատում**

Էկոհամակարգային ծառայությունները օգուտներ են, որոնք մարդիկ ստանում են էկոհամակարգերից՝ բարիքների և ծառայությունների տեսքով:

Ըստ TEEB-ի (Էկոհամակարգերի և կենսաբազմազանության էկոնոմիկա, <http://www.teebweb.org/>) մեթոդաբանության՝ անտառների էկոհամակարգային ծառայությունները դասակարգվում են հետևյալ 4 կատեգորիաների (դասերի)։

- 1) օգտակար արտադրանքի տրամադրման (ռեսուրսային, ապահովող/մատակարարման) ծառայություններ, էկոհամակարգային ծառայություններ, որոնք բնութագրում են էկոհամակարգերի կենսագործունեության նյութական և էներգետիկ արդյունքները (արգասիքները),
- 2) կարգավորող ծառայություններ, էկոհամակարգային ծառայություններ, երբ էկոհամակարգերը գործում են որպես կարգավորիչներ,
- 3) մշակութային (հոգևոր) ծառայություններ, ներառում է ոչ նյութական գեղագիտական, հոգևոր և ֆիզիոլոգիական բարիքները (օգուտները), որոնք մարդիկ ստանում են էկոհամակարգերից կամ էկոհամակարգերի հետ շփման արդյունքում,
- 4) նպաստող ծառայություններ - ծառայություններ, որոնք անհրաժեշտ են էկոհամակարգային մյուս ծառայությունների գործարկման (ապահովման, տրամադրման, մատուցման) համար:

Ջիլիգայի անտառտնտեսության համար կատարվել է կարգավորող ծառայություններից ածխաթթու գազի կլանման, ջրակարգավորող ծառայությունների գնահատում, մատակարարող ծառայություններից սննդի տրամադրման ծառայության գնահատում, մշակութային (հոգևոր) ծառայություններից էկոտուրիզմի ծառայության գնահատում:

### **8.1 Ածխաթթու գազի կլանման ծառայության գնահատում**

Ածխաթթու գազի կլանման (կլիմայի փոփոխության մեղմացման) ծառայությունը հանդիսանում է անտառի կարևորագույն կարգավորող ծառայություններից մեկը:

Անտառային էկոհամակարգերում ածխածնի պարունակության հաշվարկի ժամանակ օգտագործված են հետևյալ կատեգորիաները և բնորոշումները.

- Վերգետնյա կենսազանգված - հողի մակերեսին գտնվող կենսազանգվածն է: Այն ներառում է բունը, կոճղը, ճյուղերը, կեղևը, սերմերն ու տերևները
- Ստորգետնյա կենսազանգված - հողի մակերեսից ներքև գտնվող կենդանի արմատների ամբողջ կենսազանգվածն է: Չեն հաշվվում 2մ-ից պակաս տրամագծով արմատները, քանի որ դրանք հնարավոր չէ փորձնական եղանակով տարբերել հողի օրգանական նյութից կամ անտառային թափվածքից
- Չորացած և տապալված բնափայտի կենսազանգված - ամբողջ անկենդան բնափայտային կենսազանգվածն է առանց անտառային թափուկի, կամ այն

հաշվվում է որպես չորացած կամ տապալված թափուկ, որը հողի վրա է կամ ծածկված է հողի շերտով: Չորացած կամ տապալված բնափայտը ներառում է հողի մակերեսին գտնվող բնափայտը, մեռած արմատները և 10սմ և ավելի տրամագծով կոճղերը:

- Անտառային թափուկ - 10սմ-ից պակաս տրամագծով բնափայտի անկենդան կենսազանգվածում, որը գտնվում է քայքայման տարբեր փուլերում, հանքային կամ օրգանական հողի մակարդակում: Այս կատեգորիայի մեջ են մտնում անտառային թափուկը, հումուսային և գոլորշառաջացնող շերտերը:

Կենսազանգվածի պաշարը և ածխածնի կուտակումը գնահատվել է կլիմայի փոփոխության խնդիրներով զբաղվող միջազգային խմբի կողմից մշակված ձեռնարկում առաջարկված մեթոդոլոգիական ցուցումների համաձայն ([www.fao.org/forestry](http://www.fao.org/forestry)): Բների, վերգետնյա և ստորգետնյա կենսազանգվածի հաշվարկման համար օգտագործվել են կենսազանգվածի հաստատուն նշանակությունները և արմատ/ընձյուղ հարաբերակցությունը:

Այս մեթոդաբանությամբ հաշվարկել ենք Ջիլիզայի անտառտնտեսության անտառներում կուտակված ածխածնի քանակը, որը ներկայացվում է ստորև բերված աղյուսակներում:

**Աղյուսակ 30. Ջիլիզայի անտառտնտեսության՝ ըստ գերակշռող ծառատեսակների կենսազանգվածը (2020թ.)**

Տեսակը	Ծառուտի պաշարը (հազ.խմ)	Բազիսային խտությունը (տ/խմ)	Բների կենսազանգվածը (հազ. տ)	Կենսազանգվածի ամման գործակիցը	Կենսազանգվածը (հազ. տ)	Արմատ/ընձյուղ հարաբերակցություն	Կենսազանգվածը (հազ. տ)
Հաճարի	1128,7	0,538	607,2	1,4	1742,9	0,23	400,9
Կաղնի	462,0	0,57	263,3				
Բոխի	479,3	0,64	306,7				
Սոճի	7,5	0,415	3,1				
Թխկի	1,6	0,648	1,0				
Հացի	12,1	0,63	7,62				
Ղաժի	69,3	0,64	44,3				
Այլ տեսակներ	26,1	0,45	11,7				
<b>Ընդամենը 2020թ.</b>	<b>2186,6</b>		<b>1244,9</b>				
<b>Չորացած և տապալված բնափայտի կենսազանգված</b>	<b>40</b>	<b>0,49</b>					<b>19,6</b>

**Աղյուսակ 31. Կենդանի և անկենդան կենսազանգվածում կուտակված ածխածնի հաշվարկը**

Կատեգորիա	Կենսազանգվածի պաշարը հազ. տոննա	ՔՅՈՒ ԿՓՄԽ գործակիցը	Ածխածնի պարունակությունը հազ. տոննա
Վերգետնյա կենսազանգված	1742,9	0,48	836,59
Ստորգետնյա կենսազանգվածում	400,9	0,47	188,42
Չորացած և տապալված բնափայտի կենսազանգված	19,6	0,46	9,02

**Աղյուսակ 32. Հողում (30սմ) ածխածնի կուտակման հաշվարկը (հազ. տոննա)**

Հողի տիպը	Մակերեսը, հա	Ածխածնի կուտակումը՝ տոննա 1հա-ի վրա	Ածխածնի կուտակումը հազ. տոննա
BAFM հողերում	17,8	38	676,4

**Աղյուսակ 33. Անտառային թափվածքում ածխածնի կուտակման հաշվարկը (հազ. տոննա)**

Անտառի մակերեսը, հազ. հա	Ածխածնի պարունակությունը անտառային թափվածքում՝ տոննա 1հա-ի վրա (թափվածքի հաստությունը 10սմ)	Ածխածնի կուտակումը, հազ. տոննա
17,8	28,2	502,0

**Աղյուսակ 34. Անտառներում կուտակված ածխածինը (2020թ)**

Կատեգորիա	Ածխածնի պարունակությունը (հազ. տոննա)
Վերգետնյա կենսազանգվածում ածխածնի պարունակությունը	836,59
Ստորգետնյա կենսազանգվածում ածխածնի պարունակությունը	188,42
Ընդամենը՝ կենդանի կենսազանգվածում	1025,01
Չորացած և տապալված բնափայտում ածխածնի պարունակությունը	9,02
Թափվածքում ածխածնի պարունակությունը	502
Ընդամենը անկենդան կենսազանգվածում	511,02
Հողում (30սմ խորության վրա) ածխածնի պարունակությունը	676,4
Ընդամենը ածխածնի կուտակում	2212,43

Անտառտնտեսության 17408,2 հեկտար անտառաձածկ տարածքում ածխածնի կուտակումը կազմում է մոտ 2212,43 հազար տոննա, կամ 1 հեկտարի հաշվով մոտ 127,1 տոննա: Համաձայն անտառային ռեսուրսների գլոբալ գնահատման 2015 թվականի հաշվետվության, Հայաստանի անտառներում նշված ցուցանիշը գնահատվել է 1 հեկտարի հաշվով մոտ 92,4 տոննա (*FRA 2015 – Country Report, Armenia*):

Ածխածնի կուտակումը պայմանավորված է կենդանի կենսազանգվածի աճով, իսկ կորուստը պայմանավորված է անտառանյութի հատումներով, հրդեհներով, վնասատուների և հիվանդությունների հետևանքով կենսազանգվածի կորուստներով, ինչից և ստորգետնյա կենդանի կենսազանգվածը վեր է ածվում անկենդան կենսազանգվածի:

Ածխաթթու գազի կլանումը հաշվարկելու նպատակով որոշվում է հիմնական անտառկազմող և ուղեկցող ծառատեսակների միջին տարեկան աճը ( $m^3$ ), այնուհետև, հիմք ընդունելով անտառագիտական ուսումնասիրություններից նշված ծառատեսակների բնափայտի բազիսային խտության գործակիցները, զանգվածը (կենդանի կենսազանգվածը) վերածվում է չոր նյութի ( $P_o$ ): Տարբեր ծառատեսակների համար ստացված գործակիցները (բնափայտի բազիսային խտությունը) միջին կշռային մեթոդով վեր է ածվում միջին գործակցի, որոշվում է ածխածնի քանակը չոր նյութում ըստ տարբեր ծառատեսակների, որից հետո միջին կշռային մեթոդով դուրս է բերվում միջինը:

Ջիլիզայի անտառոտնտեսության անտառներում տարեկան միջին աճը կազմում է մոտ  $25416m^3$  (աղյուսակ 35):

**Աղյուսակ 35. Տարեկան միջին աճը ըստ ծառատեսակների**

Տեսակը	Տարեկան միջին աճը ( $m^3$ )	Բազիսային խտությունը ( $տ/m^3$ )	Կենսազանգվածը	ԿՓՄՄԽ (IPCC) գործակիցը	Ածխածնի կլանումը, տոննա	CO <sub>2</sub> (տ)
Հաճարենի	11296,4	0,538	6077,5	0,48		C(տ)*44/12
Կաղնի	4667,4	0,57	2660,4			
Բոխի	6851,0	0,64	4384,6			
Սոճի	174,0	0,415	72,2			
Թխկի	25,4	0,63	16,0			
Հացի	171,5	0,63	108,0			
Այլ տեսակներ	2230,3	0,45	1003,6			
Ընդամենը	25416,0		14322,3			

Անտառկառավարման պլանով նախատեսված են նաև անտառվերականգնման միջոցառումներ 297,1 հեկտարի վրա: Հաշվի առնելով նախատեսվող վերականգնման միջոցառումների բնույթը վերականգնման համար առանձնացված տարածքներում, վերգետնյա կենսազանգվածի տարեկան աճը կկազմի մոտավորապես  $1,15$  տ/հեկտար կամ  $0,552$ տ/հա ածխածին (չոր զանգվածից ածխածին կորզելու Կլիմայի փոփոխության մասնագետների միջկառավարական խմբի (ԿՓՄՄԽ-IPCC) սահմանած պահպանման գործակիցը  $0,46$  է): Համապատասխան ընձյուղ/արմատ հարաբերակցությունը  $0,23$  է: Ըստ այդմ, ածխածնի սեկվեստրացիայի աճը ամեն հեկտարի հաշվով կլինի  $0,552+0,552*0,23=0,679$  տոննա/հեկտար կամ  $2,49$  տ/հա ածխածնի երկօքսիդի համարժեք, եթե փոխակերպենք սա ածխածնի երկօքսիդի ( $0,679*44/12$ -ի):

Այսպիսով, համաձայն հաշվարկների, ածխածնի կլանման (սեկվեստրացիայի) առավելությունը 297,1 հեկտար տարածությամբ անտառների հաշվարկով կկազմի՝  $0,679*297,1=201,7$  մետրական տոննա ածխածին կամ  $2,49*297,1=739,8$  մետրական տոննա ածխածնի երկօքսիդ:

## 8.2 Սննդի տրամադրման ծառայության գնահատում

Ազգաբնակչությունը հավաքում է հիմնականում ընկույզ, հոն, տանձ, մոշ և մասուր՝ գլխավորապես անձնական և կենցաղային կարիքների համար: Այնուամենայնիվ կայուն կառավարման դեպքում անտառտնտեսության անտառները կարող են բավարարել նաև այլ տնտեսական կարիքներ:

Որպես օրինաչափություն՝ ենթանտառը հիմնականում կազմավորված է թփերի խառը տեսակներով, իսկ մակերեսները գնահատվել են թփերի կազմում գերակշռող տեսակներով:

Անտառտնտեսության տարածքում պտուղ-հատապտուղների գերակշռությամբ ծառատներից և ենթանտառից ակնկալվող տարեկան բերքը գնահատվել է մոտ 129179կգ, իսկ ընդհանուր շուկայական արժեքը հավաքման տարածքում՝ 33064,1 հազար դրամ: Իրացման մոտավոր միջին գները որոշվել է տարբեր ուսումնասիրությունների, շուկաներում և ճանապարհներին վաճառողների հետ քննարկումների արդյունքում (աղյուսակ 36,37):

### Աղյուսակ 36. Ջիլիզայի անտառտնտեսության տարածքների պտուղ-հատապտուղային տեսակների հաշվարկային մոտավոր պաշարների և մոտավոր շուկայական արժեքների

Անվանումը	Շուկայական գինը(դրամ/կգ) մատակարարի/ հավաքման տարածքում 2019թ	Տարեկան բերքը (կգ)	Ընդհանուր շուկայական արժեքը (հազ.դրամ) մատակարարի/ հավաքման տարածքում
Տանձ անտառային	110	33100	3641,0
Մասուր	250	22197	5549,2
Ընկույզ (կանաչ)	450	31168	14025,6
Խնձոր	30	5500	165,0
Մոռ	600	700	420,0
Մոշ	350	20434	7151,9
Հոն	130	15180	1973,4
Մամուխ	110	800	88,0
Ջկեռ	500	100	50,0
Ընդամենը		129179	33064,1

### Աղյուսակ 37. Ջիլիզայի անտառտնտեսության տարածքների ուտելի խոտաբույսերի հաշվարկային մոտավոր պաշարների և մոտավոր շուկայական արժեքների

Անվանումը	Շուկայական գինը(դրամ/կգ) մատակարարի/ հավաքման տարածքում 2019թ	Տարեկան բերքը (կգ)	Ընդհանուր շուկայական արժեքը (հազ.դրամ) մատակարարի/հավաքման տարածքում
Իծկոտ	1000	254	254,0
Մնդրիկ	1500	2880	4320
Ծներբեկ	2500	160	400,0
Եղինջ	800	3300	2640,0
Ուրց (չոր)	4800	875	4200,0

Անվանումը	Շուկայական գինը(դրամ/կգ) մատակարարի/ հավաքման տարածքում 2019թ	Տարեկան բերքը (կգ)	Ընդհանուր շուկայական արժեքը (հազ.դրամ) մատակարարի/հավաքման տարածքում
Դաղձ (չոր)	3000	164	492,0
<b>Ընդամենը</b>		7633	12306,0

### 8.3. Էկոտուրիզմ

Էկոտուրիզմը ճանապարհորդություն է բնության, բուսական և կենդանական աշխարհի, այնտեղ գտնվող պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրության և դրանց հետ շփման նպատակով: Էկոտուրիզմը նպաստում է բնական և մշակութային ժառանգության ճանաչմանն ու հասկանալուն և տեղի բնակչությանն այնքան շահույթ է բերում, որ մարդիկ գնահատեն ու պահպանեն շրջակա միջավայրը որպես եկամտի աղբյուր:

Էկոտուրիզմը նպաստում է էկոլոգիական գիտելիքների և տեղեկատվության տարածմանը, տարածքների էկոլոգիապես անվնաս օգտագործմանը, բնապահպանական և սոցիալ-տնտեսական համակարգերի միջև լարվածության թուլացմանը և դրանց ինտեգրմանը նպաստող գործնական և արդյունավետ միջոց:

Էկոտուրիզմի անկյունաքարերն են.

- բնական և մշակութային ժառանգության պահպանություն,
- բնապահպանական կրթություն,
- տեղի բնակչության բարեկեցության բարձրացում,

Էկոտուրիզմի խնդիրները արգելավայրում և պահպանման գոտում հետևյալն են.

#### Բնապահպանական խնդիրներ

- էկոլոգիական պահպանություն, ներառյալ կենսաբազմազանության, հողերի, օդի որակի պահպանություն, ինչպես նաև ջրհավաք ավազանների կառավարում:

#### Մշակութային խնդիրներ

- տեղական բնակչության և այցելուների մոտ շրջակա միջավայրի վերաբերյալ գիտելիքների մակարդակի և իրազեկման բարձրացում
- տեղական բնական և մշակութային ժառանգության գնահատում
- կայուն տուրիզմը տեղական և ազգային մշակույթի մաս դարձնելը

#### Սոցիալական խնդիրներ

- տեղական բնակչության ապրուստի բարելավում և որակավորման բարձրացում,
- կայուն տուրիզմի գովազդում՝ որպես այլընտրանք մասայական տուրիզմին,
- պահպանվող տարածքներ այցելելու և բավականություն ստանալու հնարավորության ընձեռնում հասարակության լայն շերտերի համար,
- տարածքների պահպանության համար աճող եկամուտների ապահովում:

Հարուստ բնությունը, մաքուր օդն ու ջուրը, բազմաթիվ պատմամշակութային կառույցների առկայությունը, օրգանական սնունդը հրաշալի նախադրյալներ են ստեղծում այս տարածքում տուրիզմի զարգացման համար:



Այստեղ հայտնաբերված են տարբեր ժամանակաշրջանների կիկլոպյան ամրոցներ, միջնադարյան քարանձավային բնակավայրեր, վաղ, միջին և ուշ միջնադարյան վանական համալիրներ և փոքրիկ մատուռներ, որոնք էապես կնպաստեն տուրիզմի զարգացմանը:

Ստորև ներկայացվում է տեղեկատվություն, Զիլիզայի անտառտնտեսության և հարակից համայնքների վարչական տարածքներում, ՀՀ կառավարության կողմից 2002թ.-ին հաստատված առավել հետաքրքրություն ներկայացնող պատմամշակութային հուշարձանների վերաբերյալ (Error! Reference source not found.38):

### Աղյուսակ 38. Պատմամշակութային հուշարձաններ

Բնակավայրը	Պատմամշակութային օբյեկտը	Հիմնման ժամանակաշրջանը	Տեղադիրքը
Ախթալա	Ամրոց	13-րդ դ.	Ախթալա կայարանի հյուսիսային մասում, Դեբեդ և Ախթալաձորերի միացման անկյունում, ժայռոտ բլրի գագաթին
	Դամբարանադաշտ	Ք. ա. 2-1հազ.	քաղաքի մեջ
	Քարայր – կացարանների համալիր		Ախթալա կայարանում
	Գյուղատեղի		քաղաքից հս-ալ, մայրուղուց աջ
Շամլուղ	Գյուղատեղի	10-րդ դար	քաղաքից հվ-ամ, «Սատանի վանք» («Շեյթան քիլիսա») վայրում
	Եկեղեցի «Սբ. երրորդություն» Եկեղեցի Ուչքիլիսա	12-16 դդ.	Եկեղեցուց 300մ ալ
	Մատուռ Սբ. Սարգիս	10-11 դդ. .	գյուղից 13կմ հվ-ամ, Լալվար լեռան գագաթին
	Կլվի բերդ	միջնադար	քաղաքից 4կմ հվ-ալ
Ախթալա գյուղ	Ամրոց	Ք. ա. 2-1հազ. , 10-13դդ.	գյուղից հվ-ամ, համանուն լեռան գագաթին
	Ամրոց Ախթալա (Պղնձահանք)	10-13դդ.	գյուղի մեջ, հրվանդանի վրա
	Վանական համալիր Ախթալա (Պղնձահանքի վանք, Մարիամ Աննայի վանք, Մեյրիման)	13-րդ դ.	
	Գյուղատեղի «Բարիտ»	9-16դդ.	Գյուղի հս-ալ կողմում
	Եկեղեցի Սբ. Գևորգ	1242-1250թթ.	գյուղի ալ մասում
Բենդիկ	Եկեղեցական համալիր	10-13դդ.	գյուղի մեջ
Ճոճկան	Եկեղեցական համալիր «Շիրթնավանք»	17դ.	գյուղից 4կմ ամ
	Մատուռ Թուխ Մանուկ	13դ.	գյուղից հվ-ալ
	Վանական համալիր «Նահատակ»	1621թ.	գյուղից 3կմ ամ, «նահատակ» վայրում
Զիլիզա	Ամրոց «Բազմաբերդ»	10-12դդ.	գյուղից 2,5-3կմ հս-ամ
	Գյուղատեղի «Խորակերտ»	միջնադար	գյուղից 4,5կմ հս-ամ
	Վանական համալիր Խորակերտ	12-13դդ.	գյուղից 4կմ հվ-ամ

Բնակավայրը	Պատմամշակութային օբյեկտը	Հիմնման ժամանակաշրջանը	Տեղադիրքը
	Խուճապի վանք	13-րդ դար	գյուղից 9կմ հվ-ամ

Տուրիստական ծառայությունների զարգացումը (ուղիներ, ձիարշավներ, քայլարշավներ, տեսարժան վայրեր, հյուրանոցային և հյուրատնային ծառայություններ և այլ) լրացուցիչ լուրջ ներդրում կարող է ունենալ համայնքային զարգացման մեջ: Ներկայումս նման ծառայություններ հիմնականում հասանելի չեն: Բոլոր համայնքներում կան տուրիստական գրավչության վայրեր, այն է՝ բնական և պատմամշակութային բազմաթիվ հուշարձաններ, ավերակներ, ձիարշավի և քայլարշավի հնարավորություններ, եկեղեցիներ և այլ տեսարժան վայրեր, սակայն այս հնարավորությունները նպատակային չեն օգտագործվում:

Էկոզբոսաշրջության զարգացման հարցում կարևոր է էկոզբոսաշրջության այնպիսի կառավարումը, որը կկանխարգելի այցելությունների հնարավոր բացասական ազդեցությունները բնական էկոհամակարգերի և տեսակների վրա: Ընդհանուր առմամբ էկոզբոսաշրջությունը կարող է ներդրում ունենալ անտառների կայուն կառավարմանը:

## **Բաժին 9. Անտառվերականգնման միջոցառումներ**

Ջիլիզայի անտառտնտեսության ներկայիս սահմաններում անտառմշակույթների հիմնման աշխատանքներ իրականացվել են դեռևս նախորդ դարի 50-ական թվականներից: 1960–70–ական թվականներին Բերդաձորի (նախկինում Սադախլի անտառապետության) տարածքում իրականացվել են անտառվերականգնման միջոցառումներ՝ ցածրարժեք ղաժուտները բարձրարժեք ամտառային և անտառային պտղատու ծառատեսակներով փոխարինելու նպատակով: Անտառային և մրգատու խառը կազմով ծառուտների ոչ քիչ տարածքներում հիմնականում ինքնակամ հատումներով հատվել են բոխի, թխկի, կաղնի ծառատեսակները, արդյունքում մնացել են պտղատու՝ հիմնականում ընկույզի և հոնի այգիներ:

2008թ. գույքագրման արդյունքներով անտառմշակույթների ընդհանուր մակերեսը առանց Շամլուղի անտառապետության գնահատվել է ընդհանուր 179,1 հա, ընդ որում անտառմշակույթների վիճակը գնահատվել է՝ լավ 22հա, բավարար 93հա և անբավարար 64,2հա:

2020թ. գույքագրմամբ պահպանված անտառմշակույթների ընդհանուր մակերեսը կազմում է 311,7 հա, նույն թվում հատուկ նշանակության անտառներում 139,8 հա, պաշտպանական նշանակության անտառներում 126,5հա և արտադրական նշանակության անտառներում ընդամենը 45,4հա:

Անտառմշակույթների ընդհանուր մակերեսի 35,9հեկտարը գտնվում է Ախքյոփու անտառապետությունում, Խոժոռնու անտառապետությունում՝ 37,2հա, Բերդաձորի

անտառպետությունում՝ 126,7հա, ճոճկանի անտառպետությունում՝ 36,4հա և Շամլուղի անտառպետությունում՝ 94,6հա:

Անտառոձակույթների վիճակը գնահատվել է լավ՝ 64,3 հա(20,6%), բավարար՝ 163հա(52,3%) և անբավարար՝ 84,4 հա(29,1%) (աղյուսակ 39):

**Աղյուսակ 39. Անտառոձակույթների մակերեսը և վճակը**

Գլխավոր ծառաթփատեսակը	Մակերեսը	Վիճակը		
		Լավ	Բավարար	Անբավարար
Սոճի	49,3	16,3	19,4	13,6
Կաղնի	19,9	4,3	8,9	6,7
Հացի	24,7	5,5	12,3	6,9
Թխկի	8,6	1,5	5,7	1,4
Խնձորենի	5,0	2,6	2,1	0,3
Ընկուզենի	150,5	25,5	83,2	41,8
Շագանակենի	4,8	–	–	4,8
Ակաղիա սպիտակ	48,9	8,6	31,4	8,9
Ընդամենը	311,7	64,3	163,0	84,4

2021-30 թվականների համար նախատեսվում են անտառհիմնման միջոցառումներ՝ ընդհանուր 297,1 հեկտարի վրա, նույն թվում անտառային բացատներում և ազատ տարածքներում(պարապուտ)՝ 62,6հա, հատված և չվերականգնված տարածքներում, ինչպես նաև անթրոպոգեն նոսրուտներում ընդհանուր 78,2հա:

Ցածր լրիվության ծառուտների լրիվության և արտադրողականության բարձրացման միջոցառումներ նախատեսվում է բնական բերականգնման միջոցառումներ ընդամենը 130,6 հեկտարի վրա, հարթաների պատրաստման եղանակով՝ լրացուցիչ սերմերի ցանքսով:

Բնական վերականգնման օժանդակման նպատակով նախատեսվում է 15000զժմ ցանկապատում, որի արդյունքում շուրջ 2500 հեկտար անտառներում կկանխվի անասունների մուտքը, ինչն էլ կնպաստի բնական վերականգնմանը:

**9.1. Անտառաճեցման պիտանելիության դասակարգում**

Անտառվերականգնման միջոցառումների նախագծման ժամանակ հաշվի է առնվել տարբեր անտառային տիպերում և հողային կատեգորիաներում բնական վերածի ընթացքը և անտառաճման պայմանները: Անտառհիմնման, ինչպես նաև ազրոտեխնիկական միջոցառումների նախագծման համար հիմք են ընդունում հողային բերրիության և անտառաճեցման պիտանելիության դասակարգումը՝

- Անտառաճեցման պիտանելիության առաջին խմբի մեջ են մտնում մինչև 20° թեքության լանջերը, հողերը հզոր կամ միջին հզորության են, մայրական ապարների ելքը մինչև 20%: Այս պայմաններում կարող են աճել արժեքավոր, արագաճ, երկարակյաց անտառային, ինչպես նաև պտղատու տեսակներ:
- Երկրորդ խմբի մեջ են ներառվում ավելի փոքր հզորություն ունեցող հողերը, համեմատաբար վատ անտառաճեցման պայմաններով, այն է միջին աստիճանի քարքարոտ, մայրական ապարների ելքը 20-40%, միջին հզորության, մինչև 35°

թեքության լանջերի վրա գտնվող տարածքները: Նշված պայմաններում բարձրարժեք տեսակները աճի և արտադրողականության տեսանկյունից զիջում են I-ին խմբին:

- Երրորդ խմբի մեջ մտնող հողային պայմաններում անտառաճեցման հնարավորությունները սահմանափակ են, որտեղ աճում են սահմանափակ տեսակների ծառաթփատեսակներ, որոնք պահանջկոտ չեն հողակլիմայական պայմանների նկատմամբ:
- Չորրորդ խմբի մեջ են մտնում հողային պայմանների այն տարբերակները, որոնք բավարար չեն անտառաճեցման համար, այսինքն շատ ուժեղ քարքարոտ են, իսկ մայր ապարի ելքը կազմում է 60% և ավելի:

## 9.2. Անտառապատման և անտառվերականգնման եղանակներ

Կախված անտառհիմնվող տարածքի տեղադրությունից, վիճակից, աճեցվող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններից, անտառապատման նպատակից նախատեսվում են սերմերի ցանքի կամ տունկի եղանակով:

Ցանքի եղանակով հիմնված տնկարկը սովորաբար ավելի երկարակյաց և կենսաբանորեն ավելի կայուն է, սակայն առաջին տարիներին մեծ է կախվածությունը բնական պայմաններից և սերմերի ծլունակությունից, բուսակները ենթակա են ոչնչացման կլիմայական պայմանների տատանումների հետևանքով, ինչպես նաև մոլախոտերի հետ միաժամանակ աճման պայմաններում ցածր է մրցակցությունը: Տնկման առավելությունը կայանում է նրանում, որ տնկիները առաջին տարիներին ավելի արագ են աճում, քանի որ իրենց դանդաղ աճման շրջանը անցել են տնկարանում, ավելի քիչ են տուժում մոլախոտերի հետ պայքարում, ինչպես նաև քիչ են վնասվում կրծողների և թռչունների կողմից:

Դաշտային ուսումնասիրության արդյունքներով, հաշվի առնելով անտառաճման պայմանները և ծառատեսակի կենսաբանական առանձնահատկությունները, ընտրվել են համապատասխան անտառվերականգնման եղանակները, հիմնման սխեմաները և հաշվարկվել են տնկանյութի ու սերմերի պահանջը:

Անտառհիմնումը հիմնականում նախատեսվում է հատկապես խրամատային եղանակով՝ կիրառելով սերմնաբուսակների տնկման և սերմերով ցանքսի եղանակը, իսկ խոշոր տնկանյութով համեմատաբար հարթ տարածքներում հիմնելու դեպքում՝ փոսային եղանակով: Խրամատների երկարությունը, կախված հողատեսքից և մայր ապարների ելքի աստիճանից, նախատեսվել է 1500-3000 գծմ/հա:

Անտառվերականգնում նախատեսվում է ցածր լրիվության ծառուտների լրիվության և արտադրողականության բարձրացման նպատակներով և իրականացվում են մայր սաղարթի տակ ցանքսի կամ տնկման եղանակներով: Որոշ հատվածներում, որտեղ բնական պատուհանները համեմատաբար մեծ են և ընդգրկում են մակերեսի ոչ պակաս 40%-ը, անտառաճեցման նպաստավոր պայմանների առկայության դեպքում, նախատեսվում է տնկման եղանակով:

Բնական վերականգնման օժանդակում իրականացվում է ցանկապատման և հանքայնացման եղանակով, նախատեսվում է հարթակներով (1x1մ) լրացուցիչ սերմերի ցանքսով, որոնց քանակությունը կախված ծառուտի լրիվությունից, մայր ապարների ելքից և առկա բնական վերածի քանակությունից, նախատեսվում է 500-1000 հատ 1 հեկտարում:

### 9.3. Անտառնշակույթների հիմնման ժամանակ նախատեսվող սխեմաները

ա) Կաղնի խոշորատէջ

- Կաղնու սերմերի ցանքսով (հիմնական տեսակ) և հացենի սովորական, թխկի սրատերև, կեչի, թխկի դաշտային և բարձր լեռնային, թեղի խորդուբորդ, լորենի՝ տնկիներով (ուղեկցող տեսակներ): Հողի նախապատրաստումը հատկապես  $15^\circ$  – ից բարձր թեքությունների վրա խրամատներով (0.5x0.35 մետր), երկարությունը սովորաբար վերցվում է 10 մետր, հորիզոնական ուղղությամբ 2 մետր ընդհատումով: Խրամատների ընդհանուր երկարությունը 1 հեկտարում, կախված մայր ապարների ելքի տոկոսից, նախատեսվել է 1500-3000 գծմ: Մեկ ցանքսատեղում առաջարկվում է 3-5 սերմ:

- Կաղնու բուսակներով (հիմնական տեսակ) և հացենի սովորական, թխկի սրատերև, թխկի դաշտային և բարձր լեռնային, թեղի խորդուբորդ, լորենի՝ տնկիներով (ուղեկցող տեսակներ) փոսերով մինչև  $15^\circ$  թեքությունների վրա, միջջարքայինը 2,5 կամ 3մ, միջբույսայինը՝ 1մ սխեմայով:

բ) Սոճու անտառնշակույթների հիմնում, առաջարկվում է հիմնել սոճու 2 և ոչ ավել 3 տարեկան սերմնաբուսակներով, որի դեպքում հողի նախապատրաստման, տնկման և խնամքի ագրոտեխնիկական պահանջների բավարարման դեպքում ապահովվում է բարձր կաչողունակություն և ընթացիկ աճ: Հաշվի առնելով սոճուտներում, հատկապես սաղարթային հրդեհների առաջացման դեպքում հրդեհաշիջման աշխատանքների մեծ դժվարությունները և հնարավոր կորուստները, հրդեհների տարածումը կանխելու նպատակով նախատեսվում է խրամատային եղանակով հիմնել 2 շարք սոճի, յուրաքանչյուր 3-րդը լայնատերևավոր ծառատեսակների տնկիներով:

գ) Փոսերով հողի նախապատրաստումը (0,5x0,5x0,5 մետր) նախատեսվում է լանջերի մինչև  $15^\circ$  թեքություններում, համեմատաբար խոշոր տնկանյութով հիմնադրման համար 3x3 սխեմայով՝ անտառային տանձենու և խնձորենու կամ անտառային կեռասենու համար:

- Անտառային տանձենին և խնձորենին փոսային եղանակով 3x3 մ սխեմայով:

դ) Անտառվերականգնումը նախատեսվում է նաև ցածր լրիվության ծառուտների լրիվության և արդյունավետության բարձրացման նպատակով: 0,3-0,4 լրիվության անտառներում մայր սաղարթի տակ համեմատաբար բարձր թեքությունների վրա խրամատներով, սերմերի ցանքսով, ինչպես նաև բնական վերականգնման օժանդակման միջոցառումներ հանքայնացման եղանակով, որի դեպքում

պատրաստում են հարթակներ (1x1 մետր), վերցվում է խաշամը, կատարվում է փխրեցում և հարթակների 4 անկյուններում ցանվում սերմերը:

Խրամատների ընդհանուր երկարությունը և հարթակների քանակությունը որոշվում է հաշվի առնելով ծառուտի լրիվությունը, առկա բնական վերածի քանակությունը և մայր ապարների ելքի տոկոսը: Այս տեսանկյուններով նախատեսվող հարթակների թիվը կազմում է 500-1000 հատ, որը ապահովում է համապատասխանաբար 2000-4000 ցանքատեղ:

Ցանկապատի պատրաստում նախատեսվում է ինչպես անտառմշակույթների հիմնում նախատեսած տարածքներում, այնպես էլ բնական վերականգնման օժանդակման միջոցառումներ նշանակած տարածքներում՝ անասունների մուտքը կանխելու նպատակով և նախատեսվում է մետաղյա փշալարով, իսկ սյունները փայտից, որոնց հիմքային մասը մշակվում է ծուֆով:

Ագրոտեխնիկական միջոցառումներից կարևորվում են անտառմշակույթիների խնամքի աշխատանքները:

Անտառագիտական հասկացողությամբ անտառմշակույթները բավարար կաչողականություն, աճ և արտադրողականություն ապահովում են հիմնման տարում և հաջորդող 4-5 տարիներին 15 անգամ կատարված խնամքի դեպքում, ընդ որում հիմնան տարում (գարուն) կատարվում է քաղհան փխրեցում 5 անգամ, 2-րդ տարում՝ 4 անգամ, 3-րդ – 3, 4-րդ – 2 և 5-րդ տարում – 1 անգամ:

Անտառմշակույթների հիմնման համար ծառերի և թփերի տեսակաշարը որոշվել է՝ հաշվի առնելով տարածաշրջանի հողակլիմայական առանձնահատկությունները, տեղանքների ռելիեֆը և վերականգնում նախատեսած առանձին հատվածների լանջերի դիրքադրությունը և ծովի մակերևույթից բարձրությունը՝ հիմք ընդունելով նաև հյուսիս-արևելյան Հայաստանի տարբեր անտառածման պայմանների համար առաջարկվող ծառերի և թփերի տեսակաշարը (աղյուսակ 40):

**Աղյուսակ 40. Հյուսիս-արևելյան Հայաստանի տարածաշրջանի ծառերի ու թփերի տեսակաշարի**

№	Բնափայտային տեսակների անվանումը	Լեռնալանջերի կողմնադրությունները	Հողերի տիպերը	Բարձրությունը ծովի մակերևույթից, մ
1	2	3	4	5
1	Կաղնի վրացական	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	550-1300
2	Կաղնի խոշորառուչ	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	1300 և բարձր
3	Հաճարենի արևելյան	հյուսիսայ, հս-արևմտյան, հս-արևելյան	հզոր, միջին հզորության, թարմ, խոնավ	900 և բարձր
4	Բոխի կովկասյան	բոլոր կողմնադրություններում	հզոր, միջին հզորության, թարմ	800 և բարձր
5	Սոճի դրիմյան	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	600 և բարձր
6	Սոճի կովկասյան	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	700-1800
7	Կեչի ելունդավոր	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ	1600 և բարձր
8	Կեչի Լիտվինովի	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ	1600 և բարձր
9	Թխկի բարձրլեռնային	հյուսիս, հս-արևմտյան, հս-արևելյան	հզոր, միջին հզորության, թարմ, խոնավ	1700 և բարձր
10	Թխկի սրատերև	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	650-1400
11	Թխկի դաշտային	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	1200-1800
12	Լորենի կովկասյան	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ	1400-1800
13	Լորենի մանրատերև	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ	1000-1700
14	Հացենի սովորական	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	մինչև 1000 (1200)
15	Հացենի սրապտուղ	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	մինչև 1500
16	Ընկուզենի հունական	բոլոր կողմնադրություններում	հզոր, միջին հզորության, թարմ	700-1100
17	Շագանակենի սովորական	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ	900-1900
18	Թեղի խորդուբորդ	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ	մինչև 1400
19	Իլենի Եվրոպական	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ	1000-2000
20	Իլենի լայնատերև	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ	900-1200
21	Կտտկենի սև	հյուսիս, հս-արևմտյան, հս-արևելյան	թարմ, խոնավ	1200-2300
22	Արոսենի սովորական	բացի հարավայինից	հզոր, թարմ, խոնավ	մինչև 1200 (1500)
23	Կիպրոս սովորական	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	600-1200
24	Ցախակեռաս այծի	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	800-2200
25	Ցախակեռաս սկովկասյան	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	մինչև 1300
26	Հոնի	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	800-1700
27	Տանձենի կովկասյան	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ	700-1750
28	Խնձորենի արևելյան	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	1000 (1200)
29	Կեռասենի	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ	մինչև 1700
30	Շյուրենի	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	700-1500
31	Տխլենի սովորական	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ, խոնավ	650-1550
32	Ճապկի հարավային	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	650-1550

**Աղյուսակ 41. Ամփոփ հաշվեցուցակ՝ Ջիլիգայի անտառտնտեսության անտառպատման և անտառվերականգնման միջոցառումների**

Անտառավետության անվանումը	Քառակուսի	Հատված	Մակերեսը, հա	Դիրքագրություն.	ԾՄԲ, մ	Բոնիտետ	Անտառի տիպ	Հողատեսք	Հողի նախապատրաստման եղանակ	Անտառվերականգնման եղանակ	Վերականգնվող տեսակը	Սերմերի քանակը, կգ	Սերմնաբուսակների քանակը, հառ	Տնկանյութի քանակը,
Ալսյուրփի	3	16	1,0	Հս-10	1270	3	Տրխ C -2	Նոսրուտ	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի հաճարի	40 3		
	3	19	8,1	Ամ-20	1325	3	Տրխ C -2	Ցածր լրիվության ծառուտ(0,3)	Հարթակներով 500 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	259		
	3	24	1,1	Հս-ալ 10	1430	3	Տրխ C -2	Նոսրուտ	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի հաճարի	55 1,1		
	3	25	4,2	Հվ-ամ 25	1350	3	Տրխ C -1	Ցածր լրիվության ծառուտ(0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	180		
	3	31	2,8	Հս-ամ 20	1430	3	Տրխ C -2	Ցածր լրիվության ծառուտ(0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի հաճարի	78 6		
	4	23	2,6	Հս-ալ 25	1175	3	Շղխ C -2	Ցածր լրիվության ծառուտ(0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի հաճարի	78 2,6		
	4	38	2,2	Հս-15	1265	3	Տրխ C -2	Բացատ	Խրամատներով 3000 զծմ/հա	Անտառնշակույթի հիմնում	Կաղնի Հացի, թխկի	88		2200
	4	39	2,0	Հս-20	1275	3	Տրխ C -2	Բացատ	Խրամատներով 3000 զծմ/հա	Անտառնշակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	80		2000
	6	52	1,8	Հվ-ալ 20	1225	4	Տրխ B-2	Նոսրուտ	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	112		
	10	13	3,6	Հս-10	1545	3	Տրխ C -2	Բացատ	Խրամատներով 3000 զծմ/հա	Անտառնշակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	144		3600
	11	33	6,8	Հս-ամ 15	1435	3	Տրխ C -2	Ցածր լրիվության ծառուտ(0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի հաճարի	190 15		
	11	35	2,2	Հս-10	1460	3	Տրխ C -2	Բացատ	Խրամատներով 3000 զծմ/հա	Անտառնշակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	88		2200



Անտառայտության անվանումը	Քառակուսի	Հատված	Մակերեսը, հա	Դիրքարտություն.	ԾՄԲ, մ	Բռնիտետ	Անտառի տիպ	Հողատեսք	Հողի նախապատրաստման եղանակ	Անտառվերականգնման եղանակ	Վերականգնվող տեսակը	Սերմերի քանակը, կգ	Սերմնաբուսականների քանակը, հատ	Տնկանյութի քանակը,		
	14	7	1,4	Հվ-ամ 25	1150	4	Տրխ B-2	Բացատ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոճակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	56		1400		
	14	37	3,6	Ալ-10	1575	4	Տրխ C -1	Բացատ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոճակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	144		3600		
	18	22	19,0/10,0	Հս-20	1425	3	Տրխ C -2	Բացատ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոճակույթի հիմնում	Կաղնի	450				
	20	10	34,9/25,0	Արմ-15	1575	3	Տրխ C -1	Բացատ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոճակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	1000		25000		
	20	16	2,4	Հր-ամ 15	1410	3	Տրխ C -1	Նոսրուտ	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	154				
	<b>Ընդամենը</b>		80,8	<b>Բացատ - 50հա Նոսրուտ - 6,3 Ցածր լրիվություն - 24,5</b>										<b>Կաղնի</b>	3196	
											<b>Հաճարի</b>	27,7				
											<b>Հացի, թխկի</b>			40000		
											<b>Ընդամենը</b>	2439,7		40000		
<b>Խոճունի</b>	1	20	7,6	Հվ-ամ 20	1110	4	Տրխ C -2	Ցածր լրիվության ծառուտ(0,4)	Հարթակներով 500 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի հաճարի	243 23				
	1	28	4,4	Հս-15	1575	3	Շղխ C -2	Նոսրուտ	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի հաճարի	176 4,4				
	1	35	3,6	Հվ-10	1380	3	Տրխ B-2	Ցածր լրիվության ծառուտ(0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	151				
	3	15	3,6	Հս-ալ 10	1165	3	Տրխ C -2	Բացատ Ա. ծառ բ. կ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոճակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	144		3600		
	7	27	1,5	Հվ-ալ 20	1310	3	Տրխ C -1	Բացատ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոճակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	50		1500		
	9	2	3,1	Հվ-ալ 5	1180	4	Տրխ C -1	Նոսրուտ	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	198				
	9	8	1,4	Հվ-ալ 25	985	4	Տրխ C -1	Նոսրուտ	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	87				
	10	1	1,3	Հս-ամ	1475	3	Տրխ	Բացատ	Խրամատներով	Անտառոճակույթի	Կաղնի	52				

Անտառայտության անվանումը	Քառակուսի	Հատված	Մակերեսը, հա	Դիրքարրություն	ԾՄԲ, մ	Բռնիտես	Անտառի տիպ	Հողատեսք	Հողի նախապատրաստման եղանակ	Անտառվերականգնման եղանակ	Վերականգնվող տեսակը	Սերմերի քանակը, կգ	Սերմնաբուսականների քանակը, հառ	Տնկանյութի քանակը,	
				10			C -2		3000 գծմ/հա	հիմնում	հացի, թխկի			1300	
	11	1	1,2	Հվ-ամ 5	1480	3	Տրխ C -2	Բացատ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	48		1200	
	21	25	3,2	Ամ-25	1280	4	Տրխ C -1	Նոսրուտ	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի հաճարի	128 10			
	22	14	9,1	Հս-20	1760	4	Տրխ C -2	Նոսրուտ	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի հաճարի	450 9,1			
	<b>Ընդամենը</b>		40,0	<b>Բացատ - 7,6հա Նոսրուտ - 21,2հա Ցածր լրիվություն - 11,2հա</b>									<b>Կաղնի</b>	1727	
											<b>Հաճարի</b>	46,5			
											<b>Հացի, թխկի</b>			7600	
											<b>Ընդամենը</b>	1773,5		7600	
<b>Ճոճկանի</b>	1	5	1,4	Հվ-ալ 5	1415	4	Տրխ B-2	Նոսրուտ	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	90			
	1	7	1,9	Հվ-ալ 25	1410	4	Տրխ B-2	Նոսրուտ	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	122			
	1	10	11,1	Հվ-ալ 15	1270	4	Տրխ B-2	Ցածր լրիվության ծառուտ(0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	477			
	1	11	19,5	Հվ-ալ 20	1375	4	Տրխ B-2	Ցածր լրիվության ծառուտ(0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի հաճարի	600 44			
	1	13	5,0	Հվ-25	1350	4	Տրխ B-2	Ցածր լրիվության ծառուտ(0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	215			
	1	21	4,6	Հվ-ալ 20	1445	4	Տրխ B-2	Ցածր լրիվության ծառուտ(0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	198			
	1	34	1,4	Հվ-ամ 5	1305	4	Տրխ B-2	Նոսրուտ	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	90			
	1	42	2,4	Հս-5	1310	4	Տրխ	Բացատ	Խրամատներով	Անտառմշակույթի	Կաղնի	96			

Անտառայտության անվանումը	Քառակուսի	Հատված	Մակերեսը, հա	Դիրքարտություն.	ԾՄԲ, մ	Բռնիտետ	Անտառի տիպ	Հողատեսք	Հողի նախապատրաստման եղանակ	Անտառվերականգնման եղանակ	Վերականգնվող տեսակը	Սերմերի քանակը, կգ	Սերմնաբուսակների քանակը, հառ	Տնկանյութի քանակը,
							C -2		3000 գծմ/հա	հիմնում	հացի, թխկի			2400
1	45	1,3	Հս-ալ 20	1230	3	Տրխ C -2	Նոսրուտ		Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի հաճարի	65 1,3		
2	10	3,4	Հվ-ալ 20	1450	4	Տրխ B-2	Բացատ		Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոձակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	136		3400
2	68	0,8	Հվ-ալ 15	1325	3	Տրխ B-2	Բացատ		Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոձակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	32		800
8	21	0,9	Ալ-5	1320	4	Տրխ B-2	Բացատ		Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոձակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	36		900
8	22	2,1	Ալ-5	1300	4	Տրխ B-2	Բացատ		Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոձակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	84		2100
8	28	2,2	Հվ-ամ 5	1315	4	Տրխ B-2	Ցածր լրիվության ծառուտ(0,3)		Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	95		
8	31	5,5	Հվ-ալ 15	1380	4	Տրխ B-2	Ցածր լրիվության ծառուտ(0,4)		Հարթակներով 500 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	176		
8	35	1,1	Հվ-5	1305	4	Տրխ C -1	Բացատ Առ. ծառ կ.բ		Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոձակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	44		1100
8	39	1,7	Հվ-5	1305	4	Տրխ C -1	Բացատ Առ. ծառ կ.բ		Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոձակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	68		1700
8	66	2,4	Հվ-5	1290	4	Տրխ C -1	Նոսրուտ		Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	154		
9	21	1,5	Հվ 20	1275	4	Տրխ C -1	Նոսրուտ		Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	98		
9	27	1,3	Ալ-10	1250	4	Տրխ C -1	Նոսրուտ		Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	83		
9	31	0,8	Հվ-5	1230	4	Տրխ C -1	Բացատ		Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոձակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	32		800
10	19	2,4	Հվ-ալ 10	1255	4	Տրխ C -1	Չմիակցված սաղարթով հց		Փոսերով	Անտառոձակույթի լրացում	հացի			3800

Անտառայտության անվանումը	Քառակրահի	Հատված	Մակերեսը, հա	Դիրքագրություն.	ԾՄԲ, մ	Բռնիտետ	Անտառի տիպ	Հողատեսք	Հողի նախապատրաստման եղանակ	Անտառվերականգնման եղանակ	Վերականգնվող տեսակը	Սերմերի քանակը, կգ	Սերմաբուսականների քանակը, հատ	Տնկանյութի քանակը,	
	10	22	1,2	Հվ-ալ 20	1250	4	Տրխ C -1	Բացատ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոճակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	48		1200	
	11	70	1,0	Հս-ալ 25	1200	4	Տրխ C -2	Բացատ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոճակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	40		1000	
	12	21	1,0	Հվ-ալ 20	1195	4	Տրխ B-2	Բացատ Առ. ծառ կ.բ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոճակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	40		1000	
	12	30	1,3	Հվ-ալ 15	1130	4	Տրխ B-2	Բացատ Առ. ծառ բ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոճակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	52		1300	
	13	54	1,1	Հվ-5	835	4	Տրխ C -1	Բացատ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոճակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	44		1100	
	14	22	1,2	Հս-15	1295	3	Տրխ C -2	Բացատ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոճակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	48		1200	
	14	37	1,3	Հս-ամ- 15	1375	3	Տրխ C -2	Նոսրուտ	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	39 2			
	14	43	1,2	Հս-ամ 20	1315	4	Տրխ B-2	Բացատ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոճակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	48		1200	
	14	54	2,5	Ամ-20	1350	4	Տրխ C -2	Նոսրուտ	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	100			
	15	33	4,9	Ալ-25	1310	4	Տրխ B-2	Ցածր լրիվության ծառուտ(0,4)	Հարթակներով 500 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	157			
	15	37	2,4	Ալ-25	1330	4	Տրխ B-2	Ցածր լրիվության ծառուտ(0,4)	Հարթակներով 500 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	77			
	16	52	6,2	Հս-25	1380	3	Տրխ C -1	Ցածր լրիվության ծառուտ(0,4)	Հարթակներով 500 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի հաճարի	62 6			
	18	12	1,3	Հվ-ալ 10	1380	4	Տրխ B-2	Բացատ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոճակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	52		1300	
<b>Ընդամենը</b>			101,3	<b>Բացատ – 22,5հա Նոսրուտ – 15,0հա Ցածր լրիվություն – 61,4հա Զմիակցված սաղարթով – 2,4հա</b>								<b>Կաղնի</b>	4185		
				<b>Հաճարի</b>	1,3										
				<b>Հացի, թխկի</b>				26300							
				<b>Ընդամենը</b>	4186,3			26300							

Անտառայտության անվանումը	Քառակրահի	Հատված	Մակերեսը, հա	Դիրքարրություն.	ԾՄԲ, մ	Բռնիտետ	Անտառի տիպ	Հողատեսք	Հողի նախապատրաստման եղանակ	Անտառվերականգնման եղանակ	Վերականգնվող տեսակը	Սերմերի քանակը, կգ	Սերմնաբուսակների քանակը, հատ	Տնկանյութի քանակը,
Շամլուղի	1	11	0,3	Հվ 15	1500	3	Տրխ C-1	բացատ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոձակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	13		300
	1	13	2,1	Հվ-ալ 25	1525	4	Տրխ D-2	Ցածր լրիվության ծառուտ(0,4)	Հարթակներով 500 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	13		
	1	31	0,7	Հվ-ալ 10	1650	2	Տրխ C-3	Բացատ Առ. ծառ կ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոձակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	30		700
	2	3	0,6	Հվ-ամ 10	1375	3	Տրխ C-2	չմիակցված անտառոձակույթ, սոճի	Խրամատներով 1000 գծմ/հա	Անտառոձակույթի լրացում	Սոճի, հացի		600 600	
	2	11	2,9	Հվ-ամ 20	1320	3	Տրխ C-2	չմիակցված անտառոձակույթ	Փոսերով	Անտառոձակույթի լրացում	Տանձենի խնձորենի			700 700
	2	13	2,0	Հվ-ամ 15	1350	4	Տրխ C-3	նոսրուտ 0,2	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	124		
	2	14	0,8	Հվ-ամ 20	1350	4	Տրխ C-3	նոսրուտ 0,1	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	50		
	2	20	1,5	Հվ-ամ 15	1290	3	Տրխ C-2	բացատ, առ. ծառկ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոձակույթի հիմնում	Սոճի հացի, թխկի		3990 1995	
	2	49	1,8	Հվ-ամ 20	1240	3	Տրխ C-3	Ցածր լրիվության ծառուտ(0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	77		
	2	55	0,9	Հվ 10	1390	4	Տրխ C-2	բացատ, առ. ծառ.	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոձակույթի հիմնում	սոճի հացի, թխկի		2400 1200	
	2	57	3,6	Հվ-ալ 20	1280	4	Տրխ C-2	Ցածր լրիվության ծառուտ(0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	155		
	3	13	1,2	Հվ-ալ 20	1600	3	Տրխ C-2	բացատ, առ. ծառ.	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառոձակույթի հիմնում	սոճի հացի, թխկի		3200 1600	
	4	4	1,8	Հվ-ալ 20	1465	2	Շղխ C-2	նոսրուտ 0,2	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	112		
	4	7	1,5	Հվ-15	1345	4	Շղխ C-2	նոսրուտ 0,2	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման	Կաղնի	93		

Անտառայտության անվանումը	Քառակուսի	Հատված	Մակերեսը, հա	Դիրքարտություն.	ԾՄԲ, մ	Բռնիտետ	Անտառի տիպ	Հողատեսք	Հողի նախապատրաստման եղանակ	Անտառվերականգնման եղանակ	Վերականգնվող տեսակը	Սերմերի քանակը, կգ	Սերմնաբուսականների քանակը, հատ	Տնկանյութի քանակը,
										օժանդակում				
	4	9	1,2	Հվ-15	1330	3	Տրիս C-2	նոսրուտ 0,2	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	74		
	4	10	1,7	Ալ-15	1545	3	Տրիս B-2	նոսրուտ 0,2	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	105		
	4	16	5,5	Ալ 15	1350			այգի	Փոսերով	Այգու լրացում	Խնձորենի տանձենի			1500 1500
	4	17	1,0	Ալ-10	1325	3	Տրիս B-2	նոսրուտ 0,2	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	62		
	4	23	2,4	Հս-ալ 10	1315			այգի	Փոսերով	Այգու լրացում	Խնձորենի տանձենի			700 700
	5	13	2,2	Հվ-20	1260	3	Տրիս C-1	Ցածր լրիվության ծառուտ(0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի			
	5	14	3,7	Հվ-ամ 20	1250	3	Տրիս C-2	բացատ, առ. ծառկ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	սոճի հացի, թխկի		4660 2330	
	6	55	2,8	Հս-ամ 5	1575	3	Տրիս C-2	բացատ, առ. ծառկ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Կաղնի հացի, թխկի	112		2800
	8	8	6,5	Հվ-ամ 25	1600	3	Տրիս C-1	Ցածր լրիվության ծառուտ(0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	403		
	8	11	4,7	Հվ-ալ 10	1575	3	Տրիս B-2	նոսրուտ 0,2	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	291		
	8	12	4,0	Հվ-ալ 10	1530	3	Տրիս C-1	Ցածր լրիվության ծառուտ(0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	172		
	8	16	4,7	Հվ-ամ 20	1500	4	Տրիս C-1	Պարապոտո	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	սոճի հացի, թխկի		12500 6250	
	8	20	2,0	Հվ-ամ 25	1700	4	Տրիս B-2	նոսրուտ 0,2	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	124		

Անտառայտության անվանումը	Քառակրահի	Հատված	Մակերեսը, հա	Դիրքարություն.	ԾՄԲ, մ	Բռնիտետ	Անտառի տիպ	Հողատեսք	Հողի նախապատրաստման եղանակ	Անտառվերականգնման եղանակ	Վերականգնվող տեսակը	Սերմերի քանակը, կգ	Սերմնաբուսականների քանակը, հառ	Տնկանյութի քանակը,	
	8	23	0,8	Ալ-25	1550	4	Տրխ B-2	նոսրուտ 0,2	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	50			
	9	6	9,6	Հվ-ամ 15	1300			այգի	Փոսերով	Այգու լրացում	Խնձորենի տանձենի			1500 1500	
	9	17	2,3	Հս-ալ 20	1450	3	Տրխ C-2	չմիակցված անտառնշակույթ, սոճի	Խրամատներով 1000 գծմ/հա	Անտառնշակույթի լրացում	Սոճի, հացի		1150 1150		
	12	20	1,4	Հս-ալ 15	1340	3	Տրխ C-2	բացատ, առ. ծառկ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառնշակույթի հիմնում	կաղնի հացի, թխկի	56		1400	
	13	28	2,9	Հվ-ալ 10	1350	4	Տրխ C-1	Ցածր լրիվության ծառուտ(0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	90			
	13	30	2,7	Հս-ամ 20	1480	4	Տրխ C-1	բացատ, առ. ծառ. 8կ2բ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառնշակույթի հիմնում	կաղնի հացի, թխկի	108		2700	
	13	37	1,2	Ամ-15	1440	4	Տրխ C-1	բացատ, առ. ծառ. 8կ2բ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառնշակույթի հիմնում	կաղնի հացի, թխկի	48		1200	
	13	40	0,7	Հվ-ամ 15	1325	4	Տրխ B-2	նոսրուտ 0,2	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	45			
	13	51	8,9	Ամ 20	1320	4	Տրխ B-2	նոսրուտ 0,2	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	552			
	13	55	1,3	Հվ-ալ 20	1400	4	Տրխ B-2	նոսրուտ 0,2	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	80			
	16	21	1,1	Հվ-ամ 20	1080	4	Տրխ B-2	նոսրուտ 0,2	Հարթակներով 1000 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	70			
	18	1	6,8	Հվ-ալ 20	1555	4	Տրխ C-1	Ցածր լրիվության ծառուտ(0,4)	Հարթակներով 500 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	218			
	<b>Ընդամենը</b>		103,8	<b>Բացատ - 21,1 հա Նոսրուտ - 29,5հա Ցածր լրիվություն - 29.9հա</b>								<b>Կաղնի</b>	3327		
												<b>Սոճի</b>		28500	
												<b>Տանձենի,</b>			8800

Անտառայտության անվանումը	Քառակուսի	Հատված	Մակերեսը, հա	Դիրքագրություն.	ԾՄԲ, մ	Բռնիտետ	Անտառի տիպ	Հողատեսք	Հողի նախապատրաստման եղանակ	Անտառվերականգնման եղանակ	Վերականգնվող տեսակը	Սերմերի քանակը, կգ	Սերմնաբուսականների քանակը, հառ	Տնկանյութի քանակը,		
				Չմիակցված սաղարով – 5,8հա Այգի - 17,5հա								խնորենի				
												Հացի, թխկի		15125	9100	
												Ընդամենը	3327	43625	17900	
Ամբողջը		325,9		Բացատ – 101,2հա Նոսրուտ – 72,0հա Ցածր լրիվություն – 127,0հա Չմիակցված սաղարթով – 8,2հա Այգի - 17,5հա								Կաղնի	12435			
												Հաճարի	75,5			
												Հացի, թխկի			15125	83000
												Սոճի			28500	
												Տանձենի, խնձորենի				8800
												Ընդամենը	12510,5	43625	91800	



**Աղյուսակ 42. Անտառվերականգնման նախատեսվող տարածքների սերմերի և սերմնաբուսակ-տնկիների պահանջը ըստ անտառապետությունների**

№	Անտառապետություն	Վերականգնման նախատեսվող մակերեսը, հա	Սերմերի և տնկիների պահանջը		
			Տեսակը	Սերմ, կգ	Սերմնաբուսակ տնկի, հատ
1	Ախքյորփի	80,8	Կաղնի	3540	
			Հաճարի	53,7	
			Հացի, թխկի		40000
			Ընդամենը	2439,7	40000
2	Խոժոռնի	40,0	Կաղնի	1727	
			Հաճարի	46,5	
			Հացի, թխկի		7600
			Ընդամենը	1773,5	7600
3	Ճոճկանի	101,3	Կաղնի	4185	
			Հաճարի	1,3	
			Հացի, թխկի		26300
			Ընդամենը	4186,3	26300
4	Շամլուղի	103,8	Կաղնի	3327	
			Տանձենի, Խնձորենի		8800
			Հացի, թխկի		24225
			Սոճի		28500
			Ընդամենը	3327	61525
<b>Ամբողջը անտառտնտեսությունում</b>		325,9	Կաղնի	12435	
			Հաճարի	75,5	
			Տանձենի, Խնձորենի		8800
			Հացի, թխկի, կեչի		98125
			Սոճի		28500
			Ամբողջը	12510,5	135425

2021-30թթ. ժամանակաշրջանում նախատեսվում է անտառի հիմնում ոչ անտառաձածկ մակերեսում 173,2 հեկտարի վրա, տարեկան շուրջ 17 հեկտար: Տնկանյութի տեսականու ընտրությունը կատարվել է ելնելով կոնկրետ անտառաձման պայամաններից, հարմարվածության և արժեքավոր տեսակների վերականգնման և կենսաբազմազանության պահպանման հանգամանքներից:

2021-30թթ. անտառհիմնման և վերականգնման համար ահրաժեշտ տնկանյութը, ներառյալ նաև լրացման համար անհրաժեշտ 20%-ը, կազմում է 135425, իսկ խոշորառեչ կաղնու սերմերի պահանջը գնահատվել է 12435կգ, հաճարինը՝ 75,5կգ:

Անտառային բացատներում և բուսականությունից ազատ (պարապուտ) տարածքներում անտառվերականգնման միջոցառումներ նախատեսվում է հիմնականում կաղնու սերմերի ցանքով (գլխավոր տեսակ)՝ հացի, թխկի և կեչի ծառատեսակների տնկիների հետ խառը անտառմշակույթների հիմնում, ինչպես նաև սոճու բուսակների (գլխավոր տեսակ) և կաղնի, հացի թխկի և կեչի ծառատեսակների բուսակների և տնկիների հետ խառը անտառմշակույթների հիմնում:

Անթրոպոգեն նոսրուտներում նախատեսվել է խրամատներով կաղնու սերմերի ցանքով խառը անտառմշակույթների հիմնում, ինչպես նաև բնական վերականգնման օժանդակման եղանակով՝ հարթակներով կաղնու սերմերի հավելյալ ցանքով:

Ցածր լրիվության ծառուտներում, հիմնականում վնասատուներից և հիվանդություններից տուժված սոճուտներում նախատեսվում են բնական վերականգնման օժանդակման միջոցառումներ՝ հանքայնացման և կաղնու սերմերի ցանքով:

Անտառտնտեսության կառավարման տարածքում տնկարան չի նախատեսվում՝ հիմնման համար համապատասխան պայմաններով ապահովված տարածք չգտնելու, հատկապես հաշվի առնելով անհրաժեշտ տնկանյութի ոչ մեծ քանակությունը, ինչպես նաև Տաշիրի անտառտնտեսությունում նախատեսվող մեծ տնկարանային տնտեսության ստեղծման հանգամանքը:

Անտառապատման ու անտառվերականգնման համար անհրաժեշտ սերմերի քանակությունը անհրաժեշտ է հավաքել դաշտային գույքագրման ժամանակ առանձնացված ընդհանուր 263,5 հա մշտական անտառսերմնային տեղամասերից, նույն թվում կաղնին 148,6հա, հաճարին 114,9 հեկտար (աղյուսակ 43):

**Աղյուսակ 43. Տեղեկագիր անտառսերմնային մշտական տեղամասերի**

Անտառապատության տիպի անվանումը	Գլխավոր Ծառատեսակը	Քառուկումի	Հատված	Մակերեսը, հեկտար	Ծառուկի կազմը	Լանջի լինումը	ԾՄԲ	Բունիտերը	Լրիվությունը	Մեկիցը	
Ավաջորդի	Կաղնի	3	10	1,2	6կ3բ1ղ	Ամ-15	1190	4	0,6	110	
		5	3	2,5	5կ4բ1հ	Հս-ամ 30	1045	4	0,5	110	
		7	29	2,0	5կ3բ1հ	Հվ-ալ 15	1330	3	0,6		
		7	19	3,6	5կ3բ2հ+թխ	Արլ-15	1330	3	0,6	90	
		7	20	3,6	6կ4բ+հ+թխ	Ամ-25	1300	3	0,6	90	
	<b>Ընդամենը</b>				12,9						
	Հաճարի	4	13	4,0	7հ3բ+կ+տնձ	Հս-արլ 20	1225	3	0,5	1000	
		4	19	10,0	6հ4բ	Հս-ամ 20	1155	3	0,5	110	
		4	36	2,5	7հ3բ	Հս-ամ 15	1215	3	0,5	110	
		4	40	6,7	8հ2բ	Հս-ամ 30	1300	4	0,6	110	
		4	41	1,3	7հ3բ	Հս-ամ 25	1250	3	0,6	90	
		7	17	2,9	9հ1բ	Հս-ամ 25	1280	3	0,5	120	
		7	6	5,7	10հ+թխ	Հս-արլ 25	1225	3	0,6	95	
		8	18	5,5	9հ1բ+թխ	Հս-ամ 30	1175	3	0,5	90	
		10	5	3,9	10հ	Հս-ամ 25	1350	3	0,5	110	
		12	26	6,0	7հ2բ1թխ	Հս-ամ 20	1450	3	0,6	120	
		13	1	5,8	7հ3բ+թխ	Հս-ալ 25	1100	3	0,6	130	
		17	3	3,3	10հ+բ	Հս-ալ 25	1350	3	0,6	130	
		20	23	3,8	9հ1բ+թխ	Ամ-25	1600	3	0,6	110	
	<b>Ընդամենը</b>				61,4						
Անտառապատությունում					74,3						
Խոժոռնու	Հաճարի	7	35	1,5	8հ2բ+կ	Հվ-20	1275	3	0,5	130	
		11	3	3,7	7հ3բ	Հս-ալ 25	1410	3	0,5	110	
	<b>Ընդամենը</b>				5,2						
Կաղնի	8	12	4,2	4կ4բ1հ	Հվ-20	1225	4	0,6	90		

Անտառաբերության անվանումը	Գլխավոր ծառատեսակը	Քառուկուսի	Հատված	Մակերեսը, հեկտար	Ծառուտի կազմը	Լանդի միջին ընդհանուր	ԾՄԲ	Բոնիտեղը	Լրիվությունը	Տարիքը
		8	19	2,7	4կ4բ1թխ1հ	Հվ-Ալ 20	1305	4	0,6	90
		16	18	4,3	4կ4բ1հց1թխ	Հվ-15	1260	4	0,6	90
		Ընդամենը		11,2						
	Անտառապետությունում		16,4							
Ճոճկանի	Կաղնի	1	12	28	4կ4բ2հ	Հվ-ալ 20	1325	4	0,5	100
		1	14	9,5	4կ4բ1տձ1հ	Հվ-20	1320	4	0,5	110
		1	17	7	5կ3բ2հ	Հվ-30	1380	3	0,6	90
		2	26	9	8կ2բ	Հվ-ամ 15	1340	3	0,5	110
		2	31	2,8	6կ4բ+հ+հց	Հվ-ալ 20	1455	4	0,6	110
		2	60	10,5	8կ2բ	Հվ-ամ 20	1300	3	0,5	100
		2	72	3,7	9կ1բ	Հվ-15	1270	4	0,5	130
		6	28	2,4	10կ+բ	Հս-ալ 10	1230	4	0,6	110
		10	19	6,6	7կ3բ	Հվ-ալ 20	1260	4	0,6	110
	Անտառապետությունում		79,5							
Շամլուղի	Հաճարի	1	27	10,1	6հ2կ2բ+թխ	Հվ-ամ 25	1430	3	0,5	130
		3	7	7,6	8հ2բ+կ	Հվ-ալ 25	1750	3	0,5	150
		6	11	8,4	6հ2կ2բ	Հս-ամ 25	1410	3	0,6	110
		6	37	4,5	7հ2բ1կ	Հս-ամ 25	1425	3	0,6	140
		6	41	8,6	7հ2բ1կ	Հս-ալ 20	1510	4	0,6	130
		7	24	10,8	6հ3բ1կ	Հս-ալ 25	1225	3	0,6	110
		11	18	12,2	6հ3բ1կ	Հս-ամ 20	1450	4	0,6	100
	Ընդամենը		62,2							
	Կաղնի	1	24	13,4	5կ3բ2հ	Հվ-ալ 20	1530	3	0,6	110
		1	28	3,2	4կ3հ3բ	Հվ-ալ 25	1465	4	0,6	130
		2	27	4,1	4կ4բ2հ+թխ	Հվ-20	1410	3	0,6	130
		4	21	14,5	4կ4բ2հ+թխ	Հվ-ալ 25	1420	4	0,6	110
		9	4	9,8	6կ3բ1հ+թխ	Ալ-25	1460	3	0,6	140
	Ընդամենը		45,0							
Անտառապետությունում		107,2								
<b>ԱՄԲՈՂՋԸ</b>				264,5						

**9.4. Նախատեսվող միջոցառումների արդյունքում անտառային տարածքների արդյունավետության բարձրացում**

Ստուգիչ ժամանակաշրջանում անտառային հողերի արտադրողականության բարձրացման նպատակով անտառաշինությամբ նախատեսվում են հետևյալ միջոցառումները:

- Անտառուերմնային բազաների հիմնում սելեկցիոն հիմքի վրա,
- Անտառային մշակույթների հիմնում,
- Ցածր լրիվության ծառուտների արտադրողականության բարձրացում,
- Բնական վերածին օժանդակող համալիր միջոցառումներ,
- Խնամքի հատումների իրականացում,

- Անտառպահպանական և անտառպաշտպանակա նաշխատանքների բարելավում,
- Ընտրովի սանիտարական հատումներ:

Սելեկցիոն հիմքի վրա անտառներմնային բազաների հիմնումը նախատեսվում է բարձր ցանքսային հատկություններով և արժեքավոր ժառանգական հատկանիշներով օժտված սերմերի ստացման համար:

Բարձրարժեք և բարձր արտադրողական անտառային տեսակներով հիմնման միջոցով ընդլայնվում է անտառաձածկ մակերեսը, վերականգնվում են հատված և քայքայված անտառները, ծառուտները ձևավորվում են ցանկալի ուղղությամբ, նպաստվում է կենսաբազմազանության հաստատմանը:

Խնամքի հատումները օժանդակում են ծառուտների նպատակային ձևավորմանը, մասնավորապես տեսակային կազմի բարելավմանը, որակական և տարածքային տեղաբաշխմանը, անտառի հողապաշտպան, ջրապաշտպան, սանիտարա-հիգիենիկ, էսթետիկական հատկությունների բարելավմանը և անտառների արդյունավետության բարձրացմանը:

Ընտրողական սանիտարական հատումները հնարավորություն են ընձեռում բարելավելու անտառի սանիտարական վիճակը, պահպանելու անտառաձածկ մակերեսը ստուգիչշրջանում, բարելավելու տեսակային կազմը և ստանալու ծառուտների լրացուցիչ աճ:

Համաձայն կառավարման պլանի նախագծի նախատեսվում է 2021-30թթ շրջանում իրականացնել միջոցառումներ հետևյալ ծավալներով (աղյուսակ 44):

**Աղյուսակ 44. 2021 – 30 թթ շրջանում նախատեսված միջոցառումներ**

№	Միջոցառման անվանումը	Մակերեսը, հա
1	Անտառային մշակույթների հիմնում ոչ անտառաձածկ տարածքներում	181,8
1.1	Բացատներում և պարապուտ տարածքներում	101,2
1.2	Հատված տարածքներում և անթրոպոգեն նոսրուտներում	80,6
2	Չմիակցված սաղարթով անտառնշակույթներում	8,2
3	Անտառայգի	17,5
4	Բնական վերածին օժանդակող միջոցառումներ ցածր լրիվության ծառուտներում հանքայնացում +սերմերի ցանքս	127,0
5	Ցանկապատման միջոցով 17000 գծմ	2700
<b>Ընդամենը</b>		<b>3034,5</b>

2021-30թթ. ժամանակաշրջանի անտառային մշակույթների արտադրողականության որոշման համար մշակույթները պայմանականորեն հավասարեցված են ծառուտների I հասակային դասին, ընդ որում ասեղնատերևավոր ծառատեսակների միջին աճը հաշվարկված է II հասակային դասի ծառուտների միջին աճի 40%-ի չափով, իսկ տերևավոր ծառատեսակներինը՝ II հասակային աճի 60%-ի չափով:

Անտառի գույքագրման և գնահատման արդյունքներով I հասակային դասի 1հա-ի միջին աճը ասեղնատերևավոր ծառատեսակների համար 2,09մ<sup>3</sup> է, իսկ տերևավոր տեսակների մոտ 1,30մ<sup>3</sup> (աղյուսակ 45):

**Աղյուսակ 45. 2021-30թթ. ժամանակաշրջանում հիմնման նախատեսած անտառմշակույթների աճի ցուցանիշները**

№	Միջոցառման անվանումը	Մակերեսը, հա	1հա-ի լրացուցիչ միջինաճը, մ <sup>3</sup>	Սպասվելիք Լրացուցիչ աճը նախագծվող տարածքում, մ <sup>3</sup>
1	Ոչ անտառածածկ տարածքներում 2021-30թթ. հիմնման նախատեսած մշակույթներ	173,2		
1.1	Ասեղնատերևավոր	12,8	2,09	26,75
1.2	Տերևավոր	160,4	1,3	208,5
	<b>Ընդամենը</b>	173,2		235,27

Բնական վերածին օժանդակող միջոցառումների արդյունքում լրացուցիչ աճը պայմանականորեն կկազմի  $(1827 \times 0,2) \text{մ}^3 \text{հա} = 811,85 \text{մ}^3$ :

Այսպիսով, նախատեսվող միջոցառումների արդյունքում սպասվելիք լրացուցիչ տարեկան աճը կկազմի  $1047,12 \text{մ}^3$ :

Կառավարման պլանի նախագծում նախատեսվող համալիր միջոցառումների արդյունքում, անտառտնտեսության անտառային հողերում տեղի կունենա անտառածածկ տարածքի տեսակարար կշռի ավելացում և ծառուտի կազմի բարելավում:

Անտառածածկ մակերեսի ավելացումը նախատեսվում է անտառային բացատներում և անթրոպոգեն նսրուտներում անտառմշակույթների հիմնման, ինչպես նաև բնական վերածին օժանդակող միջոցառումների հաշվին:

Ինչպես երևում է աղյուսակ 46-ից, 2020թ. համեմատությամբ անտառածածկ մակերեսը ստուգիչ ժամանակաշրջանի վերջում (2030թ.) կանխատեսվում է ավելացում  $71,0 \text{հա-ով}$ , իսկ 2035թ. և  $122,2 \text{հա-ով}$ , ընդ որում հիմնականում ոչ անտառածածկ տարածքներում հիմնադրվող անտառմշակույթների իրականացման հաշվին, իսկ բնական վերականգնմամբ 2030թ.  $15 \text{հա}$ , 2035թ. և  $10 \text{հա}$  հեկտարով՝ անթրոպոգեն նսրուտներում և մասամբ փոքր մակերեսով բացատներում, ինչպես նաև պարապուտ տարածքներում բոխու և մասամբ հաճարենու բնական վերականգնմամբ:

Հաշվարկը կատարվել է ընդունելով, որ անտառվերականգնման ծավալները իրականացվելու են 10 տարվա մոտավոր հավասար բաշխվածությամբ, որի դեպքում առաջին երեք տարիների հիմնված չմիակցված սաղարթով անտառմշակույթների մոտ 30%-ը բավարար խնամքի և պահպանության պայմաններում կփոխադրվեն անտառածածկ մակերես, իսկ մնացածը հաջորդող 5 տարիներին:

**Աղյուսակ 46. Տեղեկագիր անտառտնտեսության հողատեսքերում նախատեսվող փոփոխությունների**

№	Հողատեսքի անվանումը	01,01,2020թ. հա	01,01,2030թ. հա	Փոփոխությունը, հա	01,01,2035թ. հա	Փոփոխությունը, 01,01,2021թ. համեմատությամբ հա
1	Անտառային հողեր, ընդամենը	18988,5	18988,5	-	18988,5	-
1.1	Անտառածածկ, ընդամենը	17408,2	17479,2	+71,0	17601,4	+193,2
1.1.1	Բնական ծագման անտառներ	17096,5	17106,5	+10,0	17116,5	+20
1.1.2	Անտառմշակույթներ	311,7	372,7	+61,0	484,9	+173,2
1.3	Չմիակցված սաղարթով անտառմշակույթներ	9,0	121,2	+112,2	-	
1.4	Ոչ անտառածածկ, ընդամենը	1571,3	1388,1	-183,2	1378,1	-193,2
1.4.1	Հատված և չվերականգնված տարածքներ, նոսրուտներ	1174,4	1097,4	-77,0	1092,4	-82,0
1.4.2	Բացատ և պարապուտ	396,9	290,7	-106,2	285,7	-111,2
2	Ոչ անտառային հողեր, ընդամենը	465,5	465,5	-	465,5	
3	Ընդհանուր	19454	19454	-	19454	-

Ոչ անտառածածկ մակերեսի նվազումը 2030թ. 183,2հա-ով, իսկ 2035թ. և 10հա-ով բացատրվում է բացատների ու պարապուտ տարածքների, ինչպես նաև հատված տարածքներում և նոսրուտներում իրականացված անտառամշակույթների հիմնման ու բնական վերականգնման միջոցառումներով:

Նախատեսվող միջոցառումների արդյունքում էական փոփոխություն է ակնկալվում նաև ծառուտների տեսակային կազմում: Հիմնական անտառկազմող ծառատեսակների որակական կազմը զգալիորեն փոխվել է ի հաշիվ ոչ անտառածածկ տարածքների և ցածր արտադրողականության ու լրիվության (0,3-0,4) ծառուտների անտառապատման և անտառվերականգնման միջոցառումների:

Բարձրաբուն կաղնու ծառուտների մակերեսների ավելացումը 2020թ. համեմատությամբ 2030թ. 31,0հա, իսկ 2035թ. և 74 հեկտարով, բացատրվում է անտառային բացատներում, հատված տարածքներում և նոսրուտներում կաղնու սերմերով այլ տեսակների հետ խառը անտառմշակույթների հիմնման և բնական վերականգնման օժանդակման միջոցառումների իրականացմամբ:

Սոճուտների տարածքների ավելացել է 2030թ. 4 հեկտարով, իսկ 2034 թ. և 8,8հեկտարով:

Հաճարի գերակշռությամբ ծառուտների մակերեսը ավելացումը 1930թ. 5 և 2035թ. և 10 հա-ով պացատրվում է անթրոպոգեն նոսրուտներում կանու սերմերի հետ հաճարի սերմերի ցանքսի և հիմնականում փոքր մակերեսով նոսրուտներում բնական վերականգնման հանգամանքով:

Տանձենու և խնձորենու զբաղեցրած մակերեսների ավելացումը 2020թ. համեմատությամբ 2030թ. ընդհանուր 6 հեկտարով, իսկ 2035թ. և 14,2 հեկտարով

բացատրվում է անտառմշակույթների հիմնամաք, հացի և թխկի ծառատեսակներ գերակշռությամբ ծառուտների մակերեսների ավելացումները հիմնականում բացատրվում է անտառային բացատներում գլխավոր տեսակներ՝ կաղնու հետ որպես ուղեկցող տեսակներ նշված ծառատեսակների հիմնման և առանձին տարածքներում կազմավորվող երիտասարդ ծառուտների կազմերի հնարավոր փոփոխություններով:

\*2020թ. գարնանը անտառտնտեսության տարածքով հոսող գետակների երկայնքով հիմնականում 3-4 շարքերով տնկվել է 40-60սմ բարձրության շուրջ 435000 ուտենու կտրոններ, զբաղեցրած ընդհանուր մակերեսը հաշվարկվել է մոտ 10 հեկտար, և, բավարար պահպանության պայմաններում, ակնկալվում է 10 հեկտար անտառածածկի ավելավում:

**Աղյուսակ 47. Անտառածածկ մակերեսի տեսակային կազմի փոփոխությունն ըստ գերակշռող ծառատեսակների**

№	Գերակշռող ծառատեսակը	Փաստացի 01.01.2020թ, հա	Կանխատեսվում է, հա			
			2030թ.	փոփոխությունը 2020թ. նկատմամբ	2035թ.	Փոփոխությունը 2021թ. նկատմամբ
1.	Սոճի	49,3	53,3	+4	62,1	+12,8
2.	Կաղնի	3764,0	3795,0	+31,0	3869,0	+105
3.	Հաճարի	6930,3	6935,3	+5	6945,3	+15
4.	Բոխի	4030,0	4033,0	+3	4036,0	+6
5.	Հացի	145,3	150,3	+5	155,3	+10
6.	Ընկուզենի	183,8	183,8		183,8	
7.	Թխկի	22,9	27,9	+5	32,9	+10
8.	Թեղի	19,3	19,3		19,3	
9.	Շագանակենի	4,8	4,8		4,8	
10.	Սպիտակ ակացիա	48,9	48,9		48,9	
11.	Ղաժի	1855,8	1857,8	+2	1859,8	+4
12.	Լորենի	10,7	10,7		10,7	
13.	Փռչնի	120,2	120,2		120,2	
14.	Տանձենի	1,1	4,1	+3	11,3	+10,2
15.	Խնձորենի	5,0	8,0	+3	15,2	+10,2
16.	Ուղի*	3,9	13,9	+ 10,0	13,9	10,0
17.	Թփեր	212,9	212,9		212,9	
<b>Ընդամենը</b>		17408,2	17479,2	+71,0	17601,4	+193,2

**Բաժին 10. Անտառի պահպանություն**

10.1 **Անտառպահպանության խնդիրներն ու պահաբաժինների առանձնացումը** Պահպանության հիմնական խնդիրն է նվազագույնի հասցնել անտառային և այլ էկոհամակարգերի ու պաշարների չհամակարգված օգտագործումը, նվազեցնել հրդեհների ռիսկերը, ինչպես նաև բնական վերականգնման օժանդակման միջոցառումներով վերականգնել դեգրադացված անտառային տարածքները: Պահպանության գործողություններում ներառվում են՝

- Դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնում, ինչը անհրաժեշտ է վտանգված տեսակների վիճակի բարելավման, ինչպես նաև անտառային հատվածների միասնականության և ամբողջականության ապահովման (ֆրագմենտացիայի նվազեցման) համար՝ ներկայացված է թիվ 9 անտառավերականգնման միջոցառումներ բաժնում:
- Բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների (ԲԲԱԱ) առանձնացում և համապատասխան կառավարում: ԲԲԱԱ-ների կառավարման գործողությունները պետք է ուղղված լինեն հայտնաբերված արժեքների պահպանմանը և վերականգնմանը:
- Ինքնակամ հատումների ծավալների կրճատման նպատակով համալիր ծրագրի մշակում և իրականացում:
- Համայնքների կողմից օգտագործվող արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման սխեմաների մշակում՝ բացառելով անտառավերականգնման ենթակա անտառներում անասունների մուտքը, ընդ որում պետք է գտնվեն այդ անտառներից դուրս, իսկ խոտհարքերում (որոնք շատ դեպքերում անտառային բացատներն են) կատարվող գործողությունները չպետք է բացասաբար անդրադառնան սերմնային ինքնավերականգնման վրա, իսկ համեմատաբար բարձր թեությունների վրա գտնվող արոտավայրերի օգտագործումը չհանգեցնի էրոզիոն պրոցեսների ակտիվացմանը: Բնակավայրերից շատ մոտ գտնվող վերականգնման ենթակա տարածքների ցանկապատում՝ ընտանի կենդանիների մուտքն արգելելու նպատակով:

Անտառների պահպանության ուժեղացման, բնականոն վիճակի պահպանման, վիճակի բարելավման և կայուն կառավարման իրականացման նպատակով ամբողջ տարածքը բաժանվել է 23 պահաբաժինների (աղյուսակ 48, քարտեզ 20):

#### Աղյուսակ 48. Ջիլիզայի անտառտնտեսության պահաբաժինները

ՀՀ	Անտառպետության անվանումը	Պահաբաժնի համարը	Քառակուսու համարը	Պահաբաժնի մակերեսը, հա
1	Ախքյորփի	1	1,2,4,5,6,8	1143
		2	3,7,10,11,15	943
		3	9,12,13,14,16,17	1147
		4	18,19,20,21	840
				4073
2	Խոժոռնի	1	1,2,3,4	724
		2	5,6,16,17	597
		3	18,19,20,21	658
		4	13,14,15	592
		5	10,12,22	513
		6	7,8,9,11	601
				3685
3	Բերդաձորի	1	11,12,13,14	871
		2	5,6,7,10	687
		3	2,3,4	622



ՀՀ	Անտառապետության անվանումը	Պահաբաժնի համարը	Քառակուսու համարը	Պահաբաժնի մակերեսը, հա
		4	1,8,9,15	745
				2925
4	Ճոճկանի	1	4,5,7,20	866
		2	2,3,6	751
		3	10,11,12,13,19	1000
		4	1,8,9,14	976
		5	15,16,17,18	787
				4380
5	Շամլուղի	1	1,2,3,4,6	1043
		2	5,7,9,	505
		3	8,10,13,18,19,20	1370
		4	11,12,14,15,16,17	1473
				4391
<b>Ամբողջը</b>		23		19454

Ամենամեծ պահաբաժնի մակերեսը 1473հա է (Շամլուղի անտառապետություն, 4-րդ պահաբաժին), ամենափոքրինը՝ 505հա (Շամլուղի անտառապետություն, 2-րդ պահաբաժին), պահաբաժինների միջին մակերեսը՝ 846հա: Պահաբաժինների չափը սահմանվել է հաշվի առնելով բնական պայմանները, բնակավայրերից հեռավորությունը և նորմալ հսկողության իրականացման հնարավորությունները: Հսկողության տեսանկյունից առավել վտանգավոր՝ բանուկ ճանապարհներին նախատեսվում է տեղադրել մշտական և շարժական ուղեփակոցներ:

## 10. 2 Ճանապարհային ցանց

Ախթալայի տարածաշրջանը, որտեղ տեղաբաշխված են Ջիլիգայի անտառտնտեսության անտառները, հանրապետության գլխավոր կոմունիկացիոն ուղիներին միացված է Երևան-Ախթալա-Բագրատաշեն ասֆալտապատ ճանապարհով:

Անտառտնտեսական ճանապարհները բնութագրող հիմնական տարրերն են.

- Օգտագործման գոտի - հողաշերտի այն հատվածը, որի վրա կառուցված է ճանապարհը: Հողային շերտի լայնությունը կախված է ճանապարհի կարգից.
  - 1-ին կարգ - 6,5մ և ավելի
  - 2-րդ կարգ - 4,5-6,4 մ
  - 3-րդ կարգ - 4,4մ և պակաս:
- Անցումային գոտի, որտեղով կատարվում է երթևեկությունը,
  - 1-ին կարգ - 5,5մ և ավելի լայնություն
  - 2-րդ կարգ - 3,5-5,4մ լայնություն
  - 3-րդ կարգ - անցումային մասի լայնությունը հաշվի չի առնվում:
- Ջրատար առվակներ (կյովետներ) - ջրհեռացման խողովակներ կառուցվում և տեղադրվում են ճանապարհի երկու կողմից և լայնությամբ մակերեսային և գրունտային ջրերի հեռացման համար, որոնց բացակայությունը ճանապարհների փչացման հիմնական պատճառն է:

- Հողային պաստառ – կողային առունների միջև ընկած հողաշերտն է, որի վրա կառուցվում է ճանապարհի երթևեկելի մասը: Խճով, բետոնով, ասֆալտ-բետոնով կամ որևէ այլ ամուր շինությունով կառուցվածներն ամուր պատվածքով ճանապարհ են: Շատ հաճախ անտառմիջյան ճանապարհները լինում են բնահողային:

Անտառտնտեսությունում անտառային ճանապարհները ծառայում են ինչպես անտառտնտեսական, այնպես էլ հակահրդեհային նպատակների համար և դժվար է դրանք տարանջատել:

Ճանապարհները հիմնականում փափուկ (բնահողային) գրունտով են, սեզոնային օգտագործման, թեև մի մասում պարբերաբար կատարվում է մասնակի վերանորոգում ամբողջ տարի օգտագործման նպատակով, սակայն ջրհեռացման կյուվետների, խողովակների և խճաճածկի բացակայության հետևանքով ճանապարհների վիճակն անմխիթար է:

Ճանապարհային ցանցի ընդհանուր երկարությունը 334,6կմ է, նույն թվում Երևան-Ախթալա-Բագրատաշեն միջպետական նշանակության՝ 27կմ, համայնքային նշանակության 99,8կմ և գրունտային անտառային ճանապարհներ՝ 256,4կմ: Ճանապարհների ձգվածությունը 1000հա-ի հաշվով կազմում 58կմ (աղյուսակ 49, քարտեզ 21): Անտառկառավարման 10 տարիների համար նախատեսվում է անտառտնտեսական և հակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում և կառուցում ընդհանուր 27կմ:

**Աղյուսակ 49. Ճանապարհային ուղիների բնութագիրը**

№	Ճանապարհների տեսակներ	Ճանապարհների երկարությունը, կմ
1	Միջպետական նշանակության	27
2	Համայնքային նշանակության	69,8
3	Անտառտնտեսական և հակահրդեհային նշանակության	256,6
4	<b>Անտառտնտեսությունում</b>	334,6

**10. 3 Պահպանություն անտառային հրդեհներից**

Անտառային հրդեհները լինում են գետնատարած, երբ այրվում է թափուկը, խաշամը, մամռային և խոտային ծածկույթը, շատ հաճախ նաև ենթանտառը, մատղաշը, իսկ սովորաբար ծառերը քիչ են վնասվում:

Շատ վտանգավոր է սաղարթային հրդեհը, երբ խաշամի, թափուկի հետ միասին այրվում է ծառերի սաղարթը, որի դեպքում այն ընթանում է թռիչքաձև:

Ելնելով եղանակային պայմաններից տարբերակվում են.

- Արտակարգ հրդեհավտանգ - երբ դիտվում է երկարատև տաք, չոր եղանակ և օդի միջին ջերմաստիճանը 200-ից բարձր է, իսկ հարաբերական խոնավությունը 40%-ից ցածր:
- Ուժեղ հրդեհավտանգ - այն վայրերը, որտեղ երկար ժամանակ դիտվում է չոր եղանակ, երբեմն թույլ տեղումներով, իսկ հարաբերական խոնավությունը 40-60% է:

- Թույլ հրդեհավտանգ - երբ հաճախակի անձրևներ են տեղում և անտառային թաղիքը խոնավ է:
- Ոչ հրդեհավտանգ, երբ երկարատև անձրևներ են և հարաբերական խոնավությունը 80%-ից բարձր:

Անտառների հրդեհավտանգությունը բնորոշվում է անտառի տիպով, ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններով:

Անտառի գույքագրման ընթացքում յուրաքանչյուր քառակուսու համար որոշվել է հրդեհավտանգության դասը և տվյալները մշակել են համակարգչային ծրագրով, նույնիսկ ըստ հատվածների և քարտեզագրվել):

Անտառտնտեսության տարածքներում հրդեհավտանգության միջին դասը 2,64 է:

Անտառտնտեսությունում 1-ին հրդեհավտանգության տարածքները կազմում են ամբողջ տարածքի 5,6%-ը (1086,4հա), 4-րդ դասը 9,2% (1796,1հա), իսկ 2-րդ և 3-րդ հրդեհավտանգության դասերը համապատասխանաբար 33,7% (6562,2հա) և 51,5% (1009,3հա) (աղյուսակ 50, քարտեզ 22):

#### Աղյուսակ 50. Տեղեկագիր անտառային հողերի տեղաբաշխման ըստ հրդեհավտանգության դասերի

Անտառատեսակներ	Հրդեհավտանգության դասը, հա				Ընդամենը	Միջին դասը
	1	2	3	4		
Ախքյորփիի	24,5	608,7	3360,6	79,2	4073,0	2,86
Խոժոռնիի	5,6	864,2	2787,5	27,7	3685,0	2,77
Բերդաձորի	31,5	925,6	1863,0	104,9	2925,0	2,70
Ճոճկանի	649,4	1938,9	923,8	867,9	4380,0	2,46
Շամլուղի	375,4	2224,8	1074,4	716,4	4391,0	2,48
<b>Ընդամենը</b>	1086,4	6562,2	1009,3	1796,1	19454,0	2,64
% %	5,6	33,7	51,5	9,2	100,0	

Անտառտնտեսության կառավարման պլանի տասնամյա գործողությունների պլանում նախատեսվել են նախազգուշացնող ցուցատախտակների տեղադրում, հանգստի և ծխելու տեղերի առանձնացում, ջրավազանների կառուցում, կրակմարիչների ձեռք բերում, հակահրդեհային ճանապարհների վերանորոգում, հանդիպումներ հարակից համայնքներում՝ հակահրդեհային իրազեկության բարձրացման և հակահրդեհային միջոցառումների իրականացման թեմաներով և այլն: Անհրաժեշտ է զարգացնել անտառային հրդեհներին արագ արձագանքման կարողությունները (աղյուսակ 51):

#### Աղյուսակ 51. Տեղեկագիր հակահրդեհային միջոցառումների

№	Միջոցառումներ	Չափի միավորը	Նախատեսվում է
1.	Նախազգուշակալան միջոցառումներ		

№	Միջոցառումներ	Չափի միավորը	Նախատեսվում է
1.1.	Խորհրդակցություններ խոշորացված համայնքներում բնակավայրերում	հանդիպում	6
1.2.	Մշտական ցուցատախտակներ	հատ	10
1.3.	Հանգստի և ծխելու տեղերի առանձնացում	հատ	10
2.	Հակահրդեհային կառուցումներ		
2.1	Հանքայնացված շերտերի կառուցում	կմ	2
2.2	Ջրավազանների կառուցում	հատ	3
2.3	Հակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում	կմ	10
3.	Հակահրդեհային սարքավորումների ձեռքբերում		
3.1	Կրակմարիչներ	հատ	15
3.2	Օժանդակ սարքավորումներ	կոմպլեկտ	5
4.	Կրակմարող կամավոր խմբերի կազմավորում	խումբ	3

## Բաժին 11. Անտառտնտեսության կառավարում

Անտառտնտեսության կառավարման նպատակն է ապահովել համապատասխան մարդկային ռեսուրսներ և ստեղծել տեխնիկական հզորություններ կառավարման համար, ինչպես նաև հայթայթել ֆինանսավորման նոր աղբյուրներ՝ անտառտնտեսության կանոնադրական նպատակների իրականացման համար լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

«Ջրիլիզայի անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրենի ենթակայությամբ առաջարկվում է ստեղծել մոնիթորինգի և գիտության միավոր (2 աշխատակից) և էկոլոգոսաշրջության միավոր (1 աշխատակից): Նրանք պետք է անցնեն հատուկ մասնագիտական վերապատրաստում և իրականացնեն արգելավայրի և ընդհանուր անտառտնտեսության համապատասխան գործառույթները:

Տնօրենի ենթակայությամբ հասարակայնության հետ կապերի պատասխանատուն պետք է համակարգի արգելավայրի և անտառտնտեսության իրազեկության և էկոլոգիայի աշխատանքները:

Տնօրենի ենթակայությամբ միջոցների համալրման պատասխանատուն պետք է իրականացնի ֆինանսավորման նոր աղբյուրների հայթայթման գործառույթը:

Անտառտնտեսության տնօրենը և հիմնական գործառույթներն իրականացնող պատասխանատուները պետք է սերտորեն համագործակցեն Անտառային կոմիտեի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժինների հետ և ստանան անհրաժեշտ աջակցությունը:

Անտառտնտեսության գործառույթների կազմակերպման և պատշաճ իրականացման համար անհրաժեշտ են համապատասխան մարդկային և տեխնիկական հզորություններ: Մասնավորապես անհրաժեշտ է անձնակազմի կարճաժամկետ և երկարաժամկետ վերապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում՝ անտառների և կենսաբազմազանության պահպանության և

մոնիթորինգի, անտառի պաշտպանության, էկոլոգոսաշրջության զարգացման, ֆինանսական միջոցների համալրման և այլ ուղղություններով:

**11.1. Անտառի և կենսաբազմազանության պահպանություն**

Անտառների և կենսաբազմազանության պահպանությունն ուղղված է լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովմանը, լեռնային անտառային էկոհամակարգերի և դրանց բնորոշ հազվագյուտ և արժեքավոր բույսերի ու կենդանիների պահպանությանն ու վերարտադրությանը:

**11. 2 Մոնիթորինգ և գիտական ուսումնասիրություններ**

Անտառտնտեսության տարածքում մոնիթորինգը և գիտական ուսումնասիրությունները կիրականացվեն «Զիլիզայի անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրենի ենթակայությամբ ստեղծված մոնիթորինգի և գիտության միավորը Անտառային կոմիտեի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի գլխամասի համապատասխան պատասխանատուների հետ համատեղ և պետք է սերտորեն համագործակցի գիտական և ուսումնական հաստատությունների (ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, համալսարաններ) և ՀԿ-ների հետ: Անհրաժեշտ է գտնել և ներգրավել այն հաստատությունները և հետազոտողներին, որոնք հետաքրքրված են հատկապես արգելավայրի տարածքում որոշակի տեսակների/էկոհամակարգերի վերաբերյալ թիրախային ուսումնասիրություններ իրականացնելու հարցում: Մոնիթորինգի դաշտային աշխատանքների իրականացմանն անհրաժեշտ է ներգրավել կամավորների՝ ՀԿ-ներ, դպրոցներ, համալսարանների ուսանողներ և այլն:

Անտառտնտեսության անձնակազմը պետք է աջակցի գիտնականներին, հետազոտողներին, կամավորներին՝ մոնիթորինգի և գիտական ուսումնասիրությունների դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում:

**Աղյուսակ 52. Պահպանության և մոնիթորինգի իրականացման համար անհրաժեշտ միջոցներ**

№	Սարքավորում, գույք	Քանակը
1	Ամենազնաց մեքենա	1
2	Ձիեր և հավելյալ միջոցներ (3-ական յուրաքանչյուր անտառպետության համար)	15
3	Մշտական ուղեփակոցներ	3
4	Շարժական ուղեփակոցներ	5
5	GPS սարքեր	5
7	Ֆոտո/վիդեո նկարահանման սարք	1
8	Հեռադիտակ	10
9	Գիշերային հսկման հեռադիտակ	5
10	Տեսահսկման համակարգեր՝ տեսախցիկներ	3
11	Ամառային համազգեստ	30
12	Զմեռային համազգեստ	30

№	Սարքավորում, գույք	Քանակը
13	Անտառապահների սարքավորումների հավաքածու (բահ, դանակ, լապտեր, ուսապարկ, առաջին օգնության պարագաներ և այլն)	23
14	Գրասենյակային սարքավորումներ (համակարգիչ, տպիչ, սկաններ և այլն)	1

## 11. 2. 1 Մոնիթորինգի ծրագիր

Կենսաբազմազանության մոնիթորինգի համակարգի ներդրման հիմնական նպակակն է կանխատեսել բնական և մարդածին ազդեցությունների հետևանքով առաջ եկած գործընթացների զարգացումը և կատարել կանխատեսումներ դրանց հետագա ընթացքի վերաբերյալ: Ստացված մոնիթորինգային տվյալները պետք է օգտագործվեն անտառտնտեսության տարածքում իրականացվող կառավարման գործողություններում համապատասխան փոփոխություններ և շտկումներ կատարելու համար՝ ուղղված էկոհամակարգերի, բնական միջավայրերի և տեսակների պահպանությանը և բնականոն զարգացմանը:

Կենսաբազմազանության մոնիթորինգի խնդիրներն են

- Բացահայտել կենսաբանական բազմազանության տեսակային կազմի, տարածվածության, քանակական ցուցանիշների, բնակության վայրերի, կենդանիների միգրացիոն ուղիների առկա վիճակը և միտումները:
- Բացահայտել յուրաքանչյուր էկոհամակարգի և դրա բաղադրիչների վրա մարդածին գործոնների ազդեցությունը:
- Գնահատել և կանխատեսել էկոհամակարգերի բաղադրիչների՝ կենսաբազմազանության և բնական ռեսուրսների քանակական և որակական փոփոխությունների ընթացքը:

Անհրաժեշտ է մշակել մոնիթորինգի ծրագիր: Այն կներառի ինդիկատորային տեսակների ընտրություն՝ էկոհամակարգերի վիճակի միտումները բացահայտելու համար, մոնիթորինգային արձանագրությունների մշակում, դիտակետերի և փորձահրապարակների որոշում և այլն: Անհրաժեշտ է ներդնել և վարել մոնիթորինգի տվյալների բազա և համակարգչային ծրագիր:

Ջրոսաշրջության մոնիթորինգը պետք է ներառի արգելավայրի տարածքների զբոսաշրջիկների այցելության արդյունքում բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում և ճիշտ կառավարում, ինչպես նաև մատուցվող ծառայության որակի գնահատում: Մասնավորապես, մոնիթորինգը պետք է անդրադառնա զբոսաշրջության ծրագրի շրջանակներում իրականացվող գործողություններին, որոնք հնարավոր վնաս կարող են հասցնել էկոհամակարգերի ամբողջականությանը: Անհրաժեշտ է ստեղծել զբոսաշրջության տեղեկատվական բազա GIS համակարգով:

Անհրաժեշտ է ստեղծել մոնիթորինգ իրականացնող անձնակազմի և տեխնիկական հզորություններ: Անհրաժեշտ է կազմակերպել գործնական դասընթացներ անտառտնտեսության համապատասխան մասնագետների և անտառապահների համար:

## 11. 2. 2 Գիտական ուսումնասիրություններ

Գիտական ուսումնասիրությունները նպատակաուղղված են հիմնական գործառույթների՝ կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության ու պատմամշակութային և բնության ժառանգության պահպանության արդյունավետ իրականացմանը:

Գիտահետազոտական աշխատանքների արդյունքում ստացված տեղեկատվությունը կիրառվում է բնապահպանական միջոցառումների պլանավորման, այդ թվում էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանության ու վերականգնման, և դրանց արդյունավետության գնահատման համար, պահպանվող համակարգերի և օբյեկտների վիճակի գնահատման և կանխատեսման, մոնիթորինգի իրականացման, էկոլոգիական հարցերի լուսաբանման, տուրիզմի և ռեկրեացիայի, ինչպես նաև իրականացվող տնտեսական գործունեության ազդեցության գնահատման համար:

Գիտական ուսումնասիրությունները իրականացվելու են կազմակերպության համապատասխան մասնագետների միջոցով: Նրանք պետք է համագործակցեն գիտնականների և հետազոտողների հետ՝ աջակցելով նրանց ու տրամադրելով տեխնիկական օգնություն դաշտային աշխատանքներում: Գիտական և հետազոտական աշխատանքները պետք է իրականացվեն անտառների կառավարման համար կարևոր ոլորտների բացահայտմամբ և առաջնայնությունների սահմանմամբ՝ համագործակցելով համապատասխան մասնագետների հետ:

Ելնելով վերոհիշյալից, 2021-2030թթ-ի գիտական ուսումնասիրությունների ծրագրում առաջարկվում է ներառել

- Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների դաշտային ուսումնասիրություններ (գույքագրման իրականացում, թվաքանակի հաշվառման և պոպուլյացիաների գնահատման աշխատանքներ)՝ հատուկ ուշադրություն դարձնելով առավել վտանգված տեսակների հայտնաբերմանը,
- կենսաբազմազանության տվյալների բազայի ստեղծում/վարում և պահպանման ու հարստացման նպատակով արժեքավոր և հազվագյուտ տեսակների հավաքածուների կազմում,
- հազվագյուտ և վտանգված տեսակներից կազմված էկոհամակարգերի (ծառուտների) և դրանց ինքնավերականգնման ու ինքնակարգավորման հնարավորությունների բարձրացման ուսումնասիրություններ և դրանց վիճակի բարելավման լրացուցիչ միջոցառումների նախատեսում,
- կլիմայի փոփոխության նկատմամբ անտառների խոցելիության և հարմարողականության բարձրացման ուսումնասիրություններ և կոնկրետ միջոցառումների նախատեսում,

- ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների ուսումնասիրություններ և բնական էկոհամակարգերի վրա դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունների նախատեսում,
- անտառային էկոհամակարգերի կողմից տրամադրվող էկոհամակարգային ծառայությունների ուսումնասիրություններ, ներառյալ օգտակար բուսատեսակների պաշարների, ածխածնի կուտակման և այլ ուսումնասիրությունները:

## **Բաժին 12. Տնտեսական և ֆինանսական գործունեություն**

«Զիլիգայի անտառտնտեսություն» մասնաճյուղում 2009-2019 թվականներին պաշտոնական հաշվետվությամբ բնափայտային արտադրանքի ընդհանուր ծավալը կազմել է 22173.84խտմ<sup>3</sup>, գումարային արտահայտությամբ՝ 55269.6 հազ. դրամ, նույն թվում հատումներից՝ վառելափայտը 18680,45խտմ<sup>3</sup>, 40293,4 հազար դրամ, շինափայտը 1772,74մ<sup>3</sup>, 13820,6 հազար դրամ, թափուկ բնափայտը ընդհանուր 1720,65խտմ<sup>3</sup>, 1155,6 հազար դրամ:

Կառավարման պլանի պատրաստմանը նախորդող երկու տարիներին անտառտնտեսական աշխատանքները դրամական արտահայտությամբ կազմել են համապատասխանաբար 2018թ. 16082,5 հազ. դրամ և 2019թ. 17059,6 հազ. դրամ:

Ընդհանուր արտադրական ծախսերը 19134 հազ. դրամ:

Անտառային եկամուտ, ընդամենը՝ 44236 հազ. դրամ, որից բնափայտի արտադրությունից 44236 հազ. դրամ, պետբյուջեից ֆինանսավորում 2018թ.՝ 40475,9 հազ. դրամ, 2019թ.-ին՝ 45150,4 հազ. դրամ:

2018թ. կառուցվել է ընդհանուր 6կմ երկարության անտառտնտեսական նշանակության ճանապարհ, 2160 հազ. դրամ, նորոգվել է 9կմ երկարության անտառտնտեսական ճանապարհ՝ 900 հազ. դրամ, 2019թ. կառուցվել է ընդհանուր 4 կմ երկարության անտառտնտեսական նշանակության ճանապարհ, 1170 հազ. դրամ, նորոգվել է 1 կմ երկարության անտառտնտեսական ճանապարհ, 65 հազ. դրամ: 2019թ. իրականացվել են 400 հա բնական վերածի օժանդակման աշխատանքներ, ընդհանուր 17520 հազ. դրամ:

Նախորդ կառավարման շրջանում՝ 2009–2019 թվականներին պատրաստվել և իրացվել է 22173,8խտ. մ<sup>3</sup> ընդհանուր պաշարով անռառանյութ, ընդհանուր 55270 հազար. դրամ արժեքի, նույն թվում՝ վառելափայտը՝ 20401,1խտ. մ<sup>3</sup>, 41449 հազար դրամ, որից պլանային հատումից՝ 18680,45խտ. մ<sup>3</sup>, 40203,4 հազար դրամ, 1720,65խտ. մ<sup>3</sup>, 1155,6 հազար դրամ, ընդհանուր շինափայտը 1772,4մ<sup>3</sup>, 13820,6 հազար դրամ (աղյուսակ 54):

### **Աղյուսակ 53. Զիլիգայի անտառտնտեսության հաստիքային ցուցակ՝ առ 01.07.2020թ**

№	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորի	Պաշտոնային դրույքի չափը	Աշխատավարձի ֆոնդը ամսական,
---	-------------------	--------------------	-------------------------	----------------------------



		քանակը		դրամ
1	Տնօրեն	1	280000	280000
2	Անվագ անտառապետ	1	210000	210000
3	Տնօրենի տեղակալ պահպանության գծով	1	190000	190000
4	Հաշվապահ	1	160000	160000
5	Հաշվետար-գործավար	1	92617	92617
6	Անտառպահպանության ինժեներ	1	110000	110000
7	Անտառային կուլտուրաների ինժեներ	1	100000	100000
8	Անտառային տեխնիկ	2	92617	185234
9	Ախքյորփիի անտառապետ	1	150000	150000
10	Անտառապահ	6	120000	720000
11	Խոժոռնիի անտառապետ	1	150000	150000
12	Անտառապահ	6	120000	720000
13	Ճոճկանի անտառապետ	1	140000	140000
14	Անտառապահ	5	120000	600000
15	Բրդաձորի անտառապետ	1	140000	140000
16	Անտառապահ	4	120000	480000
17	Շամլուղի անտառապետ	1	160000	160000
18	Անտառապահ	4	120000	480000
19	Հավաքարար	1	92617	92617
20	Պահակ	1	92617	92617
21	Վարորդ	1	92617	92617
<b>Ընդամենը</b>		42		5,345,702

**Աղյուսակ 54. Ամփոփագիր Ջիլիգայի անտառտնտեսության բնափայտային արտադրանքների ծավալների (2009-2019թթ)**

№	Արտադրանքի տեսականին	Տարեթիվը													
		2009		2010		2011		2012		2013		2014		2015	
		ծավալը մ <sup>3</sup>	արժեքը հազ.դր	ծավալը մ <sup>3</sup>	արժեքը հազ.դր	ծավալը մ <sup>3</sup>	արժեքը հազ.դր	ծավալը մ <sup>3</sup>	արժեքը հազ.դր	ծավալը մ <sup>3</sup>	արժեքը հազ.դր	ծավալը մ <sup>3</sup>	արժեքը հազ.դր	ծավալը մ <sup>3</sup>	արժեքը հազ.դր
1	Վառելափայտ	0	0	2302	2241	1670.6	2279	2197	1453.7	2404.7	1802.3	1609.5	1457.8	1212	758.5
1.1	Կանգունից			2200	2170	1537.2	2185.6	1348.95	882.2	1810.2	1405.7	1566.7	1434.7	1212	758.5
1.2	Թափուկից			102	71	133.4	93.4	848.05	571.5	594.45	396.6	42.75	23.1		
2	Շինափայտ	0	0	271	3452	257.3	1668.6	178	611	187.1	869.9	102.5	1073.7	132	304.9
2.1	Հատումներից			271	3452	257.3	1668.6	178	611	187.1	869.9	102.5	1073.7	132	304.9
2.2	Թափուկից														
3	Ընդամենը	0	0	2573	5693	1927.9	3947.6	2375	2064.7	2591.8	2672.2	1712	2531.5	1344	1063.4

№	Արտադրանքի տեսականին	Տարեթիվը								Ընդամենը	
		2016		2017		2018		2019			
		ծավալը մ <sup>3</sup>	արժեքը հազ.դր	ծավալը մ <sup>3</sup>	արժեքը հազ.դր	ծավալը մ <sup>3</sup>	արժեքը հազ.դր	ծավալը մ <sup>3</sup>	արժեքը հազ.դր	ծավալը մ <sup>3</sup>	արժեքը հազ.դր
1	Վառելափայտ, նույն թվում.	3006.5	1966.9	2164.9	1268.8	1783	12813	2051	15408	20401.1	41449
1.1	Կանգունից	3006.5	1966.9	2164.9	1268.8	1783	12813	2051	15408	18680.45	40293.4
1.2	Թափուկից									1720.65	1155.6
2	Շինափայտ	198.5	416.2	79.34	183.3	196	2750	171	2491	1772.74	13821
2.1	Հատումներից	198.5	416.2	79.34	183.3	196	2750	171	2491	1772.74	13820.6
2.2	Թափուկից										
3	Ընդամենը	3205	2383.1	2244.2	1452.1	1979	15563	2222	17899	22173.8	55270

## **Բաժին 13. Անտառտնտեսության նախորդ կառավարման ընդհանուր եզրակացություններ և առաջարկություններ**

### **13.1. Եզրակացություն նախորդ անտառտնտեսվարման վերաբերյալ**

Անտառտնտեսության ընդհանուր մակերեսը 2008 թվականի համեմատությամբ 2020թ. ավելացել է 1161 հեկտարով, հիմնականում Լավարի անտառտնտեսության Շամլուղի անտառապետության (4391հա) միացման և ի հաշիվ շրջակա բնակավայրերի կադաստրային և անտառտնտեսության ընթացիկ գույքագրմամբ անտառային հողատեսքերի ու սահմանների ճշտման:

Նշված ժամանակաշրջանում անտառածածկ մակերեսը ավելացել է 3557,1, նույն թվում միացված Շամլուղի անտառապետությունը 3722,2հա հեկտար: Ընդհանուր պաշարը ավելացել է 119500մ<sup>3</sup>-ով, նույն թվում Շամլուղի անտառապետությունը 496770խտմ<sup>3</sup>: Եթե հաշվի առնենք Շամլուղի անտառապետության 2020թ. միացման հանգամանքը, պարզվում է, որ բուն Ջլիզայի անտառտնտեսության 2009-2019թթ. գործունեության ժամանակաշրջանում անտառածածկ մակերեսը նվազել է 165,1 հեկտարով, իսկ ընդհանուր պաշարը՝ 377270խտ. մ<sup>3</sup>-ով:

Անտառային մշակույթների մակերեսը ավելացել է 132,6 հեկտարով, որից 94,6 հեկտարը միացված Շամլուղի անտառապետությունն է, կամ նախորդ 10 տարիներն հիմնվել կամ անտառածածկ է փոխադրվել ընդամենը 38հա անտառմշակույթներ:

Գերակշռող հիմնական ծառատեսակներից կաղնու գերակշռությամբ ծառուտների մակերեսը ավելացել է 2005,3հա, ընդհանուր պաշարը՝ 264880խտ մ<sup>3</sup>, բոխուտները՝ 463,4հա, պաշարը՝ 23980խտ մ<sup>3</sup>, դաժուտները՝ 267,9հա, պաշարը՝ 12270խտ մ<sup>3</sup>, իսկ հաճարկուտները մակերեսը ավելացել է 556,7հեկտարով, սակայն ընդհանուր պաշարը նվազել է 45830խտ մ<sup>3</sup>-ով:

Անտառտնտեսության 2008թ. կառավարման պլանի անտառի գույքագրման և գնահատման տվյալներով անտառի միջին տարիքը եղել է 84, իսկ 2020թ.՝ 86: Փաստորեն կայուն կառավարման պայմաններում 10–12 տարի ավելանալու փոխարեն ավելացել է ընդամենը 2 տարով, իսկ 1 հեկտարի միջին պաշարը՝ 2008թ. 138մ<sup>3</sup>, 2020թ. 126մ<sup>3</sup>, նվազել է 22խտ մ<sup>3</sup>-ով:

Անհավասարաչափ բաշխվածություն է ըստ տարիքային խմբերի՝ երիտասարդ տարիքային խմբի ծառուտները կազմում են ընդհանուր անտառածածկի 3,1%-ը, իսկ հասուն և գերհասուն ծառուտները՝ 3,1%-ը, ինչը վկայում է նախկին տասնամյակներում իրականացված ոչ կայուն կառավարման մասին: Հասուն տարիքի անտառների մոտ 75%-ում առկա է սերմնային մատղաշ, իսկ սերմնային մատղաշով (բոլոր տեսակի) ապահովված է ընդամենը 262հա, այն էլ հիմնականում բոխի տեսակով:

Վերը նշված ժամանակաշրջանում ծառուտի միջին կազմը որոշակի փոփոխությունների է ենթարկվել՝ 2008թ. 3,8հաճարի, 3,1բոխի, 1,3կաղնի, 1,1ղաժի, 0,4հացի, 0,2թխկի, 0,1ընկուզենի:


2020թ. այդ ցուցանիշն է՝ 3,2հաճարի, 3,2բոխի, 1,7կաղնի, 1,2ղաժի, 0,3հացի, 0,2թխկի, 0,1ընկուզենի, 0,1փռչի:

### 13.2. Առաջարկություններ


1. Քայքայված անտառների վերականգնման նպատակով նախատեսված տարածքներում անտառվերականգնման համալիր միջոցառումների իրականացում:
2. Անտառային տարածքների գույքագրման և գնահատման արդյունքներով համայնքների կադաստրային քարտեզագրման հետ բացահայտված անհամապատասխանությունները և ճշտված քարտեզները սահմանված կարգով ներկայացնել՝ համապատասխան գերատեսչություններում ամրագրելու նպատակով:
3. Առանձնակի ուշադրություն դարձնել հակահրդեհային միջոցառումների իրականացմանը, հատկապես նախազգուշական, հրդեհաշիջման համապատասխան գործիք-սարքավորումների ձեռք բերմանը և ջրի ամբարտակների կառուցմանը:
4. Կայուն անտառկառավարման դեպքում տարիքային 4 խմբերը մոտավոր հավասար բաշխվածությունն են ունենում, ինչն էլ երաշխավորում է նորմալ սերնդափոխությունը: Անհրաժեշտ է հասուն և գերհասուն անտառներում իրականացնել համապատասխան անտառտնտեսական միջոցառումներ՝ երիտասարդ ծառուտների առաջացման նպատակով:
5. Անտառնշակույթների հիմնում իրականացնել.
  - I-IV բոնիտետների 1 հա մակերեսից ավելի բացատներում, 1հա-ից պակասը վերագրել լանդշաֆտային փոքր բացատներին և թողնել ինքնավերականգնման,
  - հատված տարածքներում և անթրոպոգեն նոսրուտներում, 1հա-ից պակասը թողնել ինքնավերականգնման,
  - հանքայնացման եղանակով բնական վերաճին օժանդակող միջոցառումներ (հարթակների պատրաստում և սերմերի ցանք) իրականացնել նաև անթրոպոգեն ծագման բավարար չվերականգված ոչ մեծ թեքությունների հատվածներում, ինչպես նաև ցածր լրիվության ծառուտներում:
  - Անտառվերականգնման միջոցառումներ նախատեսվող հատկապես համայնքամերձ տարածքները հնարավորինս մեկուսացնել՝ անասունների արածացումը բացառելու նպատակով: Յանկապատումը կատարել մետաղյա փշալարով, ինչպես նաև, օգտվելով տեղանքի աշխարհագրական դիրքի ընձեռնած հնարավորությունից, տեխնիկական հատկությունները կորցրած բնափայտով և ջախով:
6. Անտառտնտեսության տարածքում համաձայն «Հայաստանի բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների ընտրության և առանձնացման գործնական ուղեցույցի 2016թ» սահմանազատված անտառներում իրականացնել համապատասխան միջոցառումներ:




## Քարտեզ 2. Անտառտնտեսության անտառապետությունները



### Քարտեզ 3. Անտառտնտեսության ռելիեֆը




Քարտեզ 4. Անտառտնտեսության տարածքն ըստ լանջերի դիրքադրության







Քարտեզ 5. Անտառտնտեսության գետային ցանցը




Քարտեզ 6. Անտառնտեսության քառակուսային ցանցը




**Քարտեզ 7. Անտառտնտեսության տարածքն ըստ նպատակային նշանակության կատեգորիաների**




**Քարտեզ 8. Անտառտնտեսության տարածքն ըստ գլխավոր ծառատեսակների**




## Քարտեզ 9. Անտառտնտեսության տարածքն ըստ տարիքային խմբերի




**Քարտեզ 10. Անտառտնտեսության տարածքը ըստ լանջերի թեքության**



## Քարտեզ 11. Անտառտնտեսության տարածքն ըստ բնիտետային դասերի




**Քարտեզ 12. Անտառտնտեսության տարածքն ըստ ծառուտի լրիվության**







### Քարտեզ 13. Անտառտնտեսության տարածքն ըստ հասակային դասերի




**Քարտեզ 14. Անտառտնտեսության հարակից համայնքները**




**Քարտեզ 15. Անտառտնտեսության տարածքում հանդիպող կարմիրգրքային բույսերը**




**Քարտեզ 16. Անտառտնտեսության տարածքում հանդիպող կարմիրգրքային կենդանիների**




## Քարտեզ 17. Անտառնտեսության ԲԲԱ անտառները




**Քարտեզ 18. Անտառտնտեսության տարածքում հանդիպող պտուղ-հատապտուղները**



**Քարտեզ 19. Անտառտնտեսության տարածքում հանդիպող ուտելի խոտաբույսերը**



Քարտեզ 20. Անտառտնտեսության պահաբաժինները







**Քարտեզ 22. Անտառտնտեսության տարածքն ըստ ըստ հրդեհավտանգության դասերի**

